



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Hin  
V903



ԿՐԹՈ

# ԱՐՏԱՒՐՁԴ ԵՒ ՄԱՐԿԱՐԵԴ

ԿԵՐ

ԹԻՇԵՑ ՎԵՊ ՄԲ ՀԱՅ ԹՓԹԸ

1881



Ա. Բ Ե Կ Ե Ա

1883.

## ՅԱՌԱՋԱՐԱՆ

Անցեալ ձմեռ, մի երեկոյ, Վիեննայում՝ մի սրճարանի մեջ հաւաքուել էինք տասնի չափ հայտ աղբի երիտասարդներ, ի միջի որոց ես էի ամենից տարիքուը, այսինքն 37 գարուն տեսած եւ երիտասարդութեան տիտղոսին հրաժեշտ տուած մի մարդ:

Խօսակցութիւնը այլ եւ այլ նիւթերի վրա շրջան անելուց յետոյ կանգ առաւ ամուսնութեան վրայ, եւ սորա վիճաբանական քննադատութիւնը երկար տեւեց, որովհետեւ ամենքս էլ ամուրի ելքը:

— Ի՞նչու համար չէինք ամուսնացել? Այս հարցը մեջ բերին, եւ իւրաքանչիւր ոք միմեանցից տարբեր փաստերու պատճանարաննեց իր անամուսնութիւնը:

Մինը ասաց որ տակաւին շատ երիտասարդ եմ, ժամանակ ունիմ: Միւսը ասաց թէ միշտեւ որ զրամագլուխս այսքան հազարի չասցընեմ, չեմ ամսւանար:

Մի ռուբիշը, 1 ֆիորին վճարել եմ եւ 200000 ֆիօրինի վիճակախաղի մի տոմսակ եմ առել եթէ ես տարայ, իսկոյն կ'ամսւանանամ: Մի այլ երիտասարդ էլ ասաց որ, մեծկակ օժիտով մի հարուստի

29.905

4.903 - 60

աղջիկ գտնեմ, վազը կը պատկռուիմ: Իսկ մինն էլ խօսքը բերնից յափշտակելով, — այնպիսի մի բան գտնեմ, վաղուան չեմ թողնուր, այս բոլեիս կամաւնանամ: ասաց:

Մի ուրիշն էլ հարցըսին թէ, դու ի՞նչու ամուրի ես մնացել, նա էլ պատասխանեց թէ ես օրէ կը վաստըկիմ օրէ կուտեմ, կնիկս ի՞նչ պէտք է ուտէ:

Աերջը սկսան ամէնքը միաբերան խօսիլ: Աիծաբանութիւնը տաքայա: Ամուսնութեան փիլիեսուփայութիւնն էլ չըմուացուեցաւ քննատատուելու: Բայց եւ այնպէս ոչ որի կարծիքը միւսին համաձայն չէր: Ամէնքը զանազան գաղափարներ էին յայտնում: Չայնէրը բարձրացան եւ մի ծիծաղաշրժ կերպարանք առաւ սրճարանական ժողովը: Յանկարծ — Եղբարք! ասաց մեղմնից մինը՝ որ Աիէննայում բնակութիւն հաստատող հայերի ամենից հեագոյնն էր, լոեցէր եւ լսեցէր ինձ, ձեզ մի հետաքրքիր պատմութիւն անելուեմ, որ իսկ եւ իսկ եղելութիւն է եւ տեղի ունեցած է և տարի առաջ վիէննայում մի հայ բժիշկ ուսանողի հետ, պատմութեան նիւթը՝ նախ բռւռն սիրահարութիւն եւ յետոյ երջանիկ ամուսնութիւն է, հետեւաբար մեր վիճաբանած առարկային կը պատկանի:

Ամէնքը էլ ականջնիս լարեցինք, այսինքն բոլորովին ականջ գարձանք, եւ առանց ընդհատելու

մինչ վերջը մեծ հաճութեամբ լսեցինք պատմաւթիւնը, որ արդարեւ շատ հետաքրքիր եւ միանգուածութեամբ բարերգական լինելով, ստէպ ստէպ պատահող գէպքերի կարգում չէր կարելի դասել:

Պատմութիւնը լսու տապառութիւն գործեց ալենքիս վրայ: Ընդհանուր մի հիացում տիրեց մեր միջ: Այն ժամանակ անունովը յայտնի մի երիտասարդ որ վիճաբանութեան միջոցին, երբ իրան հարցուել էր թէ ի՞նչու մի կին չէ առել, եւ ԱԵղբայր, ժամանակ չունիմ: ի՞նչ անեմ, պատասխանել էր, նյոյն երիտասարդը պատմութիւնը լսելուց յետոյ, ԱԵղբայր, ասաց, ես ձեզ մի բան ասում, այժմեան պատմութիւնը ինձ այնքան սրանչելի թուեցաւ, որ սցուուհետեւ հարկազրուած եմ ամուսնանալու: Համար նմանօրինակ սիրահարական մի գէպքի սպասելու, որովհետեւ դա ամուսնութեան գեղարուեստական ձիւղն է: Իսկ ես վերջին խօսքս ճաշակագէտ պարոնին ուղղելով ասացի, ԱԵղբայր, մեր ամէնքին յցսերը կարելի է, մի օր իրագործուին եւ ամուսնանանք, բայց դու, այդ տեսակ գէպքի սպասելովից ցկեանս ամուրի մնալու դատապարտուած ես,,:

Ժողովը ցրուեցաւ: Ամէնքը գնացին, ես մնացի սրճարանում: Այն երեկոյից մոքումն զրի գրել այս վէպը եւ հրատարակել: Մի քանի հայ պար-

բերական թերթերում մինչ ցարդ, նամակներ եւ  
ուրիշ այլ եւ այլ յօդուածներից զատ կեանքումը  
որ եւ է մի վիպասանութիւն գրած չըլինելով, նախ  
վհատեցաց. բայց վերջը յարդելի ընթերցողաց  
աղնիւ ներողամութեանը վստահանալով քաջա-  
լերուեցաց, եւ այսօր առաջին անգամ թատրոնի  
բեմի վրայ ներկայացնող երկչոտ մի գերասանի  
նման հրապարակ եմ ելած, գողգողալով թէ մի  
գուցէ սուլելու ձայներով խայտառակուիմ, որով-  
հետեւ ո՞գիտէ, որքան անթիւ անհամար թերու-  
թիւններ կան գրած վէպին կապակցաւթեանց եւ  
գասառութեանցը մէջ: Բայց ի՞նչ անեմ, առ  
այժմ ասկից աւելին չեմ կարող:

Խակ գալով հոյերէն լեզուի ոճերին, գարձու-  
ածքներին, սրանց համար էլ զատ ներումն իրն-  
գրելու եմ յարդելի ընթերցողներից, որովհետեւ  
բոլորովին ուսուահայ կամ բոլորովին տաճկահայ  
բարբառով չըգրելու համար երկու աշխարհիկ  
բարբառների այլատեսակ բուրաստաններից ծաղ-  
կաբաղ անելով՝ եթէ կարելի է ասել, բարեխառն  
մի լեզու եմ գործածել որ, յոյս ունիմ, թէ ուսուա-  
հային եւ թէ աաճկահային գիւրամատչելի կըլինի:

## ԱՐՅՈ

Ակնա 1. Յունիս 1883:

Փոփոխակի Խըրիմու Խալիբեանի եւ Ահմֆերօ-  
պօլի վարժարաններում նախակրթական ուսումը  
աւարտած 17 տարեկան Վարլցիսցի Արտաւագդ  
անունով մի հայ պատանի, 1873 թուականին  
գնում է գերաններայի Վիւրցբուրկ քաղաքում  
բժշկականութիւն սովորելու:

Հետեւելով պանդուխու եւ օտար ուսանողների  
օրինակին, ինքն էլ Վիւրցբուրկում վարձում է մի  
տան սենեակ, որուն տիրուհին, այրի տիկին Հովհ-  
ման, պատուաւոր քաղաքացի ընտանեաց գասակար-  
գին էր պատկանում, տունը իր սեպհական կալու-  
ածն էր, եւ ուներ երեք աղջիկ Աննա, Տերէդ, եւ  
Մարկարէդ անուններով:

Եղջիկներից կրտսերազցնն էր Մարկարէդը,  
14—15 տարեկան խելացի, համեստ, բարձով եւ  
վարել պարկեշտ, համակրելի մի արարած էր:  
Հասակը փոքր ինչ կարճ, բայց նիքը շատ սիրուն,  
գէմքը գրաւիչ եւ անուշիկ, այտերը կարմիր, որոնց  
վրայ ժպտած ժամանակը երկու փոքրիկ փոսեր կը-  
գոյանացին. կալմուածքը քնքոյց, աչքերը սեւ, մա-  
զերը շագանակագցն, կամի նման աղիտակ ակոա-  
ներ, քիթը բերանը փոքր, վերջապէս սիրուելու մի

բան: Ահա այս սիրուելու բանին վրայ սիրահարուում է մեր Ախրլցիսցի հերոսը:

Ակը կոչուած բանը, ննչպէս զիտեն այս փորձակին ենթակայ եղողները, բնաւ չընմանիր աղքային վարչութեան գործերին կամ Հայաստանում մոցուելիք բարենորորդմանց քայլերին, որոնք կրիսյի քայլերից աւելի ծանրաշարժ են, ընտհակառակը սէրը նապաստակի արագութեամբ վաղելով կանց է առնում նապաստակատեղին:

Ակը զժուարաշչը մի կրակ է, ո Առեալ զձեսն Եւայի, տուեալի ձեռին Ադամայ կոչուած փրկարար ջրից զատ ուրիշ տեսակ ջրով չէ կարելի մարել, մինչեւ անգամ Պոսկվայի հոչակաւոր հրճչ զինուորաց գունդն էլ անկարով է մարելու:

Ահա այս տեսակ կրակին մէջն էին ընկել՝ բախտի բերմամբ միմեանց պատահած Ախրլցիսցի և Ախրցուուրկի երկու սիրահարները: Բայց մէկք միայն աղջկան երեսնին վրայ ինչ կար չըկար՝ բոլորը պատմեցինք, շնորհալի յատկութիւնները արտագրեցինք, մոռանալով երիտասարդին քիթը բերանը եւ բնաւորութիւնը նկարագրելու:

Մեր երիտասարդը տգել տղայ չէ, սա էլ հասակով կարճ ննչպէս իր սիրուհին: Դէմքով թխագցն, հետեւարար մաղերը սեւ, քիթը մեծկակ, այսինքն անարատ հայու քիթ. մարմնով քաջակալմ, աչքերը վառվուն, իսկ բնաւորութեամբ կրակոտ աշխատամեր, եւ հաստատմիտ:

Կարծեմ այժմ վեր ի վերց ծանօթացանք մեր երիտասարդ զցուին: Հիմայ գանք սրանց կեանքին:

Մարկարէզը վուսաղարձ անկեղծ սիրով պատասխանում է Արտաւազգին բոցավառ և Տշմարիտ սիրոյն: Արեւակայում է ապագայում իրանց սպասած երջանիկ ամսամակսն կենակցութիւնը, և այս երեւակայութիւնը Արտաւազգին աղիւ բնաւորութեան շնորհիւ արգէն իրաց ործուած համարելով չափազանց ուրախանում է, իսկ Արտաւազգն էլ գեղանի Մարկարէզին երեսն զմայլելով սկսում է երազել Հայկաց եւ մեծն Գրէզէրինի տարբեր ցեղերի միւսթիւնից գցանալիք խառնասերուանգ փոքրիկ երախայները, որոնք միքանի տարբիներից յեաց իր պեսերը եւ մօրուքը պիտի քաշէին:

Արտաւազգը իր անիցը ամսական 40 րուրիք էր ստանում, զոր ուղարկում էր իր տէր պատահ հայրը, չըմուանակ փակածի մէջ տսելու, որ հայրը քահանայ էր, պահիքն աւելի նախանձախնդիր փողը, գէպի իր կողմը քաշելու, քանթէ գուրս հանելու:

Բնակուած տան մէջ Արտաւազգը իրբեւ բարեկամ, աղջական, իրբեւ որդի, ընկեր, եղացը, խոստացեալ փեսայ, միով բանիւ սյնքան մերձաւոր համարուած էր, որ տան մէջ ննչպէս իրանց ընտանեաց մի անհատը վարուում էին նորա հետ: Աչօտար էր եւ ոչ էլ հեր, հետեւարար անիցը գալիք ամսական ողորմելի 40 րուրիքն եթէ տէր պապան ուշացընէր, աղնուուհի տան տիրու հետին քսակին բերանը իրան համար միշտ բաց էր: Ամիսը 40 րուրիքով սենեակի վարձն էլի միասին հաշուելով՝ բիթէք, գոզընէգ, բամբպէքի նման մնելէն փա-

փուկ կերակուրներ ուտել, «Եց նահապետին հետաքածը ըմպելիքը խմել, եւ կամ էջմիածին աշակերտ տառնող Այլվազեան Ըբրահամը առաքեալին ճանապարհին կոխել տուած հելվաներին նման կակուղ բաներ կուլ տալ անկարելի է: Ամիսը 40 րուրէով Եւրոպյում մարդ հազիւ կարող է անուշ անել խաչած հաւկիմ, բանիր եւ Պօլոսյ Հիւանդանոցում գործածուած գինին, այսինքն աղքեւրի ջռւր:

Ըստ մեծի մասին ուսանողաց կեանքը այսպէս է: Վիեննայում բժիշկ ուսանողաց, մնաւանդ սերբացւոց սովորական կերակուրը Հերինկ անունով մի տեսակ աղած ձուկ է, որուն զլուխը նախաճաշիկի, մշջքը ցերեկուան ճաշի, եւ պոչն էլ երեկոյեան ընթրիքի կլծառայէ, իսկ եթէ պատահման ձուկը է գլնի եւ փորի մէջից հաւկիմ գուրս գայ, սա էլ կիրակի օրուան համար կրպահեն որ ձուաղեղի տեղ կը բռնէ: Այնու հանգերձ այս չքաւոր վիճակը մշտական չէ, մի անգամ երբ սոքա գոդար գուրս գան եւ սկսեն գերեզմանափորերի գրանները լեցընել, այն ժամանակ իրանք էլ իրանց փորերը փափուկ եւ համեղ ֆիլէներով կուռեցընեն:



Մեր Ախորքը ուրդի տարիածուների սէրը երկու տարիից ի վեր շարունակում էր, օր ըստ օրէ աստիճանաբար սաստիանալու պայմանա: «Եցնքան ժամանակամիջոցում սիրահարութեան պահանջած

պարտականութիւնները կատարուել, եւ սիրոյ երգումները փոխակարձաբար հազար անգամ կըօկնուել էին, այսինքն «Միանանք կամ մեռնինք, մի կտոր հայով եւ մի բաժակ ջրով անապատում քեղ հետ աղքակիլ ինձ համար կեանք է, ասում էր մեր տէրտէրին տղան, իսկ առանց քեղ գրախոտն անգամ ինձ դառն է, լրղի է, քացախ է եւ այլն: Առ հասարակ սիրահարները ի սկզբան մի պատառ հացով եւ մի բաժակ ջրով գոհ կը լինին, բայց յետոյ, որկրամլութեամբ եւ մասամբ նորին, կեցել խորովածն ու Կախիթու գինին:

Բայց մեր Արտաւազը արգէն կամաց ակամաց շափականց ժուժկալ էր ի կերակուր եւ յըմկելիս, միայն, լինելով ինքը խելօք տղայ, եւ զիտնալով որ սիրահարութեան օրինաց այս տեսակ սովորական աձեւ բանի, ները մարգուն փորը չեն կշռացընել, եւ հարկադրուած լինելով ապագան ապահովընելու համար մի ամառ մարգը համալսարանում մտնելու, մի առաւոտ Վարկարէդին մօրը առաջարկել է որ ինքը Յուրիին է գնալու, եւ եթէ կարելի է, աղջիկը իրան հետ ընկերակցընէ, նորան պյն տեղիր ձեռոքը լաւագոյն մի ուսումնարում զետեղելու համար:

Աղջկան մայրը Տիկին Հովհանն, ինչպէս ասացինք, լինելով ունեւոր, եւ երիտասարդին աղնուութեանը վրայ կատարելապէս համոզուած եւ ապահով, ուրախութեամբ թշլ է տալիս որ երկու ապագայ ամուսինները մէկնեն:

Արանք գնում են Ցուրիիս եւ իւրաքանչիւրը պարապուում է իր ուսմամբը, առանց մերի ընդ-

մերթ սակայն միմւանց հետ տեսակցիլը զանց առշնելու:

Արտաւազը մնում է Յուրիին մի տարի:

Ծնորչիւ իր խելամսութեան եւ աշխատասիրութեան, աւարտում է ինչ որ կարելի է այն տեղուանել, իսկ կատարելագործելու համար 1876 ին վերջերը դալիս է վեճնա:

Բայց նախ քան պիեննա գալը, իր սիրու հի Մարկարէզը յանձնում է իր բարեկամ եւ մտերիմ ընկեր՝ մի այլ հայ իրաւաբան ուսանեող որ. Խպիփան Վարկառ մեանցին, թափանձանօք պատուիրելով, որ իր բացակայութեան ժամանակ աղջկան հոգ եւ խնամք տանի, միմիթարէ, իր բացակայ լինելը մասացընել տալու համար ձեռքիցը եկածը ըստնայէ, որպէս զի աղջիկը բոլորովին միայնակ չըմնայ, եւ ըստիրի:

Խպիփանը ապահովացընում է բարեկամին, ասելով թէ «եղբայր պատուական, դու անհոգ կաց, յանձնարարութիւնդ մեծաւ ու բախութեամբ կրկատարեմ, ձեռքիցս եկածը կ'անեմ, եւ այնպէս ուրախ ժամեր անցընել կրտամ քու սիրու հւոյդ, որով՝ ոչ թէ միայն զգալ չեմ տար քու այս տեղ ըրլինելգ, այլ բնդհակառակը կը ջանամ կարծել տալու Մարկարէզին որ իրը թէ քեզանից չէ բաժանուած եւ դու տակաւին ներկայ ես:»

Արտաւազը, բարեկամին այս աղջիս խօսքերին վրայ ձեռքը սեղմելով անչափ շնորհակալութիւն է յայտնուած. եւ նորա խօսմանցը համոզուած եւ հաւատարմութեանը վրայ անկասկած, գոհ եւ հան-

դարտ սրտիւ. «Թիմաս բարեաւ ասելու գնում է աղջկան մատ, հետն առնելով Ամբակումեանց Եպիփանին:

Մարկարէզի համար անակնկալ չեր այս հրաժեշտը, որովհետեւ արդէն երկու սիրահարաց մեջ տեղ վիճնա գնալու խօսակցութիւնը յառաջացն տեղի ունեցել էր: Այնու ամենայնիւ Մարկարէզը երբ տեսաւ Արտաւազին ճանապարհի հազուատով, յանկարծ սիրաբ ալէկոծուեցաւ, բայց Արտաւազը իրբեւ վարպետ նաւապետ, իսկզին անկեղծութեան աղբիւրից բղանած հետեւեալ աղնիւ խօսքերով յացողեցաւ խաղաղ նառահանգ ստի յշուեր տալ Մարկարէզի ծովածուփի սրտին:

Արտաւազըն էլ քիչ յուզուած չեր, շատ կարելի էր առանց Խաբիփանի ներկայութեան մինչեւ անդամ արտասուրը չեկարողանար զողել, բայց բոլոր տղայ մարդական քաջութիւնը ի զործ դնելով եւ աշբիցը վազելիք արտասուրը սրտին մեջ հսուեցընելով նեքզինը սանձահարեց եւ այսպէս ճառապանեց:

«Ոերելիիդ իմ Մարկարէզ! Եթէ դու ըրլինէիր, ես մի տարի էլ Յուրիին մնալով եւ սովորածս ինձ համար բաւական համար ելով, հայրենիք կը գնայի արհեստովս պարապուելու, բայց չեմ միշում, ըրգիտեմ, ինչ առաքինութիւն եմ զործած կեանքում, որ Կախախինամութիւնը իրը վարձատրութիւն քեզ իմ գէմն հանեց, որուն այժմ անարժան լինելը կը խօստովանիմ:

Քեզ նման չքնաղ մի արարածի տիրանալու բախտաւորութիւնը ինձ թշլ չէ տալիս որ նուազ-

Եւ թերակատար ուսմամբ քեզ կենակից ընկեր լինիմ, եթէ կարելի լինի, մինչեւ անդամ Բիլըսոգ, կամ նորան արժանի աշակերտ լինելու պիտի աշխատիմ որպէս զի գոնէ անունս կրելովդ երեսդ չըկարմըրի:

“Այս, պաշտելիդ իմ Մարկարէդ! այժմ հաւատում եմ անմահ բանաստեղծների քարոզած սիրոյն, այժմ համոզուեցայ որ սէրը հրաշքներ կարող է գործել: Անիրագործելի, անկարելի բառերը սիրոյ բառարանին մէջ չէ կարելի գտնել, նորա համար ամենայն խոշնդու անցանելի եւ ամենայն գժուարամերձ առարկայներ գիւրամատչելի կը գտոնան:

Բայց եւ այնպէս բախտն էլ սակաւիկ օժանագակութիւնը չփնտաց մեր սիրոյ պայմանները ի շնորհս մեր կարգադրելու: Ես գնում եմ վիճնա, բայց գու մինակ մնալու չես, ահա իմ միակ մտերիմ բարեկամն Պ. Խափիանը, որ ազնուութեամբ յանձն առաւ իր պատեհ ժամերից մի քանիսը քու ընկերակցութեանդ նուիրելու, մնան բարեաւ, Մարկարէդ, որքան տիսուր ժամեր, գժնդակ բովէներ սրտիս վայ ծանրանան. քո յիշատակդ մի ակնճարը ժում ամէնքին կարող է անհետացնել որովհետեւ սիրում եմ զբեզ սիրուն ծաղիկս, քեզանով թող անցնի բոլոր տարիքս”:

— Տեսնում էք տէր պապային տղան. ինչեր է ասում. ինչ ձոռոմաբանութիւններ է անում, եթէ բժշկականութեան դասերն էլ այսպէս ըմբռնէ, շատ շուտ պրօֆէսօր կըդառնայ: Ընդհանրա-

պէս աէրտէրի զաւակնելը երկու ծայրայեղութեան ծնունդ կըլինին, կամ չափազանց խելօք, կամ յետին աստիճան յիմար: Նրաւազզը “Հարազատ որդի զնմանութիւն հօր բերէ”, առածին համաձայն իր խելօք տէր հօրը հարազատ զաւակն էր:

Մարկարէդը Նրաւազզին պյս քաղցր եւ սիրալորդը խօսքերից այնքան ողեւորուած էր, որ ցուրտ հրամեցը չըկարողացաւ սրտին չերմանթեան աստիճանը նուազեցնել. միայն մի քանի բառով բաւականացաւ քաջալերել ուսանող ձանապարհորդին ամելով թէ.

— Խիբելիդ եմ Նրաւազզ! վոխարէն այդ ազնիւ զգացմանքներից ընդունիր իմ անկեղծ երախտագիտութեան շնորհակալիքս, ի բոլոր սրտէ բարի ճանապարհ եւ բարի ցանկութեանցդ արդիւնաշատ վախճան կըւարեմաղթեմ, գնա, քեզ առաջնորդ եւ միանգ ամայն ուղեկից է Կախախնամութիւնը, նցնազէս մինչ ցմահ քեզ հաւատարմութիւն երդուող Մարկարէդից յիշատակը: Խնձ մի մոռանար չեմ ասել, որովհետեւ այդպիսի մի բանի վրայ կասկած անք ունեցած օրիցս ոկտօք է մնքվնիքս մեռած համարեմ, ուրեմն զնան բարեաւ, միմեանց համապատասխան երկու մաքուր սրտեր ունենք, Աստուած անկեղծների հետն է, անվըէալ զմեզ կ'օրհնէ եւ կը վարձատրէո:

Խոկ ի՞նչ կ'ասէք Մարկարէդին, սա էլ Ախերցը բուրգում այսքան ճարտարախոս չէր, մի կողմից ուսման պարապմունքը միւս կողմից էլ սիրահարութիւնը կարծես լեզուին վերջն կապերը քակել էին:

Սոյն սիրահարտկան, եթէ կարելի է ասել,  
քաղցրագառն հրաժեշտի ժամանակ միայն մի սիրտ  
կար որ տեղ սատանայակոն չար նախանձու ոդին  
մեծ գեր էր խաղում, այս սիրտը իրաւաբան Խպի-  
փանին սիրոն էր: Եթէ մարդկային տկար մարմինը  
ստեղծագործութեան ժամանակ սրտերի մէջ անցած  
գարձածները կարդալու հոդեկան ցժն էլ ընկու-  
նած լինէր, նոյն բոպէնն Մարկարէդն ու Վրտաւաղ-  
դը Խպիփանին երեսին վասց շատ բաներ պիտի կար-  
դային, բայց ափսոն! ոչինչ չըկարողացան կարդալ.  
որովհետեւ այդ ցժը Ատեղծողը մի միայն իր հա-  
մար է պահած:



Վրտաւաղդը վիէննա հասածին պէս, առանց մի  
բոպէ կրոսնցընելու սկսում է նամակագրութիւնը:  
Գրում է Մարկարէդին անընդհատ սիրագիրներ  
միշտ իր բարեկամ Խպիփանի միջնորդութեամբը:  
Մի կողմից անդուլ ջանասիրութեամբ ուսանումէ,  
միւս կողմից էլ շատունակ սիրուհւոյն տոմսակներ է  
ուղարկում, գրելով թէ իր սէրը մշտական է, ան-  
կեղծ է, աղնիւ է, պատուաոր է, եւ ննիքը գիշերը  
ցերեկին խառնած աշխատում եւ պատրաստուում է  
ուսումը ընդարձակելու, որպէս զի ակագայում  
երկուստէք ապահովեալ երջանիկ կենակցութիւն  
վայելել կարողանան, աւելացընելով իւրաքանչիւր  
նամակում, որ ամենահամառօտ լակոնական ոճով

մի երկտող իրան կեանք պիտի պարզեւէ: Սակայն  
Մարկարէդը անպատասխան է թողնում նամակները,  
եւ Վրտաւաղդը անբացարելի է գտնում իր սի-  
րուհւոյն լութիւնը: Կմանապէս ով. Խպիփանն էլ  
Զաքարիայի պապանձման անէծքին կարծես հանդի-  
պած լինէր, նա եւս ոչինչ չէ գրում Վրտաւաղդին:  
Անթափանցելի գաղտնիք!

Վիէննայի կեանքը վիւրցըուրդի եւ Յուրիինի  
կեանքից աւելի թանկ լինելով մեր տէր պապային  
տղին եթէ մէկը քիթը սեղմէր, անտարակցոյ խո-  
շած հաւկիթի կտորներ պէտք է գուրս գային: Խեղձ  
տղան այնքան հաւկիթ էր կերել որ քիչ էր միա-  
ցել ինքն սկսէր հաւկիթ ածելու, թերեւս այն  
ժամանակ կարելի լինէր աւելի ածան ապրիլ: Բայց  
պէտք է ըստուանալ որ ամենաճարպիկ մի ձեռնա-  
ծու թատրոնի բեմի վրայ հաւկիթների մ.ջից այն-  
քան ոսկի չէ կարող հանել, արքան մեր ապանին  
տոգտորը իր կերած հաւկիթներից պիտի քաղէր  
ապագայում:

Վիէննայում բնակած սենեկին մեծութիւնը,  
կահ կարասիքը բոլորովին համապատասխան էին  
առած սնունդին: Սենեակին չէր կարելի սենեակ  
ասել, որովհետեւ մի հաւնոցէ տարբերութիւն չու-  
նէր, որուն մէջ Վրտաւաղդը մի անգամ մօնելուց  
յետոյ կամ պառկելու կամ նստիլ աշխատելու  
դատապարտուած էր, առանց ազատ շարժումներ  
անել կարողանալու: Սա այնպիսի սենեակ չէր որ  
մարդ ճաշից յետոյ մարսողութեան համար փար

ինչ ման գայ մէջը: Անկողնին դիմացը անմիջապէս զգեստի գարանը գրուած էր, որուն գուռը, անկողնի մէջից առանց գուրս ելնելու ձեռքը երկնցը նելով կրբանար: Չօմուանանք ասելու որ անկողնի եւ գարանի մէջ տեղի անջրաբետը այնքան նեղ էր որ Արտաւազը կողմանակի շեղուելով միայն այդ անցքից կարողէր ազատուիլ: Խոկ անկողնինը այնքան կարճ էր որ պառկած ատենը կամ ոտները անկողնից գուրս պէտք էր հանէր կամ ծնդները գէպի փորը քաշէր: Միով բանիւ այս ծակումն էր որ հաւկիթները կրխաչէր գասերը եւ թէյլ կրպատրաստէր: Որդին այս վիճակին մէջ, խոկ տէր պապան հայրենիքում փլաւն ու տոլման փառաւորապէս կուլ տալուց եւ գօտին քակելով մածունն ու կարագն էլ փորումը տեղաւորյցնելուց յետոյ ոգոչութիւն եւ փառարանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր, ասելով փափուկ եւ կափողիկ անկողնին մէջ ննջեցեալի, կնունքի եւ հարսանեաց քաղցր երազներով կերածները կը մարսէր:

Եյնու ամենայնիւ Արտաւազը որքան նեղուշ թիւն կրէր, չքաւորութեան մէջ ասլը էր, իրան համար ոչինչ նշանակութիւն չունէին, որովհետեւ սէրը, այնպիսի կախարդիչ եւ դիւթիչ մի ողի է որ սիրահարին շրջապատով առարկայները կարող է կերպարանափոխել. այսպէս էլ այն նեղ սենեակը Արտաւազդի աչքին բօվլդի տան սրահին նման էր երեւում, խաշած հաւկիթների սպիտակները արծաթ, դեղններն էլ ոսկի էր կարծում, խոկ թէյլ

եփելու. Համար մի բաժականոց թիթեղեայ ողբրմէի ամանն էլ Կոր-Նախիջեւանի գուվերնատորին արծաթեայ սամափարին հաւասար էր գտնում: Ահա այս տեսակի ինքնատես սիրահարական երեւակայութիւնների տպաւորութեան ներքեւ ամենատնօւր ժամերը իրան ներկայանում էին իրեւեւ աներեւոյթ աշխարհի խոստացեալ երջանկութեանց առաջին քայլեր: Բոլոր այս երազները՝ մի օր իր սիրելի Մարկարէդին խանդաղատանկը վայելելու յոյսով հանապազ կրկնուում եւ տարբեր տեսարաններով հանգէս գալիս էին աչքին առաջը: Մարկարէդը գարնանային վարդի նման կարմիր այտերով սիրուն մի ինձորի կերպարանքն առած կարծես՝ ծառիցը կախուած լինէր, ինքը Արտաւազդը էլ սիրահար Գառուսդի չափ ծարաւից բերանը ցամքած, քաղցրահայեաց անհամբերութեամբ այն չնորհատու պատով կրգիտէր, ախորժանաք ճաշակելու երանելի վայրկեանը մտաբերելով:

Գիշելները աշխատում էր ճրագի լցոսավ. նմանապէս ցերեկները, որովհետեւ սենեկին լուսամնաւիցը ներս մնած լցաը ճրագի լցոսից աւելի ակար էր: Տընութիւն, զրկողութիւն, աննշան բաշներ էին իրան համար, բայց թէ ինչ անձկութիւն. ինչ տագնապ, եւ ինչ անմիսիթար ցաւեր էր քաշում Արտաւազը Մարկարէդին անմեկնելի լուսութեանը պատճառաւ, ահա նկարագրելու գժուար կէտը: Միայն իրան քաջալերով աներեւոյթ ոգին իր մեծ յցուը, առաքինապարդ համբերութիւնը, եւ Մարկարէդի սիրոյն վրայ ունեցած անսահման հաշ-

ւատքն էր, որց համար մի ըսպէ երկմտիլն անդամ՝  
մոքիցը չէր անցած:



Ընթերցողին մոքումը անշուշտ մի կասկած  
յղացած կը թի թէ մի գուցէ մեր Արտաւազդին  
սիրահարական յարաբերութեանց մէջ որ եւ է մի  
մատնութիւն խառնուած լինի:

Այդ կասկածը արդարացի է: Եւյն բարեկամը  
որ իր սիրելի ընկերին ապառնի կողակիցը միխթաւ-  
րելու սրբազն եւ պատուաւոր պաշտօնը յանձն  
առած ունէր, նոյն իսկ այդ հաւատարիմ պարոնը,  
այդ անկեղծ բարեկամը, միով բանիւ իրաւաբան  
Ամբակումեանց Խափիանը ուղեցել էր իր մտերիմ  
Արտաւազդին խոստացեալ կինը անխղճարար յա-  
փշտակել:

Խափիանը զուր տեղ նեղութիւն չըպիսի կը էր.  
որովհետեւ յափշտակելիք որսը այնինքն Մարկա-  
րեգը նիւթապէս եւ բարոյապէս լաւ մի պատառ-  
էր: Արդարեւ անազնիւ էր Խափիանի կողմից աւան-  
դապահութեան այս կերպով չարաչար գործածու-  
թիւնը. բայց Մարկարէգն էլ այնիքան հրապուրիչ  
էր որ Խափիանը ընկերական աղնիւ պարտականու-  
թիւնները մոռանալու չափ ստորացաւ Մարկարէգը  
ձեռք բերելու համար ամէն տեսակ անարդ միջոց-  
ներ ի գործ զնելու պատրաստուելով: Խափիանին  
սէրը նմանում էր մի նեղ տեղում ամիսովուած

դիւրակվառ նիւթերի կրակին, որ իր մուխովը բո-  
ցովը նեղուած ճնշուած կամ յանկարծ պայմէելու-  
եւ կամ մի ծակ գտնելով զուրս ցայտելու տրա-  
մադիր է:

Բայց ինքը ամէն ջանք ի գործ էր գնում իր  
սէրը առ ժամանակեայ կերպով զսպելու համար,  
որովհետեւ նմէ Մարկարէգի վրայ սիրահարուած  
լինելը բացարձակապէս խոստովանէր, բնականա-  
բար Մարկարէգին ատելի պիտի երեւնար, ուստի  
Խափիանը այսպիսի մի ատելութեան տեղի չըտալու  
եւ պատեհ առիթի սպասելու համար այնպիս նա-  
խագիծներ պատրաստել եւ այնքան կնճառաշիւս  
սարգի ոստայնների նման գարաններ էր լարել, որ  
եմէ մի անգամ մեր Անըլցիսացին մէջն ընկնէր,  
այլ եւս նորա համար փրկութիւն չըկար, թէ եւ  
գաւաճան թակարդին անխուսափելի հանգ ցյնելից  
օձիքը ազատելու փորձ փորձէր: Կախ բարեկամա-  
կան վստահութիւնը չարաշար գործածում էր  
ամենաստոր եւ սրբապիղծ մի միջոցի գիմելով, այն  
է Արտաւազդին Վիէննայից Մարկարէգին ուղղած  
նամակները բանալ կարդալ եւ յետոյ առանց աղջ-  
կան յանձնելու անհետացընել, նոյնպէս այրում էր  
աղջկան Վիէննա գրած նամակները, այնպիս որ եր-  
կու սիրահարներ յակամնյս զրկուած էին թղթակ-  
ցութիւնից եւ կատարելապէս վշտացած միմեանց  
անտարբերութեանը վրայ: Արտաւազդին Վիէննա  
գնացած օրից ի վեր ամիսներ էին անցկացել առանց  
որ Մարկարէգը երկու տող մի գիր ստացած լինէր,  
շարունակ հարցընում էր Խափիանին թէ ի՞նչ է

պատճառը, արգեքք հիւանդացաւ Արտաւազդը. իսկ նա պատասխանում էր թէ, ես էլ քանի նամակ գրել եմ ոչ մէկին չէ պատասխանել. եւ հեգնութեամբ աւելացընում էր, «Ճշմարիտ շատ ընտիր բարեկամ! շատ անկեղծ սիրահար!»:

Քանի Մարկարէդը Եպիփանին լուր հարցընէր Արտաւազդի վրայ, նոյն պատասխանները կրկնուում էին առաւ ելութեամբ հիւանդան եւ կծու խօսքերի որոնք Մարկարէդի սիրութ շարաչար կընոցէին:

Ըմիներով Գրանց Մորի գերը խաղացել էր Ամբակումեանց Եպիփանը: Եյսպիսեաւ երկու կողմի նամակները ոչնչացընելով իր անձնական շահուն համար լարած որոգայթը օր ըստ օրէ ամրացընում էր: Իր նպատակին շատ նպաստաւոր ծառայութիւն էր անում այս անխիղջ խաբէական միջոցը, եւ երբ տեսնում էր որ Մարկարէդը սակաւ առ սակաւ կորցընում է իր դէմքի սոլորական զուարթութիւնը, այն ժամանակ Եպիփանը յարմար առիթ էր գտնում աղջկան գայլի շարականներ կարգաւութիւնը: Արտաւազդին դէպ ի երգուեալ սիրուհին ըստնածագըքը, սառնասրտութիւնը պախարաբում էր եւ աշխատում էր որ նորան զղուելի մի արարած եւ ցածահոգի մի հրկչ ներկայացընէ աղջկան առաջը: Խեղջ Մարկարէդը չէր ուզում հաւատալ եւ գառնապէս լաց էր լինում, բայց վերջապէս թնչպէս ընչաւատար, մօտ վեց տմիս էր որ մի նամակ չէր ստացել այն մարդից, որուն ամբողջ սիրուն էր նուիրած: Ի՞նչ էր պատճառը, արդու մի ուրիշն էր սիրում, ոչ. Աստուած հոգիս

առնէր ըստեմնէի այս մատնութիւնը, ասում էր թշուառ Մարկարէդը, արտասուալից աչքերն դարձընելով գէպ իր միսիթարիչ բարեկամը, կարծես նորանից օգնութիւն հայցելու պատրաստ լինէր: Իսկ Եպիփանը բոլորովին գոչ եւ ուրախ, տեսնելով իր մէքենագործութեանց յաջող ելքը, աղջկան սիրութ առաւել սառ եցնելու համար այսպէս էր ասում:

«Միրելի Մարկարէդ, սէրը միշտ անկեղծ ըրլինիր. վիպասանութեանց մէջ կարդացուած սիրց պատմութիւնները, ինչպէս ձեզ յայտնի է, սովորաբար կեղծ եւ շինծու բաներ են: Մի մարդու ոչ թէ խօսքին, այլ գործքին համեմատ պէտք է գտատել: Տեսէք ահա վեց ամիս է որ ձեր սիրականը բացակայ է: Մի երկասով գրութեամբ անդամ իր խոստումը, իր սէրը ձեզ յիշեցընելու պարտականութիւնը ընկատարեց: Ո՞վ է իմանում, կարելի է ինքն էլ մեղասոր չէ, բնակած քաղաքը վիէննա է. Հազար ու մէկ գայթակղութեանց կենդրոնատեղի, իւրաքանչիւր քայլափոխում սուրբ Ենասոնի փորձութիւնը անպակաս է: Ինքը առաջին անդամ Եւրոպա ծանապարհորդող անփորձ երթասարդ, շատ հաւանական է խառնագնաց եւ տարափոխիկ ուսանող ընկերների հետ նիստ ու կաց է ունեցել եւ մնլորուել է, բայց այսուհետեւ չէ կարելի նորա վրայ յստ գնել, նա կորած է. միճացած է, ապականուած է, գուք աշխատեցէք մոռ անալ ձեր սուրբ սէրը, զոր գրած ունէիք այնպիսի անմաքուր մի արարածի վրայ: Միթէ արդէն նոյն ինքը իր անաղ-

Նիւ վարմննքովը ձեզ առիթ չէ տուած որ իսպառ  
մոռանաբ նրան, ուրեմն, սիրելիս, ջնջեցէք ձեր  
սրտիցը նրան նեխուած յիշատակը, գուք արժանի  
էք լեզուն սրտին համապատասխան աղիւ հոգոյ  
տեր մի երիտառարդին:

Աւելորդ է ասել թէ ինչ վատ տպաւորու-  
թիւն գործեցին միամիտ եւ անմեղ աղջկան վրայ  
այս տարօրինակ բարցյականի գասատուին այլան-  
դակ ճոռուաբանութիւնները: Դառն արտասուաց  
կաթիւներ մարդարտի նման սահում գնում էին  
Մարկարէդի վարդակարմիր այտերի վրայից: Բոլոր  
միիթարութիւնը լալու մէջն էր գտնում: Արտին  
վրայ ծանրայած թունաւոր կսկիծը լալով փարա-  
տել կրկարծէր, որքան ջանաց իր խոստնալանց, իր  
ապերախտ սիրականը մոռանալու, կրկին չըյաջողե-  
ցաւ: Ինքը մի հրեշտակ էր, բնաւ Արտաւազդի դէմ  
սրտումը վրէժինդրութեան մի կիրք չէր զգում,  
միայն անգութ ճակատագրին չարաչար հարուած-  
ներին դէմ տալու համար շատ տկար էր խեղջաղ-  
ջնիք, վերջապէս այնքան լաց արաւ որ փոխանակ  
հոգեկան ցաւերը ամփելու, նիւթականն էլ աւելա-  
ցաւ եւ հիւանդացաւ:

Միիթարիչ Եպիփանիը իսկոյն նամակ գրեց  
Վիւրցբուրգ, տիկին Հոփմանին իմաց տալով աղջ-  
կան հիւանդանալը, յայտնելով միանգամայն որ  
եթէ կամենան Մարկարէդի միասին առնել եւ  
տուն բերէ:

Քարեսիրտ տիկին Հոփմանը երբ իր սիրելի աղջ-  
կան տկարութեան լուրը ստացաւ, անմիջապէս

Հեռագրեց Եպիփանին որ որքան կարելի է շուտով  
աղջիկը հետև առնել ու գայ: Մարկարէդը եկաւ  
մօրը տունը: Անինամ թողուած վարդի նման այն-  
քան թոռմել էր որ անձանաչելի էր գարձել: Այն  
ծիրանի այտերը գեղնել եւ գունաթափ էին եղել  
նոր փեսայ ամուսինը քրդերից սպաննուած Վանեցի  
հարսի նման:

Խորհուրդներ, խրատներ, սովորական միսիթա-  
րիչ խօսքեր, ամենքն անգօր էին թշուառ աղջկան  
գառնակսկիծ սիրտը զովացընելու: Թէպէտ Մար-  
կարէդը յանկողին ընկնելու չափ հիւանդ չէր.  
բայց սուեպ սուեպ կրկնուող մի չոր հազի ենթակայ  
եղած էր, որուն համար բժիշկը պէտք եղած գեղը  
տալուց յետոյ պատուիրած էր վիրին աստիճանի  
զգուշութիւն: Տանը մէջ կարծես մարդ մեռած  
լինէր, այնքան սուգ եւ տիրութիւն էր տիրած:  
Դժբախտ Մարկարէդին անմիմիթար տրտմութեանը  
ցաւակից էր լինում Տերէզ քայրը, շարունակ ասում  
եւ կրկնում էր թէ, «անպատճառ որպա մէջ մի  
գաղանիք կայ, դու մի յուսահատուիր. անկարելի  
է որ Արտաւազդը քեզ մոռանայ. նա այնքան  
բարի էր, այնքան ժամանակ մեզ մօտ մնաց, մի օր  
նորա վատութիւնը չըտեսանք, Աստուած այնախօսի  
սիրուն մի արարածի կուրծքին մէջ այն տեսակ ցած  
հոգի չըդնէր, դու սպասիր, ամէն բանին վախճանն  
է գովելի»:

Խեղջ Մարկարէդի սիրտը հազիւ թէ սյս շըն-  
չատու խօսքերին վրայ փոքր ինչ կենդ անութիւն  
կզգար, անդրանիկ քայրը Անսան՝ փոխանակ Տերէզ

քբոջը ամոքիչ խօսքերին մասնակցելու ամեն ջանք  
ի գործ էր գնում, աշխատում էր անհաւատարիմ՝  
Արտաւազդին վարմանքը խոշորացցով մեծացը-  
նելու, ասելով թէ:

“Դու միթէ այնքան յիմար ես որ քեզ մոռա-  
նալ կամեցողին եւ այլ եւս քեզ չըսիրողին ուղում  
ես բռնի սիրել եւ նրան էլ ստիպել որ քեզ սիրէ,  
դու մեր ընտանեաց պատիւը ուղում ես ոսնակոխ  
անել տալ, մոռացիր դա անսպիտանը, դա ապերախ-  
տը, նա քու սիրոյդ անարժան է. քու կողմիցդ  
սցդքան զիջանիլ եւ խոնարհիլը անազնուութիւն է  
եւ քեզ պատիւ չըբերեք: Աշխարհիս վրայ միթէ  
ամնուսին միայն դա՞ մնաց, ուրիշ շատ... մանաւանդ  
ուղածդ ուսանող լինի: Արգէն նորից փնտուելու  
հարկ չըկայ, պատրաստ մի հաս կայ, սցսինքն Ար-  
տաւազդի բարեկամ Պ. Եպիփանը, համակրելի  
Ճենտրուման երիտասարդ է, տեսնմամ ես ինչպէս  
անձնուիրաբար մեզ վշտակից է լինում, մինչեւ  
անդամ անձնուիրութիւնը անձնազօհութեան հաս-  
ցընելով ազնուաբար ինդքած է մեր մայրիկից քու  
ձեռքդ, եւ նա յօժարութիւնը տուած է, միայն քո  
հաւանութիւնդ է հարկաւոր:

Մարկարէդի համար բոլորովին անսպասելի էր  
սյս առաջարկութիւնը:



Եպիփանը, Մարկարէդին մօրը տունը բերե-  
լուց անմիջապէս յետոյ Ցուրիկ չէր վերաբարձել,

աշխատել եւ յաջողել էր մնքն իրան վշտակից,  
ցաւակից եւ սրտակից ցցյ տալը Մարկարէդի ըն-  
տանեացը: Մի շարաթ մնացել էր Վերցըուր-  
դում, եւ համարեա ամենայն օր Մարկարէդի տանն  
էր լինում, յայտնելով որ առանց Մարկարէդի վի-  
ճակի բարւորման բնիք չէ կարող հանդարտ սրտիւ-  
ցուրիկ վերադառնալ: Արտաւազդին թէ գովարա-  
նում էր թէ վատաբանում էր, մերթ անմեղազ-  
րելի էր գտնում նորա վարմանքը, ասելով թէ  
մարդս սխալական է, մերթ այսպանելի էր դատում  
Արտաւազդի ընթացքը, աւելացընելով թէ մարդու-  
ուրիշ գժբախտութեան պատճառ լինելուց զգու-  
շանալու է եւ այլն: Վերջապէս բանը այն տեղ  
հասցըրած էր որ ի բաց առեալ Մարկարէդի Տերել  
քոյրը, ամբողջ ընտանիքը կարծում էր Եպիփանին  
երկնառապ մի հրեշտակ, յատկապէս ուղարկուած  
իրեւ անարժան Արտաւազդի արժանաւոր յաջորդ:  
Եպիփանը խորամանկութիւնը այնքան վարպետու-  
թեամբ գործածել էր որ մինչ այն կէտը տակաւին  
մի խոչնդու չէր պատահած իր նախագծերը յեղա-  
շընելու:

Տիկին զոփմանը վախենալով որ մի գուցէ իր  
աղջիկը բուռն սիրահարական կըքի զոհ գնայ,  
կեանքը աղատելու նպատակաւ Մարկարէտը Եպի-  
փանին տալու խոստացել էր կամսց ակամսց:

Եպիփանի բախտին սակաւ չէր նպաստում  
նաեւ Աննայի կողմանակցութիւնը: Սա վերջինն էլ  
գէպի Արտաւազդը ատելութիւն էր զգում եւ ու-  
զում էր Եպիփանի ընտրութիւնը: Տան մէջ ոչ ոք

չեր համարձակել նորընտիր փեսային լուրը Մարշակը գին հաղորդելու, բայց Ըննան, ինչպէս վերոշիշեալ խօսակցութիւնից յայտնի եղաւ, առաջին անգամ ինքն աւետեց իբր ուրախառիթ, իսկ Մարշակը գին համար չարագուշակ որոշումը: Խեղճ աղջիկը մեծ քրոջը բերնից լսելով որ Արտաւազդը իրան համար այլ եւս չըկար, բարցյապէս մոռած էր, եւ այս մասին մօրը տուած հաւանութիւնն էլ իմանալով բոլորսին յցար կտրեց, Արտաւազդի համար յուսոյ մի նշյլ անգամ ըըմնաց: Ամեն բան կարծես աներեւցիթ մի ձեռօք նախապատրաստուած եւ հակառակ իրան տնօրինուած լիներ: Անդուժ ճակատագրին հետ մաքառելու համար իր մէջը ոչ ցժէ էր զգում եւ ոչ քաջութիւն: Անօդնական միայնակ, ընկճեալ խեղճ արկարեցը զգիտեր ինչ անէր, հակառակ իր կամաց, եթէ ոչ բռնութեամբ, գէթ ստիպողական մի վիճակի մէջ թողել էին զինքը, որպէս զի Արտաւազդին մոռանայ եւ Եպիփանին կին գառնայ:

Արդարեւ Եպիփանը գեղեցիկ ըլինելով հանգերձ հակարելի մի երիտասարդ չեր, բայց Մարշակը գրէ նրան չեր սիրում, գժբախտ աղջկան սիրտը առաջին անգամ Արտաւազդի համար բարախած էր: Նկատում էր Եպիփանին բոլորութեան ստանդիստ անդինին առաջ որոնք լոկ մի ամռասին ստանձնելով կրեաւականան: Մարկարէդի միակ ցանկութիւնը բոլոր սիրած Արտաւազդի հետ մշտնջնաւորապէս ապրիլ էր: Դժբախտ աղջկան օր ըստ օրէ

ախորժակը կտրուեցաւ, համարեա ոչինչ չեր ու տում: միայնակ սենեակումը առանձնացած կրմաւծէր: Իր փոքրիկ գլխին մէջ հազար ու մէկ խորհուրդներ, նախագիծներ կը շնիւր: յետոյ ոչ մէկին չեր կարող որոշում տալ: Քանիցս անգամ վճռում էր փափաչիլ գնալ եւ Արտաւազդին գտնել: Բայց երկը առաջ մի նշյլ եւ անփորձառ ութիւնը վհատեցանում էին իրան: Այսպէս սրտամաշ մտատանջութիւններով խեղճ աղջիկը աղջմել անգամ չեր կարողանում, կարծում էր որ Աստուած էլ չէ ու զում ձայնը լսել: Գլուխը սաստիկ ցաւում էր եւ յաձախ կրկնուած անիծեալ հազը կարծես վիրջն շունչը կտրել կտպառնար: Այլ եւս գիմանալու ոյժը ըըմնաց: Այս յուսահատ պարագայների մէջ իր սովորական պաշտպանը յորդառատ արտասուր քններն էին: Ակաւ լալ: Ահ, Արտաւազդ, ո՞ր ես, կանչում էր, ես մեռնում եմ: արի, դուէ յուզարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուիր. ոհ Աստուած իմ, գժման ինձ. ինայիլ ինձ, շուտ ան Հոգիս, այսուհետեւ ինձ համար կեանքը դառն եւ անտանելի է, ասում էր թշոււառ աղջիկը, հեծեծանքը լսեղջելու ջանալով:

Մարկարէդը ուրիշ օրեր այնքան վշտահար եղած չեր որդիս այն օրը: Կարծում էր թէ նշյն օրը իր օրհասականն էր: Քանիցս անգամ մայրը, քըրերը իր մօտ գալով ճաջն պատրաստ լինելը յիշեցըրել էին, բայց նիքը չեր ու զեցել եւ մէրժել էր, ասելով թէ ախորժակ չունի: Ամանապէս Եպիփանը օր նոյն օրը Տիկին Հռիմանի տունը ճաշի էր

Հրաւիրուած, նա եւս Վարկարէդին չէր կարողացած  
մինչ ճաշտեղը տանիլ:

Մի ժամից յետոյ ամենքն եկան վերստին Վարկարէդի սենեակը, եւ դժան նրան մի եւ նյոն մելամազնոտ վիճակին մէջ: Վարկարէդը ուղեցաւ վեր կենալ, ծնգները սկսան դողալ, աչքերը մօնցան, սուր մի ձիչ արձակից, եւ անվրէպ գետնի վրայ պիտի ընկնէր եթէ օգնութեան չիհաներ Խպիփանը, որուն բազկացը մէջ մարեցաւ: Վայրը, քցը երը, ծառայները ամենքը աճապարանօք մօտը խուճապեցին, Վարկարէդի քթին գեղեր քաշել տալով խելքը գլուխը բերին եւ բազկամոռի վրայ նստացըրին: Երբ Վարկարէդը աչքը բաց արաւ գէմը կանգնած տեսաւ Խպիփանը, որ իր սէրը յայտնելու համար արդէն վազուց անգիր արած յառաջաբանը բերանացի արտասանելու, էր սկսած: Լաւ կարդաց ձառը, ջերմ գարձուածքներով եւ կենդանի ոճերով վերջաբանեց, ի հարկէ չըմուացաւ նաեւ Արտաւազդի անազնիւ եւ անմէնելի ընթացքը չարախօսելու: Խրաքանչիւր խօսքը արտասանած ժամանակ աջ ձեռքը կուրծքին ձախ կողմը դնում էր, անելով “Ահա այս տեղ է այն մի կտորը, ահա այս տեղ պահուած է այն սիրտ կոչուած փարրիկ դործարանը որ զգացմունքների կենարննէ”: Այս, բնչզպէս բարախում է, կարծէք նա ինձանից առաջ պատրաստում է օրիորդ Վարկարէդին համար զգացած անկեղծ սիրոց առհաւատչեայն նուիրելու, Այո՛, եթէ բնութիւնը ինձ Արտաւազդի չափի բնական ձիրերը չէ պար-

գեւած, գոնէ սրանով կարող եւմ պարծենալ որ զգայուն մի սիրո ունիմ, Աւաղ, շատ կրցաւիմ որ ստեղծագործութեան ժամանակ, սրտի կազմակերպութեան բոպէին Արտաւազդը զիկուել է այդ զգայրանից, որպէսզի մեր անմեղ եւ պաշտելի Վարկարէդի սիրութ խոցուի նորա անզգ պյութեամբը: Ակայն վասա չունի, խոցը անբուժելի չէ, նրան նորաբաց խոցին իրեւ սպեզմնի ծառայեցնելու համար իմ սիրոս նուիրելու պատրաստ եմ: Ոիթէ այս սրտովս տակաւին ինձ արժան չէք գտնում Վարկարէդի ձեռքը խնդրելու, սրանից աւելի հաւաստի ինչ վկայութիւն կարող է լինիլ Վարկարէդի սրտի յօժարութեան վճիռը կայացնել տալու համար:

Այս ազգու վերջաբանութեան ոչ ոք չըգիշացաւ: Պոլսց ամենաջերմ սահմանագրական ազգաւունք մի երեսփոխան, գէպ ի ազգը ունեցած սէրը հազիւթէ կարողանալ պյուքան ճոխութեամբ ճառել: Վարկարէդի սենեակում ներկայ գտնուողներին, բաց ի Տերէ զից ամենքն էլ լաւ գտան Խպիփանի սրտագուշ ատենախօսութիւնը, մինչեւ անգամ Վարկարէդի շրթանց վրայ հաւանութեան թեթև մի ժպիտ երեւաց, զոր ներկայը ծափահանութեամբ եւ ուրախութեան աղապակներով ողջաւնեցին: Խպիփանը կարծես վախենում էր սրտին անչափ ցնծութիւնը արտայայտելու, միայն պիեխերին ծայրերը ողորում էր ի նշան գոհունակութեան արած յաղթանակին: Չայների մեծամանութեամբ կամ լաւ եւս միաբան հաւանութեամբ նոր վիեսայ

ընտրեցին Եպիփանին, եւ որպէս զի երկարաձգեւ-  
լով Արտաւազդի սիրահարութեան նման սա եր-  
կրորդ սէրն էլ անախորժ մի հետեւանք չունենայ,  
իսկըն ամուսնութիւնը վճռեցին և հարսանեաց  
օրը որոշեցին, այնպէս որ վերջին շեալ գէպքից 7 օր  
յետք Արտաւազդի ապագայ երջանկութեան առ-  
արկան, Արտաւազդի այն երկրաբարելի Մարկարէդը  
Տիկին Եպիփան Ամբակումեանց պիտի կոչուէր:



Ինչպէս ընթերցազը նկատեց, Մարկարէդի  
Տերէդ քայլը միշտ Արտաւազդի պաշտպան եւ նրա  
ազնուութեանը երաշխաւոր եւ փաստաբան հան-  
դիսացել էր: Մի բնագգում շարաւնակ դրտում էր  
իրան, ըստաւատալու այս անակնկալ գէպքերին,  
մանեաւանդ Մարկարէդի նոյն օրուոյ առանց դժկա-  
մակութեան, ժպիտը երեսը, Եպիփանի համար  
Հաւանութիւն ապառն չէր ուզում հաւատք ըն-  
ծայել: Կոյն իսկ այդ համարաբառութեան, այդ ժպի-  
տին ներըեւ մի փոթորիկ, մի գժբախտութիւն  
գուշակում էր: Կարծես անմեղութեան հրեշտակը  
արդարութիւնը երեւան հանելու համար Տերէդին  
միաքը լուսաւորեց մի վերջն փորձ փորձելու: Ազ-  
նիւ աղջիկը մօրը աղացեց պալատեց որ մի նամակ  
գրէ Արտաւազդին եւ իմաց տայ եղելութիւնը:  
Յուսակորյս մայրը՝ գրուելիք նամակին ապարդիւն  
լինելուն ապացցյանցն իսկ Մարկարէդի ամիսներով

գրած նամակներին անպատասխան մմալը մէջ բերե-  
լով առաջին անգամ մերժեց, բայց աղջկան պալա-  
տանաց եւ թախանձանացը դիմադրել չըկարողա-  
նալով, վերջապէս հաւանեցաւ գրելու եւ իսկցին մի  
նամակ ուղարկեց Արտաւազդին, սակայն այս նամակի  
ինդիբը Տերէդի նախազգուշութեամբը ծածուկ  
պահուեցաւ Եպիփանից: Բայց որովհետեւ Տիկին  
Հովհաննը Արտաւազդի հասցեն չէր գիտում, նմա-  
նապէս Տերէդի խորհրդութ նամակը ուղղեցին All-  
gemeine Krankenhaus (ընդհանուր հիւան-  
դանոցի) հասցէին: Նամակին բովանդակութիւնը  
թէպէտ քաղաքավարի, բայց անմարսելի խիստ եւ  
վիրաւորիչ ոճով շարագրուած էր: Ըստ օրինաց  
խոհեմութեան նամակը ապահովընելով այնպէս  
յանձնեցին նամակատան:



Դասանանք Արտաւազդին, տեսնենք ի՞նչ  
անում: Աեց ամսուայ մէջ Արտաւազդին պատպա-  
խելըը զլաւին էր մնացել եւ չէր ինենթելի: Իրա  
վայ պէտք է զարմանալ: Գլարապմանքը շատ պիզմ  
քիւ, ապրուատը գցիւն, սենեակը փոքր, սեղմնը  
չորարեկը ուրը սասատիկ, Մարկարէդից անտեղիւտկ,  
մի տեղ գնալու անկարույն կարծես շղմայակապ:  
Աս վիճակը նմանում էր մի ժաղսվագական առածի  
որ ասում է: «Տերտէրը կարծատես, եկեղեցին  
մուժ, Աւետարանին տառերը մանր, ժողովուրդը



Խոռվածք: Այնպիսի մի հանգատակում ի՞նչ կարելի է կարգալ և ի՞նչ լսել: Արտաւազդի կեանքն էլ սա առաջի նման մանուածց մի բան էր: Անհանգուրժելի մի կեանք, դամիել մարդարեն դուքը շատ տանելի էր Արտաւազդի առաջանակիր դրութեան հետ բաղդատելով:

Ո՞ի կիրակի առաւատ սենեակումը նստած կերակուր էր պատրաստում, այսինքն հասկիթ, բայց այն օր խաշելու չեր, իւզով պիտի եփէր, որովհետեւ տնիցը 40 րուրին նոր էր ստացել: Արենին հարուստ էր: Կոյն օրուայ նախաձաշիկն ուղեցել էր մի քանի բան աւելացընել: Առել էր խոզի եւ լեզուի ապուխտ. մի քանի քաղցր կարկանդակ, եւ ձուազեղ շնելու համար կարագ: Երդէն գիտենք Արտաւազդի սենեկին ընդարձակութիւնը: Գրասեղանի կոչուելուց շատ հեռու մնացած քառակուսի փորբիկ մի սեղանի վրայ դիզուած էին մի շատ բժշկական գրքեր, մի շիշ ջուր, բաժակներ, թլութեր, զրիչներ, կաղամար եւ այն օրուայ ուտելիքները: Գրասեղանը մի խորշ ունէր որ ծառայում էր զանազան վիրաբուժական գործիքներ, գեղեր, խաշած հաւիթներ, թլութեր, տետրակներ պահելու՝ թլութակալ եւ միանդամայն չոր կերակորց պահարան էր: Գրասեղանի վրայ մի ասեղ զնելու պարագ տեղ չեր մնացել:

Իւրաքանչիւր գրքին վրայ մի բան էր գրուած: Աբիրտով ձաւազեղ եփելու թիթեղեայ եռոտանի շուտաւել մեքենան Pathologie գրքին վրայ, շերտ շերտ կտրուած խոզի եւ լեզուի ապուխտը Անատո-

միւ ին վրայ, կարագը, կարկանդակիները եւ կոտրուած հակիմները Diagnostic հատորին վրայ էին շարուած: Իսկ Սամավարի տեղ ծառայող մի բաժականոց թիթեղեայ ամանն էլ և Քնար Հայկականին վրայ էր զետեղել: Անյաջողակ թեթեւ մի շարժում բաւական էր ամեն բան տակն ու վրայ անելու:

Եյս նեղ տեղում Արտաւազդի սիրտը առաւել ճշշուում էր, երբ Մարկարէգին էր յիշուում: Վեց ամիս էր ոչինչ լուր չունէր: Երեք ամսից ի վեր այլ եւս նամակ գրելը զադրեցըսել էր: Այնքան սիրտը վշտացած էր, որ ձեռքը առաջ չէր զնում ձուազեղին եւ թէյամանին սրիրդները վառեշլու, ինքնիրան մնածում էր, ասում էր Ի՞նչ է նշանակում սա, ես ի՞նչ արել եմ նրանց, ոչ մի խղճի խայթ չեմ զգում. ոչ մի բանում մեղաւոր չեմ, եթէ լինէի նենդաւոր կեղծաւոր մինը, գոնէ կը միմիթարուէի ասելով թէ խարդախների ճրագը շուտ կը մարի, բայց Աստուած էլ գիտէ որ ես անկեղծ սիրով սիրել եմ, սիրում եմ եւ պիտի սիրելում Մարկարէգին: Մի անգամ կարելի լինէր գնայի ու վերագառնայի, ամենայն ինչ կը պարզուէր, բայց ինչպէս զնամ ժամանակ չունիմ... փող շունիմ... ոչ, Աստուած իմ այս ի՞նչ կեանք է, գլուխս կարծես մեքենայի մեջ զրել սեղմում են, վախենում եմ խենթենամ:

Եյս տիսուր մնածու թեանց մեջ ընկղմած էր Արտաւազդը, երբ սենեկին գուռը զարկին, Herein (մոէք) աղաղակից երիտասարդը: Գուռը բայունցաւ եւ խկցն ներս մնաւ. նամակարերը „Ich

habe die Ehre! gut Morgen!<sup>1)</sup>) **ասելուց յետոց յանձնեց մի նամակ հանդերձ ապահովութեանը ընկալագրով.** զոր ստարագրել տուաւ. եւ Իշ ըմբռի միշ!

**Կամակը Ախրցբուրդից էր:**

Անդամահատութեան դասերի ժամանակ առանց ձեռքը դողալու շաբաթը մի քանի դիմուներ կտրատող Արտաւազդին ձեռքերը այս նամակից սկսան սաստիկ դողդողալ: Ախրցբուրդից ովապիտի գրէր նամակ, անշուշտ Մարկարէդը: Քայց այնքան ժամանակ ինչո՞ւ լուս էր կեցել: Կա՞ էր արդեօք: Կամակի հասցէին գիրը բոլորովին անծանօթ էր իրան: Խեղզը այնքան յուղուած էր որ նցին իսկ Մարկարէդի ձեռագիրն էլ լինէր ըսպիտի ճանչար: Կամակը աշխատում էր բանալու, չէր կարողանում, գուվերդը կտրելու համար մլրատ էր փնտում, այդ անիծեալ գրասեղանին վրայ մլրատ չէ, բնիքն ընէր կը կորչէր: Գուվերդը մասնելով պատուելու վախենում էր, ներփակեալու ըսվասելու. համար, որովհետեւ գա նամակը մահու կամ կենաց ինդիր էր: Ծննդները դողդում էին, բոլոր անդամները յուղուած էին, ոտքի վրայ ըսկարտացաւ կենալ, նստաւ, բացաւ վերջապէս նամակը որ Տիկին Հոփմանի ստորագրութիւնն էր կրում, եւ սկսաւ կարտալ շետեւեալը:

1) Պատիւ ունիմ ձեզ բարեւելու:

2) Անագր բարեւաւ. ի նշանակութեամբ դործածական մի բառ է:

“Պարոն Արտաւազդու:

“Իւրաքանչիւր ոք իր կարծիքն ունի, ես եւս ինձ համար այն կարծիքն ունիմ, որ մի մարդ որքան բարձր ուսումներ առած լինի, եթէ իր մէջը բնականից աղնիւ յատկութիւն չըկայ, այն մարդը միշտ կը նմանի վրան յղուած փայտի հասարակ փայտին, որուն փայլը արտաքին երեւցիթ է: Այս տողերով ոչ ձեզ յանդիմաննելու նպատակն ունիմ եւ ոչ անպատուելու, շատ հաւանական է որ սխալուած լինիմ, տար Աստուած որ իրօք սիսալուած լինէի, այն ժամանակ պատրաստ եմ խօսքս յետս կոչելով հազար ներովութիւն ինդիրելու ձեղանից:

Արքան լաւ կը լինէր եթէ բնութիւնը մարդուս սիրաը երեսին նման յայտնի ստեղծած լինէր: Արաշագ ործութեանց մասին զիտողութիւններ անելու գիտութեանց աստուածներն անդամ չեն համարձակում, ուր մեաց ինձ նման ողջումնի մի արարած, քայց ես էլ շատ կը ցանկայի իմանալ մարդոց սիրաը կարգալու գաղտնիքը, որով գոնէ կը յաջողէի քաշել չըտալ այն տառապանքները, որոնց դարք մատնեցիք իմ թշուառ աղջ իկը. սակայն անցեալի վրայ ողբալը անօգուտ է, պէտք է ներկային դարման անել: Այս դարմանը գտանք, այսինքն ձեր երկարատեւ եւ սառնասիրտ լուռութիւնը մեղ առիթ տուաւ եւ ստիպեց անկասկած կարծելու որ այլ եւս գուք չէք սիրում Մարկարէդին: Քիչ մեաց որ մեր սիրելի Մարկարէդը զոհ գնար ձեր պատճառաւ, բայց նախախնամութիւնը լսեց մի մօր աղերսը, գլաց

մեր վրայ, աղասեց մեր աղջիկը, մեզ մի նոր ամսութիւնն տոռաւ: Ամուսնութեան հանդէսը կը կատարենիք Ն օրից: Եցէ թէ սիրոց մի կայծ գտնուէր տակաւին ձեր սրտում, եւ յանուն այդ սիրոցն գոնէ երջանիկ օրեր բարեմաղթէիք մեզ միշտ, եւ ձեզ երբեմն սիրելի Արկարէդի համար, որ յցս ունիմ ձեզ ներողամիտ լինելու չափ աղնիւ եւ անիշանալոր է: Ըստունիցէք, պարոն եւ այլ... ”

Ախւրցբուրկ...

Տիկին Հոփման:

Արտաւազգը նամակը հազիւ վերջացրել էր, յանկարծ այնպէս վեր թռաւ, կարծես նստած աշխատին տակը տիսամիտ զրուած լինէր եւ նցյն բորէին պայմէր: Այն նեղ տեղում ուր մեծ զգուշութեամբ հարկաւոր էր շարժիլ, այն չափից դուրս բեռնաւորուած սեղանին, որուն աղատ ձեռք տալ չեր կարելի, եթէ Արտաւազգը այնպէս զիւահարի նման վեր թռաչ. զիւրին է գուշակելը թէ ի՞նչ կը պատահի: Բարեբախտաբար ձուալեզին եւ թէին սբիրդները տակաւին չեր վառած, ապա թէ ոչ մուկինման նեղ սենեկին մէջ պիտի այրուէր Ախրցիսամիտ նորոգը: Կամակի բովանդակութիւնը այնաքան միտքը շփոթեց, ըղեղը խանդաբեց, որ սեղանին ուշագրութիւն անելու ժամանակ չունեցաւ, եւ այնպէս ուժքին վեր ցատկելովը ծնդները սեղանին կառչեցան, սեղանը գլորուեցաւ. աթոռը շրջեցաւ. ինքն էլ կոնակի վրայ ընկաւ: Սեղանին վրայ ինչ կար ըգար. կարագը, ջուրը, կոտրուած հումկըն էլ գլուխն ի վափիեցան: Խնձը սեղմուել

Էր գլորուած սեղանին եւ շրջուած աթոռին մէջ տեղու: Կայն բոսկէին Արտաւազգին անկարելի էր ճանաչել, բոլորովին կերպարանափոխ էր եղած: Կարագը ամբովզապէս գլխին մազերին էր կպչել, հաւկիմների գեղին եւ սպիտակ հեղուկը պեխերին եւ մօրուքին վրայ էին վազել: Արսափիելի էր գրութիւնը: Աւզում՝ էր աղաղակել որ զրացի սենեակի կինը օգնութեան գայ, բայց ամաչում էր, առանց օգնութեան էլ չէր կարողանում վեր կանգնիլ: Կոնակի վրայ գարծուած կրիստի նման ձեռները ունեւը շարժում էր շակուելու համար, բայց անօգուտ... Ակրջապէս աղմուկը եւ գզպիւնը հարեւան սենեակի կոնջ ականջին հասան եւ եկաւ Արտաւազգին այդ գրիտիկական գրութիւնից աղատաց:

Դակից գուրս ելածին ուէս Արտաւազգը հարեւանցի կերպով երեսը գլուխը սրբելուց յետոյ զլիսարկը առաւ գուրս ելաւ: Այլ եւս ինքն իրան տէրը չէր: Զուր տեղը կինը բացագանցում էր “Մի աճապարեր, պարոնս, ջուր բերեմ քիթդ բերանդ լուա՛.... Արտաւազգը չըլսեց մինչեւ անգամ կոնջ բողքները: Կայծակի նման զուրս էր թըլուել եւ վագում էր, ուր էր գնում, ինքն էլ չէր իմանում: Կայն միջոցին եթէ տէր պապա հայրը, երէցին մայրը, եղայրները գէմն ելնէին, ոչ ոքին ճանչնակալու կարողութիւն չըւնէր: Շարունակ գնում էր: Ինքնիրան խօսում էր: Զեռներով գլխով շարժումներ, նշանացի բաներ էր անում:

Օրը կիրակի լինելով շատ բազմութիւն կար փողցներում: Ճանապարհի անցորդները զարման-

քով երեսին էին նայում: Աարծում էին թէ յիշամբանոցից փախած մի մարդ է:

Իրօք էլ Արտաւազդը մի խենթից չէր զանազանուում: Կա կարծում էր որ փողոցի վրայ մինեակ է, ոչ ոքին չէր տեսնում:

Բռնցի հարուածներ տալիս էր օգին մէջ եւ բացագանձչում էր “Մարկարէդ! Մարկարէդ! այսպէս ուրեմն, ինձ կըմուանաս, բայց ում ընտրեցիր իմ տեղը, ասա! ասա տեսնեմ! քու բերնիցդ ուղում եմ լսել. համանում ես... գալիս եմ... հիմայ կը գամ..., ասում էր եւ քայլերը աւելի արագացնում էր: Խեղճ երիտասարդը ցնորուածի պէս էր. կարծում էր որ քալելով մինչ Վերցրուրդ կարող է գնալ:

Այսպէս արագընթաց շարունակ մի ժամ քալելոց յետոյ առանց ինքն էլ զգալու հասել էր քաղաքից գուրս մինչ մեծ դանուրի եղերքը:

Այս տեղ կանգ առաւ. չափազնց յոզնած էր: Մի պատառ բան չէր կերած: Ատամիքսի բուռն ճմումները սաստիկ տանջում էին իրան: Բերանը պապակած էր: Կատաւ գետնի վրայ, գլուխը երկու ձեռքի մէջ առաւ եւ սկսաւ մոտածել:

Ի՞նչ հնար, ի՞նչ միջոց գանել ի՞նչ պէտք էր անել: Ե օրից Մարկարէդը ուրիշին կին պիտի լիներ, ով էր այդ ուրիշը: Մի գուցէ Նպիփանը լիներ, բայց ոչ!... անկարելի էր: Խսկ Եպիփանի լուսինը! գա ի՞նչ էր նշանակում.... Վերջապէս գալանիքներ! պէտք էր թեւառոիլ եւ թոշիլ

գնալ, բայց միջոց չուներ: Առաւոտուն ստացած նամակը մի պատուհան էր, մահապարտի վճիռ էր: Գոնե առանց լուրի, առանց նամակի մնալովը այնքան թշուառ չէր, յշտով էր ասպաւմ, իսկ այժմ, գատապարտութիւն! յուսահատութիւն! ուրիշ ոչինչ!

Մի գգմախատ մարդ կարծես իր գգմախատ զրութիւնը առաւել կզայ, երբ իր թշուառութեան պատճառ եղալ առարկային համապատասխան ուշրիշ մի բան կըտեսնէ: Արտաւազդը գլուխը վեր առնելով տեսել էր հեռուն, զէս ու զէն թեւթեւի տուած մի քանի տարիւածու զոյգ եր, որոնք յամրացյլ ման էին զալիս: Յանկարծ նստած տեղից վեր թառաւ եւ խեղուկ մի ձայնով զոչում էր էր էր Առւտ է, Առւտ է, չեմ հաւատար, մասնաւթիւն է, զու! ով երիտասարդ! ինչ որ քեզ ասում է նազելիք, մի հաւատք ընծայեր, վերջը քեզ կըխարէ եւ կըլինիս ինձ նման թշուառ:

“Եսին միջոցին աչքերը բեւենեց Վեծ գանուրի կատաղի հօսանքներին, որոնք կարծես իրանց սրբնաւթաց ալիքներով հրապուրիչ հրաւերներ էին կարդում կեանքից ձանձրացողներին: Արտաւազդը, իր յուսաբեկ գրութիւնը անդարմանելի գտնելով ուղեցաւ մի ակնթարթում իր ցաւերը խեղել հոսանքի մանշիւների մէջ, բայց խկայն Մարկարէդի կերպարանքը երեւակայութեան առաջ ներկայացաւ: Արտաւազդը ըսկարողացաւ մի քայլ յառաջանալ, կարծես Մարկարէդը թեւիցը բռնած չէր ուղում թողեսուլ: Արտի խորքիցը մի կծու հասալ,

չանք արձակեց, եւ թուլացած կրկին գետնի վրայ  
ընկնելով երեխայի նման սկսաւ լալ:

Նացը սփոփեց վշտերը, միսիթարեց հոգին: Ար-  
տաւազգը այլ եւս յուսահատ չէր: Աչա այս մի  
քանի կաթիլ արտասուբները յաղթեցին դանուրի  
սպառնալից հօսանքներին:

Արտաւազգի ողջ գատաղութիւնը վերագար-  
ձել էր: Մի բոպէ տկարացել էր, եւ այժմ՝ սկսում  
էր ինքն իրանից ամաչել յնետեւեալ փիլիսափայա-  
կան մոտածողութիւններն անելով:

Ուս Մարկարէդի գէմ՝ ոչ ապերախտ, ոչ էլ  
անհաւատարիմ եմ գանուել, ուրեմն ինչո՞ւ մեռնիմ,  
ես եկել եմ աշխարհ որ մի թատրոնից տարբերու-  
թիւն չունի: Ինչո՞ւ համար այսքան տառապանք  
քաշշուց յետոյ մինչ վախճանը ըրհամիւրեմ: Մարդկային կեանքից առնուած ի՞նչ թատերական  
խաղեր կան որոնց վերջն գործողութեանց մէջ  
արդարութիւնք եւ ճշմարտութիւնք յայտնուում  
են, ինչպէս լուսինը որ երբեմն սեւ եւ տիսուր  
ամպերի տակից ազատուելուց յետոյ աւելի պայ-  
ծառ եւ փայլուն է երեւում: Այո՛, ես էլ աշխարհի  
կատակերգութեան մի հանդիսատեսն եմ: Տօնմակը  
վճարող թատերասէրի նման մինչ վերջը պիտի  
սպասեմ: Ի՞նչ մեծ յիմարութիւն պիտի գործէի  
անձնասպանութեամբս, մանաւանդ որ տակաւին  
ճակատագրի հետ մարտնչելու միջցներս չեն սպա-  
սած: Եյսպիսի հանգամանքներում մի բարեկամի  
խորհուրդը, մի մոներմի խրատը լսելը ոչ նուազ  
նպաստաւոր է, ասելով Արտաւազգը սկսաւ շուտ

չեռանալ այն տեղերից ուր յակամայս առաջնոր-  
դել էր իր մոաց քայլացման բոպէական տպաւո-  
րութիւնը: Կոյն պահուն դանուրը սկսաւ աւելի  
կատաղաբար հօսել եւ մնաչել, կարծես իր որու-  
ձեռքիցը փախցընելուն համար զայրացած լինէր:



Արտաւազգը, քրտինքը ճակտից վաղելով՝  
շնչասպառ հասաւ քաղաքը եւ ուղղակի զնաց Պ-  
Մանուշակեանց անունով մի բարեկամի մօտ որ  
կեանքի մէջ, մանաւանդ սիրահարական հանգա-  
մանքներում փորձառու եւ ուրախ զուարթ մի  
հայ երիտասարդ էր, եւ նոյն պահում բարերախ-  
տաբար տանն էր:

Բարեկամը ապշած մնաց Արտաւազգի այլա-  
կերպ գէմքը տեմնելով եւ հարցըրից:

— Եղապիր քեղ ի՞նչ է պատահէլ:

— Մի խորհուրդ հարցընելու եմ եկել:

— Շունչէդ կորել է, նիստ եղապիր, ի՞նչ ունիս,  
մենսամարտեցա՞ր, ի՞նչ արիր:

— Դու չոգիտե՞ս որ ես մենամարտող ուսա-  
նողներից չեմ:

— Հապա ի՞նչ է պատահէլ քեղ, գլուխ,  
քթիդ, քերնիդ վայ այդ ի՞նչ կեղտուութիւններ են:

— Թող եղապիր քիթս բերանս, եւ շատ վատ  
զրութեան մէջ եմ: Ես գիւրցըրդում մի աղ-  
ջիկ էի սիրել, մայրը խստացել էր ինձ տալու,  
այժմ նամակ ստացայ որ...:

— Եղբայր, պեսներիդ, մօրուքիդ վրայ գեղին քաներ կան, ի՞նչ են դրանք:

— Թաղող բարեկամ, ի սէրն Աստուծոյ. իմ մօրուքն է բռնկել, դու ասում ես “սիկարըս վառեմ”:

— Լաւ, լաւ, շարունակիր, ի՞նչ նամակ ստացար:

— Աղջկան մայրը ինձ զրում է որ Մարկարէզը 7 օրից պսակուելու է ուրիշի վրայ, ես այժմ չուարած եմ, ի՞նչ անեմ, ի՞նչպէս դնամ, ոչինչ միջոց չունիմ…:

— Մարկարէզը ո՞վ է:

— Աիրու հւզոս անունն է, եղբայր…:

— Ո՞րքան ժամանակ է ձեր սիրահարութիւնը:

— Երկու տարիից աւելի է, մեր սիրահարութիւնը Վիւրցբուրգում սկսել էր, այնուհետեւ Յուրիին գնացինք ի միասին: Ես եկայ Վիւնան, 6 ամիս է ոչ նամակ ունեի, ոչ մի լուր, այս առաջու ստացայ այն չարագուշակ նամակը:

— Այսպա՞ն ժամանակ է, ինչո՞ւ ինձանից ծառէ էր պահել, կարելի է մի գարմանն կըդ անէինք:

— Ի՞նչ անէի, ամեն բան վերջանար, եւ պահուէի. այն ժամանակ տարած յաղթանակս յանկարծ բարեկամներիս յայտնելով մի զարմանք պատճառելու դիտաւորութեամբ գաղտնի էի պահել:

— Խիստ բարի, ասա ինձ, աղջիկը փող ո՞ւնի:

— Եղբայր, ես փողի հետ ամուսնանալու չէմ, իմ արշեստու մեղ կապրեցընէ:

— Եյնու ամենայնիւ, ուղու մ եմ իմանալ, աղջիկը կարողութիւն ունի թէ ոչ:

— Այս, ունեւոր է մայրը: Անը յըրուրդում մի քանի տներ եւ խանութիւներ ունի:

— Աղջիկը քեզ սիրում է:

— Այս, Յուրիիսից մեկնածս օրը լուկիր ի՞նչ սիրոյ երգումներ, ի՞նչ ուխտեր ի՞նչ մաղթակներ արաւ:

— Դու սիրում ես աղջկան:

— Տարակցու չըկայ եղբայր, ինենթի նման եմ սիրում, այս առաւօտ քիչ մեաց նկրպնիքս սպանեին…:

— Մի աճապարել, համբերէ, ասա ինձ տեսնեմ, աղջիկը քեզանից առաջ կամ յետց ոչ որի չէր ճանաչում, ուզում եմ ասել որ մի ախոյեան, մի հակառակորդ ունեցա՞ր թէ ոչ:

— Ոչ, բարեկամ, Մարկարէզը առաջին անգամ սէրը ինձ համար էր զգացել, աչքը ըաց արել ինձ էր անսել, ուրիշ ոչ զին չէր սիրած, միայն Վիւնան եկած ժամանակս մի աւսանող ընկերունէի Վմբակումեանց Ապիստան անունով, Մարկարէզը յանձնարարեցի որ նրան հոգ տանի, հովանի լինի…:

— Եպիստան Վմբակումեանց! Դա ի՞նչ այլանց դակ անուն է, միմէ այդ տեսակ անուն ունեցող մարդու աղջիկը կըյանձնեն:

— Ի՞նչ անէի, սիրուն անուն ունեցող մարդու աղջիկը է փնտուէի, անունը տգեղ լինելով ի՞նչ վեաս ունի, ինքը զարդ ացած կըմուած երիտասարդ է:

— Գու ասա ինձ, վստահութիւն ունիս քու այդ զարդացած կրթուած բարեկամիգ վրայ:

— Ի՞նչպէս վստահ ըլլինիմ, պատուոյ խօսք տուաւ որ իմ բացակայութեան ժամանակ...

— Մարկարէդիգ, հոգածու կը լինի, այդ հասկանում եմ, բայց սիրուհիդ ձեռքիցդ ըլլելու խօսք ըստուաւ, այնպէս չեմ...

— Եղայր, իմ տանջանքը, իմ կրակը ինձ բաւական են, գու էլ վրան իւղ ես ածում:

— Մի նեղանար, Արտաւազդ, իմ ասածները բոլորը համական ենթազրութիւններ են: Ես քո լաւութեանդ համար նպաստաւոր միջոց եմ խուզարկում: Գու տակախն առաջն սիրահարութեամբ անփորձառու ես: Իմ էլ գլուխը նցյն փորձանքին ենթակայ է, բայց սա իմ չըրրորդ սիրահարութիւնս է, բայց ի սրանից, քու եւ իմ սիրահարական պայմանները բոլորովին տարբեր են: Ես քու համառօտ պատմութիւնիցդ հասկացայ որ գու առաջն սիրահարութեանդ մէջ մէծ բախտ ես ունիցել, այս տեսակները շատ հազարադիւտ են, ժամանակ մի կորսցներ, կարգադրիր այս տեղ որպան կարելի է շուտ, եւ վաղը կամ միւս օր ճանապարհ ընկիր...

— Բայց սիրելիս, նիւթական միջոցները...

— Քեզ ով է հարցընում նիւթականը բարցականը, որքան փող ուղում ես, ես կըտամ քեզ, գնա՛, վաղիր, մի վախնանը, մի յուսահատիր, ես ապահովացընում եմ քեզը որ Մարկարէդը քուկի է: Այս վերջին խօսքը Արտաւազ-

դին այնքան հաճելի թուեցաւ որ ուրախութիւնը չըկարողանալով զսպել Վանուշակեանցին վզին փաթաթուեցաւ եւ սկսաւ մոլոդնաբար երեսները համբուրել:

— Ասց եղայր, կաց, ես Մարկարէդը չեմ...

— Ինձ համար Մարկարէդից աւելի ես, որովհետեւ առանց քեզ ես,՝ կարելի է, այժմ ձկների կերակուր էի եղած:

Եւսպէս Արտաւազդը բարեկամին շնորհակալութիւն յայտնած միջոցին գուուը բաղկնեցին գըստից եւ ներս մտաւ մի բարձրահասակ, մազերը շեկ փալքորիկ մօրուքով մօտ ՅՇ տարեկան մի պարոն: Կերս մտած ժամանակը հայերէն լեզուու բառեւ ձեզ պառնայքու ասաց: Արտաւազդը այս տարօրինակ արտասանութեամբ բարեւ տուող պարոնին հայագէտ անդղացի կարծեց, այնքան նման էր բրիտանացու: Գլուխը զէպ ի յետ էր բռնած, իսկ ետին գառնալու համար փոխանակ զլուխը զարձնելու խոզի նման ամբողջ մարմնովիլ էր դառնում:

Պ. Վանուշակեանցը իսկոյն ծանօթացը բարտաւազդին նոր եկող պարմեր:

— Խնդրեմ ծանօթանաք, պարոն Արտաւազդ Տէրտէրեանց ուսանուու: Պարոն Մարտոքէ Վելիբը Վելիսոսինց տոգտոր:

Երկու անձանօթ հայրենակիցք միմեանց ձեռքը սեղմեցին:

Արտաւազդը, որուն ուրախութիւնը Մարկարէդի առթիւ արգէն անսահման էր, եւ այն օրը գէմը ենող հայրենակիցին ուղում էր համբուրել.

Պ. Մարուքէ Մէլիք-Մելիտոսեանցի անդղական սառն գէմքից ակնածէլով չը համարձակեցաւ, միայն գլուխը ծառելով ողարսն, շատ ուրախ եմ ձեզ ծանօթանալու պատին ունենալով ասաց: Խսկ Պ. Մարուքէն գլուխը բարձր բռնած:

“Ես էլ շատ ուրախ եմ, շատ շնոր հակալ եմ, ոռ գուք խայեռէն գիտէք եւ խայ էք ո պատասխանեց, յետոյ հարցըրեց Արտաւազդին:

— Դուք այս տեղ Բնէջ գոռծով, կը պառապիլիք:

— Ես բժիշկ ուսանողեմ, խսկ գուք:

— Ես ա՛, ա՛, ա՛, մանկաբառ, վիռաբրյժ, եւ գանկաբան մասնագէտ եմ, այսպիսի բանինով կը պառապուիմ: Այս տառի գնալու եմ Խայաստան խայեռի գանկեռը ուսումնախուելու, բոլոր խայեռի մէջ մինակ ես եմ ա՛, ա՛, ա՛, գանկաբան....

— Ո՞ր տեղ էք առարտել ձեր ուսումը:

— Առ տեղ չեմ եղել, ոռ գուք հառցընում էք թէ ոռ տեղ եմ եղել. ես եղեմ եմ ա՛, ա՛, ա՛.... մէն տեղ:

Ամսոնիկա, Ընդդիա, Հողանդա, Գեռմանիա, Աւստրալիա: Եսը Խայաստանի գանկեռը ուսումնախուելու, մի Brochure պիտի հրատասակեմ ոռ Եւրոպան իմանաց թէ խայեռը ինչ գլուխ տես են, եւ կառող են ինքնավառ ժողովաւոգ լինիլ, մոռ ազգին համար այսպիսի բանին է հառկաւու....

Պանուշակեանցը տեսնելով որ Արտաւազդը անհամբերութեան նշաններ է ցցց տալիս, խօսակցութեան նիւթը փոխելու կամ լաւ եւս Արտաւազ-

դին հաճելի թուով հարցի վայ խօսը փախադրելու համար, ողարսն Երտաւազդը ասաց, մեր Պարսն Մէլիք-Մելիտոսեանցը օտար մարդ չէ. նրան առաջն էլ կարող ենք քիչ առաջ մեր ընդհատած խօսակցութիւնը շարունակելու:

Եւ դանեալով Պ. Մէլիք-Մելիտոսեանցին “կը ներէք պարսն որ համառօտարար ձեզ պատմեմ” մեր Երտաւազդի սիրահարական գէպերը, լաւ կրտնին որ գուք եւս այս մասին ձեր կարծիքն յայտնէք եւ ձեր խելօք խորհարդներով լուսաբանէք մեր սիրելի ընկեր եւ հայրենակից Արտաւազդի երեւակայութիւնը, որ քիչ առաջ ինձ մօտ եկած ժամանակ համարեա բոլորովին խանգարուած միհճակի մլ.ջ էրու:

Այժմ յառաջարանից յետոյ Պանուշակեանցը կարծառօտ պատմեց Արտաւազդի սիրահարական արկածները, նկարագրեց նրան գրիտիկական զրութիւնը, աւելացրենելով միանդամայն թէ ինքը իր կարծիքը յայտնած է որ Երտաւազդը կարելի եղածին չափ շատով Ախրցըրուրկ գնալուց զատ ուրիշ միջոց չանի:

Գանկաբան Պ. Մարուքէ Մէլիք-Մելիտոսեանցը առանց ընդհատելու, Պանուշակեանցի պատմածները ուշադրութեամբ յելուց յետոյ ակնոցը քմիցը հանեց եւ փոփոխակի Արտաւազդի եւ Վանուշակեանցի երեսներին նայելով, նախ հարցըրեց թէ աղջիկը հայ է, ո՞չ հայ չէ, զերմանացի է, ո պատասխաննեցին երկու երիտասարդք:

Այսուհետեւ, աւելացըրեց տողարը, ես բոլոսովին հակառակ եմ ձեռ կառծիքին, որովհետեւ Խայեռի

գանկեռը օտառ ազգեռի գանկեռի հետ խառնուշելով ապադայ գանկաբաննեռի ուսումնասիրութիւնները կը դժուառացընեն, գալ տառի իմ Հռատաւակելիք Brochliure ի մէջ պիտի կառդաքու ոռքան վնասակառ են այսպիսի բանիէռը,,:

Բայց պարոն տոգտոր. միթէ կարելի է այդ տեսակ կարծիք յայտնել, ասաց Մանուշակեանցը, սէրը գանկաբան մանկաբանի լեզուն չէ հասկանում:

— “Դուանկ իմ գիտնալու բանիէռը չեն, ես եթէ կառողանայի կառդելի այսպիսի յիմար բանիէռը,, պատասխանեց Աւստրալիայի տոգտորը: Մանուշակեանցը հազիւ կարողանում էր ծիծաղը զսպել, իսկ Արտաւազդը այնքան կատղել էր որ առանց Մանուշակեանցի ակնարկութեանց ուշադրութիւն գարձընելու

— “Պարոն, ասաց, լաւ կանէք եթէ նախ ձեր գանկը ուսումնասիրէք, ես առանց գանկաբան լինելու ձեզ ասեմ որ ձեր գանկին մէջ ոչինչ չըկայ. բոլորովին դատարկ է,,:

— Պարոն, ի՞նչպէս կը համառ ձակվիք, բայց պէտք է ձեզ նեռնեմ, ոսովէնետ ձեռ գանկին մէջ սիրահառական զոլոց շներ, այնպիսի բանիէռ կան, ասելով տոգտորը սիլինտրն առաւ եւ ամաք բառեաւ,, մը մրմինչլով դուրս ելաւ զնաց:

Մինչդեռ տոգտորին ոտքի ձայները սանդուղների վրայ լոսում էին, Մանուշակեանցը երկու ձեռքերը փորին վրայ գրած, երեսները կարմած ծիծաղը սանձահարելու էր աշխատում: Երբ տոգտորը բոլորովին հեռացաւ, այն ժամանակ սկսաւ

աչքերից արտասուք հոսելու չափով ծիծաղը:

— Եղբայր, սա ի՞նչ մարդ էր, գու իմ Ամբակումեանց Եպիփանին չէիր հաւանում, այս Մարուքէ Մելիք-Մելիքոսեանց տարօրինակ գանկաբանը որ տեղից ես գտել:

— Այս, փոքր ինչ թեթև է:

— Ի՞նչպէս թէ փոքր ինչ, գա թեթեւսօլիկ-ների ընկերութեան նախագահը կարող է լինիլ, իւրաքանչիւրին անցագիր տալու համար, որ տեղացի է դա:

— Ինքը Աժտերիսանցի եմ ասում է. բայց իսկապէս չըգիտեմ որ տեղից լինելը:

— Միթէ Աժտերիսանցիք հայերէնը այդպէս ու, ով կարտասանեն:

— Ո՛չ, բայց շատեր կան որ հայերէն լեզուին օտար ազգի մի ճաշակ տալու համար այդպէս “ո՛ր” ները “ու” ով են արտասանում:

— Փոխանակ հայերի գանկերին ետեւից ընկելու թողիր լեզուն ուղղէ, ափսոս շուտ փախան ես շատ բան կամէի նրան:

— Թռող Արտաւազդ, բան չունիս, գու քու ցաւիդ վրայ մտածիր, արի զնանիք, գու ճաշ չես արած, լաւ մի ճաշ անենք. պյուր քու եւ Արեկարեգիր կենացը զինի պիտի նմեմ: Ճաշարանումն էլ կը ծանօթ անաս ուրիշ մի հայ բժիշկ տոգտորի, որ խոսիսունի է անունը:

— Այդ տոգտորն էլ մի գուցէ Մելիք-Մելիքոսեանցի նման մի բան լինի:

— Ա՛ւ դա շատ ծանրաբարյ ինելոք երիտաւսարդ է, հիմնյ կը տեսնես — ասաց Մանուշակեանցը եւ Ըրտաւազգի հետ թեւ թեւի տալով գնացին հասարակաց մի ճաշարան որ տեղ Պ. Խոռիսուանին խոզի խորոված էր ուտում:

Մանուշակեանցը փախադարձաբար երկու անծանօթ հայերը միմեանց ծանօթացընելուց յետոյ նոտան ճաշ ուտելու:

Արտաւազգը նախքան ճաշը սկսելը պատուիրած մի քանի խաչած հաւկիթները յստակելու միջոցին, Մանուշակեանցը համառօտիւ պատմեց Արտաւազգի սիրահարական գէպքը, եւ ասաց նաև որ մի քանի օրից ճանապարհորդելու է, իր Վարկարեկը առեւանդող ախցեանի ձեռքից քաշ ասպետի նման հերոսաբար խլելու համար:

Պ. Խոռիսուանին երբ տեղեկացաւ որ աղջիկը գերմանացի է, ինքը թէպէտ Մելիք-Մելիտոսիանցի նման գանկարան չէր, բայց չերմ ազգասէր եւ կրակու հայրենասէր լինելով, սա էլ քիթը բերանը ծոմկելով Արտաւազգի ամուսնութեան հաւատութիւն ըբուռաւ. Մանուշակեանցը հարցըրեց.

— Պ. Խոռիսուանին, ի՞նչ է պատճառը որ անտեղի էք տեսնում այս միւսթիւնը:

— Պարզ բան է, ասաց Խոռիսուանին, ես եթէ գերմանացի աղջկայ հետ պսակուիլ ուղենայի, մինչեւ հիմնյ վաղուց ամուսնացած եւ մի քանի էլ զաւկի տէր եղած կը լինէի, չընայելով որ ինձ առաջարկուած աղջիկներից աղքատադշնը 40—50 հազար ֆիորին ունէր, բայց ես ամենքին մերժեցի:

Ես սկզբունքի տէր մարդ եղել եմ եւ միշտ այնպէս պիտի մնամ, ես հայ աղջկայ հետ ամուսնանալու եմ, եթէ երբ եւ իցէ մի օր ամուսնանալու որոշում տամ: Ես ինքս լինելով զարդացած մի մարդ, մինչցարդ ամուրի մնալուս պատճառը՝ մտաւորական զարդացմանս համապատասխան մի հայ ընկերուէի չոդանալուց յառաջ եկած է:

— Միթէ Հայրերի մէջ չէք կարողանում գտնել ձեզ չափ զարդացած մի աղջիկ, — հարցըրեց Վահուշակեանցը:

— Համարեա ոչ, որովհետեւ գիտէք ինչպէս է, զոր օրինակ ես ցանկանում եմ այնպիսի մի հայ օրիորդ ինձ կին առնել որ գոնէ փաքը ինչ տարբական անդամապնութեան տեղեակ լինի, եւ գիտենայ միրտը մարդուս մարմնոյն որ մասին մէջ է գտնուում:

— Ի՞նչպէս, ասաց Արտաւազգը, տող տոր Խոռիսուանին խօսքը ընդհատելով — միթէ հայ աղջկը չափիւր սրտին որ տեղ լինելը:

— Ոչ — պատասխանից խօսիսուունին — ձիշդ այդ տգիտութիւնն էր որ մի հայ աղջկան հետ մեր միւսթեան վճռուած կապը խղելու պատճառ եղաւ:

Ինձ վրայ ունեցած սէրը մի օր յայտնել ուղած Ժամանակը ձեռքը կարծքին վրայ զնելով “սիրտս վկայ է իմ սիրզս ասաց”, բայց ինչպէս դուք եւս գիտէք, սիրտը կուրծքի տակը չէ, մարդուս ձախ ծծի տակն է: Այս անդամապնութեան օրինաց սրբազնութեանը չոկարողացայ գիտնալ եւ ա-

մուսնանալուց հրաժարվեցայ: Որովհէտեւ ինձ անշ կարելի է ունենալ կեանքի այնպիսի մշտական մի ընկերուհի որ չոգիտենայ իր թօքին, լեարդին, երիկամունքին, փայծաղին, եւ այլ զանազան բաներին որ տեղ լինելը եւ ինչ պէտքերի ծառայելը:

— Արեմն դուք ուղղում եք սպասել որ հայ օրիորդները բժշկուհի գառնան եւ այն ժամանակ ամուսնանաք: Ես ձեզ գոնէ խորհուրդ կըտայի որ Կավկասից մի մանկաբարձ հայ օրիորդ վեր առնելիք, սաքա իւրաքանչիւր բանին որ տեղ լինելը լաւ են իմանում, ասաց Վրտաւազզը:

Պ. Խոռոխոսունին այս հեգնական սրախօսութիւնից թէպէտ վիրաւորուեցաւ. բայց իր ասածներին էլ անտեղի լինելը զգալով:

— Թառզնունկը առ այժմ այդ բժշկական կէտը, գանք ազգային հարցին, միթէ կարելի է հայ ալշ գայնութիւնը բազմապատկել հայ օրիորդները թողնելով եւ գերմանուհիներ առնելով: Չէ՞ որ այդպէտ սով հայոց թիւը օր ըստ օրէ պակասում է:

Վրտաւազզը հայերի բազմապատկան նաև խանձախնդիր այս հազուազիւտ տողտորին երեսին նայելով:

— Պարոն տոգտոր, ասաց, բարերախտաբար ուսուահայ եմ, եթէ տաճկահայ լինէի, Հայաստանում անդղիական հիւպատոս Թըրոթթը հազարակետին վիճակաբրած ազգահամարին մէջ հայերի թիւը քրգերից պակաս թուով գուրս գալուն ես պատճառ եղած պիտի լինէի: Բացի սրանից պէտք

է գիտնաք որ ես գերմանացի չեմ գառնալու.. հայ եմ, եւ միշտ հայ կըմնամ:

Տոգտոր խոռոխոսունին այս անգամ ուղելով խօսակցութեան բալորովին վերջ տալ,

— Պարոն, ասաց, արելք ինչպէս գիտէք. ազատ եք միշտ ձեր ընտրած կինը առնելու, ես միայն աղշգութեան տեսակէտից մի գիտողութիւն անել ուղեցայ: Աս այս փափուկ եւ չօշափելի հարցը 10 տարիից ի վեր ուսումնասիրում եմ, վաղ ընդհուպ կըկարդաք նկատողութիւններս, զորս հայ պարբերական մամլոյ մէջ մտադիր եմ հրատարակելու: Կերեցէք, պարոնայք հիւանդանոց գնալուն մի օպէրասիօնի ներկայ գտնուելու, ասելով տոգտոր խոռոխոսունին ճաշարանից գուրս ելաւ:

Կըկին այս անգամ Վանուշակեանցը ուշաթափ լինելու չափ ծիծաղում էր. Վրտաւազզը՝ եղբայր ասաց կարծեմ ուրիշ հայ տոգտոր այլ ես չոնիաց ինձ ծանօթացընելիք, բայց եթէ կան ուրիշներ, ինդրեմ նեղութիւն մի կըեր ծանօթացընելու, արդէն հարկ չըկայ, որովհէտեւ բոլոր ծանօթագըրածներդ բողնիւներ հրատարակելու են, այն ժամանակ ոչ միայն ես, այլ ընդհանուր հայերը կըծանօթանան: Հիմայ, եղբայր ներէ ինձ որ գնամ գործերս կարգադրեմ, եւ մի օր առաջ ճանապարհ ընկնիմ, տեսնենք բախտը ի՞նչ նոր խաղեր խաղալու է դլիսիս:

— Վեհոգ կաց, պատասխանեց Վանուշակեանցը, գնա՛, մի մտածիր, գործերդ կարգադրիր, փողի կողմանէ հոգ մի քաշեր, ես պէտք եղածը քեզ:

կըտամ, դու շուտ շուտ արի ինձ մօտ, գնալիք օրդ  
էլ ինձ խմաց տուր, գնա ուրեմն, բարի յաջողում,  
բայց մի մոռանար նախ քան գնալդ քիթդ բերանդ  
Լուանալու...

Արտաւազգը մտերիմ բարեկամին ձեռքը սեղ-  
մելով եւ չնորհակալութիւն յայտնելով միրտը  
բոլորովին միսիթարուած դուրս ելաւ ճաշարանից:  
Ամբողջ օրը թշուառ սիրահարը յուզուած եւ վըր-  
դոված եւ փոքր ինձ գլուխն էլ զինիից տաքացած  
լինելով առանց որ եւ է մի կարգագրութիւն սկսե-  
լու ուղղակի տուն գնաց պառկեցաւ:



Ուէ մարմով թէ հոգւով ցաւակիր եղաղներին  
առ հասարակ շատ է օդնում քունը: Ամբողջ գի-  
շեր անլոնդհատ մի քուն նցն գարմանը տուաւ Ար-  
տաւազգի լքեալ մարմնցն եւ վշտաբեկ հոգւոյն:

Առաւոտուն վաղ վեր կեցաւ, նիւթապէս եւ  
հոգեպէս ինքինոքը կազդուրուած դտաւ: Գնաց  
անհիշապէս կարգագրելու իր անձնական գործերը  
եւ ճանապարհորդութեան պատրաստութիւնները  
տեսնելու:

Թէպէտ Տիկին Հովմանը այն շարագուշակ նա-  
մակին մէջ 7 օրից Արակարէդի ամուսնութեան  
պսակը աղդարաբել էր, բայց Արտաւազգը ակամպը  
մի անհամբերութիւն էր զգում եւ կարծում էր  
որ անցկացած իւրաքանչիւր բոպէն վլուանդ կ'սպառ-  
նար եւ կըփութացընէր իր դատապարտութիւնը:

Աւրիշ գործով զըալզուելու բնաւ տրամադրութիւն  
չունէր: Այլեւս գաղարեցընեց բժշկական գասերը.  
Եւ մի քանի օրվայ մէջ ամենայն ինչ վերջացընելով  
պատրաստուեցաւ ճանապարհորդելու:

Մի շաբաթ օր, կէս օրից յետոյ Արտաւազգը  
բացի ճանապարհի ամենապիտան իրեղններից՝ իրան  
համար անբաժանելի սնունդ համարուած մի քանի  
խաշած հաւ կիմներ եւ ուրիշ չոր տառելիքներ  
պարունակող մի փոքր պայտասակ ի ձեռին՝ գնաց  
Վանուշակեանցի սենեակը:

Եկնեակում այս անգամ էլ անձանօթ մի մարդ  
կար նստած: Արտաւազգը նև ըս մանելուն վրայ՝  
զղջաց, վախեցաւ թէ մի գուցէ այն մարդն էլ բրո-  
շեր հրատարակող մի ուրիշ զիտնական բժիշկ  
լինի: Այդ վախը իւրաւացի էր, օրովհետեւ Ար-  
տաւազգին ջղերի վրայ սաստիկ ներգործել էին եր-  
կու հայ ուսումնական բժիշկների իմաստուն դիտո-  
ղութիւնները: Բայց ընդհակառակը սենեակումը  
տեսած անձանօթը ոչ զիտնական էր, ոչ էլ  
բժիշկ, այլ վաղուց ի վեր անկննա բնակուող գոլսեցի  
մարդարտավաճառ մի պարզ մարդ էր:

Վանուշակեանցը Արտաւազգին բոլորովին պատ-  
րաստ լինելը ձեռքի ճանապարհի պայուսակից իսկցին  
հասկանալով, ասաց — ելքայր, կեցցեա! այսպէս  
շուտ պատրաստութիւն! Էջմիածին ուխտի գնալու  
լինէիր այսքան չըպիտի աճապարէիր: Արակարէդից  
սէրը քեզ թեւեր տուաւ, ի՞նչ արաւ: Խնդրեմ  
ծանօթանաս մեր վաղեմի բարեկամ գոլսեցի հաճի  
Վեւսդիանոց աղային, լսու եւ պատուական մի

մարդ է, քո պատմութիւնդ պատմեցի իրան, շատ ուրախացաւ, եւ եթէ թղլ կը տաս ինքն էլ ցանհութիւն յայտնեց քեզ ճանապարհ գձելու:

Շատ շնորհակալ եմ, ասաց Երտաւաղդը, պարսնին թէ ծանօթանալուս եւ թէ ինձ ցցց տուած համակրութեանը:

— Ախրար! ասաց անծանօթը, ամենէն առաջ ես քեզի բան մը զուրցեմ. ափ կը նես, ես հայերէն գրաբառ լախրտը ընել չկյատեմ, մեր վախիթները ըստանոլին մէջը քերականութիւն գիտողը մատով կրցուցունեին, հայճախիս իս մէջ պազի պազի տաճկերէն խարըշը րմիշ կը նեմ, հրամանքը դ կէնէ Փարիսին կերթաս, ամա քեզի եալվարմիշ կը լսամ զէֆէնմիշ մըլլար:

Երտաւաղդը ոչինչ ըրհասկացաւ, բայց զօրութեամբ կարողացաւ գուշակել որ հաճի աղան մաշ քուր հայերէն ըլխոսելուն համար ներողութիւն էր ինքրում, ուստի քաղաքավարութեան գէմ ըսմեղանչելու եւ հաճի աղան հանգստացընելու համար:

— Անսա չունի հաճի աղա, այնու ամենայնիւ ձեր լեզուն հասկանալի է, շատ քիչ տաճկերէն բառեր խառնում էք, կայ հայեր որ ձեզ չափ էլ շեն կարողանում հայերէն խօսիլ:

— Ախրար, Մասիս կը կարդամ, Մշակ կը կարդամ, պիւթիւն կը հասկրնամ, ամա լախրտը ըրած վախիթը ինչ խրտար տիսաթ կը նեմ քի թէմիզ հայերէն լախրտը ընեմ ուշի, կէնէ ույտուրմիշ չեմ կը նար կոր ըներ:

Երտաւաղդը այս անգամ Մասիս եւ Մշակ բառն երից զատ ուրիշ ոչինչ ըրհասկացաւ, բայց հասկանալ ձեւացընելով:

— Այս, այնպէս է, երկու լուգրաց լեզուները միմեանցից տարրեր են ասաց:

Վանուշակեանցը մեծ գժուարութեամբ կարողանում էր ծիծաղը զափել. այս բարիլոնական խօսսակցութեան ժամանակ, իսկ Երտաւաղդը ստեղծ ժամացոյցին էր նայում:

— Ախրար, ասաց հաճի աղան, աճելէ մըներտաշա երկու սաշաթ վախիթ կայ, քիչ մընեալ սապր ըլէ, ուզուն ուզաւույա խօնու շմիշ ըլլանիք, սորամ քեզի հետ պարապար կերթանք, բաներդ վակօնին մէջը եւրլէշտիրմիշ կը ներ, անկէ սօնրա լստուած սէլամիթ տայ կելլաս կերթաս:

— Ախ! որքան լաւ կը լինէր եթէ մի ժամ առաջ կայարանը գտնուէի ասաց Երտաւաղդը, Երկամթուղիի կայարանում երրորդ զանգակին ձայնը լսող մի ճանապարհորդի նման աճապարելով:

— Եղբայր հանգիստ կաց, հիմայ կը զնանք, կայարանում էլ լաւ մի ճաշ անելու տականին ժամանակ ունինք, այնպէս չէ հաճի աղա, հարցըրեց Պանուշակեանցը:

— Ճելպէթտէ անանկ է ամա, աս տէլիկաննին սապր ընելու վախիթ չունի: Ես ալ տէլիկաննիլը եղած վախիթը ալէփ էի ալէփ, հիմայ հապը կը լւած եմ, պարն ոտզ տորը խապահաճ չունի, անիշկայ հիմայ խաղըխի վրայ նստած մարդու կը լմանի, անիկայ շախս չէ, ատոր սէվտա կը սեն, իմին գը-

լոխս ալ եկած է, պելի բան է քի անիկակ անանկ ըլլալու ըլլայնէ տափկակ ալ տառնիկ կը լսոյ:

Հաճի աղջինի այս վերջին անհասկանալի տրամաբանութեան Արտաւազգը պատասխան անդամ չըկարողանալով գտնալ, նստած տեղից յանկարծ վեր կացաւ: Մանուշակեանցը Արտաւազգին նեղուած դրութիւնը հասկանալով խօսյն մի կառք բերել տուաւ, ինքը, հաճի աղջան եւ Արտաւազգը նստան մէջը: Կառքն սկսաւ գլորուիլ գէպի երկաւթուղիի կայարանը:

Արտաւազգը կառքը մոտած ժամանակ մի մեծ շունչ քաշեց, մեծ էր ուրախութիւնը, չնորհակալութեան, երախտագիտութեան արտայայտութիւններով լցուած աչքերը ուղած էր Մանուշակեանցին:

Եյս վերջինն էլ շարունակ ծիծաղում էր, եւ ասում էր. «Արտաւազգ, հոգ մի աներ, ինչպէս ասացի գարձեալ կըկրկնեմ, Մարկարէդի քուկդ է, մի կասկածիր, մի վշատիր, քու սիրտգ բարի է սէրդ աղնիւ է, ինչպէս երեւում է Մարկարէդն էլ քել է սիրում, Աստուած կըյաջողէ:»

Հաճի աղջան էլ տեսնելով Արտաւազգի սրտի գոհունակութիւնը մի քանի բարենազդութիւններ արաւ եւ աւելացըք նաեւ ասելով թէ:

— Պարոն տոգտոր, ես 20 տարի է վիենաւ մին մէջը մարդքիտի ալրը վերիշ կընեմ, էյէր Աստուծով նշանածդ հոս բերելու ըլլանէ, մէկ աղւոր մարդքիտէ կերտանլըս մը քեզի կուտամ նշանածիդ համար, ես մէջն քեար մար չեմ աւզեր

մալը մալընա կուտամ, նշանածիդ անունն ալ Մարկարիդ է եղել. թաս թամամ ույմիշ կը լսոյ, ան կերտանլը իր աղւոր մը ճիտին թափմիշ կընես:

Արտաւազգը առանց հասկանալու շատ շնորհակալեմ ասաց, նոյն միջոցին կառքը կանգնեցաւ երկամուղիի կայարանի տառջր:

Կայարանի ճաշարանում ճաշեցին, կերան, խմեցին փոխադարձարար հաճի աղջինի, Արտաւազգին, Մանուշակեանցին, մանաւանդ Մարկարէդի կենացը բազում բաժակներ գատարկելուց յետց, շոգեգնացքի փողահարին ձայնին յաջորդող զանգակի երկրորդ հեծինը մօտալուտ անջատման բազէն աւետեց: Արեք հայազգիր սկսան միմեանց համբուրել: Հաճի աղջան թէպէտ երկու ժամից ի վեր Արտաւազգին ծանօթացել էր, բայց սիրու շատ զգայուն մարդ լինելով

— «Ընկապար չեմ կոր տայսնմիշ ըլլալ, սիրս շատ ալլի իւսմի եղաւ, քեզի պաշխառ բան չեմ ըսեր, Աստուած տար տէ սիրականդ պաշխանին իսաբարքմիշ ընել ըրտայիրոն ասաց աչքերը սրբերը սրբելով:

Հաճի աղջան լսց էր լինում, իսկ Մանուշակեանցը ծիծաղից արտասառը էր թափում:

Աերջապէս Արտաւազգն էլ այս գոմիք տեսարանից ժպիալը ըրկարողացաւ ըմբռնել եւ բարեկամներին կըկին համբուրելով մտաւ վագոնում:

Շոգ եկառքը շարժեցաւ: Արտաւազգը գլուխը վագոնից դուրս հանած, անդագար գլխարկը տատանում էր: Մանուշակեանցը նոյն ձեւով բարեւում

Աւ աղաղակոմ էր "Արտաւազդ! Մարկարէդդ  
շուտ Վիեննա բեր", իսկ համի աղան էլ "տոգտոր!  
Աստուած թամամին եէթիշափրիշ ընէոքացագան-  
չած ժամանակ արդէն գնացքը ոլացել էր:



Ա իեննայից վիւրցրուրդ 12 ժամանան ձանա-  
պարհ է: Արտաւազդին այնպէս թուռմ էր որ  
եղներով լծուած հասարակ կառքի գնացքի չափ  
յամիաքայլ է գնուռմ նստած երկաթուղին, այնքան  
հոգին աճապարում էր, եւ ձանձիր էին պատ-  
ճառում գնացքին ստէպ ստէպ հանդիպած ստա-  
սիօնները:

Ծոգեկառքի ծիննելոցվից դուրս ցայտկած մուխի  
նման երեւ ակացյութեան մէջ սեւ սեւ տեսարաններ  
էին ներկայանում: Մարկարէդը արդէն հարս էր  
եղել, ամէն բան վերջացել էր, կարելի է նորընափր  
ամսունոյն հետ մեղրալուսնի ճանապարհորդութիւն  
էր արած, նիքը շատ ուշ էր մնացել, մի ամիս առաջ  
շտապելու էր, եւ կամ Յուրիինից միկնած ժամա-  
նակը Մարկարէդը ոչ որի չըլստահանալով հետն  
առնելու էր.... միով բանիւ այս թափնակից մաս-  
ծութիւնները սաստիկ տանջում էին իրան: Գլուխը  
այնքան տաքացած էր որ սրբնթաց գնացքին պա-  
տուհաններից դուրս էր հանած քամիով զովաց-  
նելու համար: Գիտում էր աչքին առաջը տարա-  
ծուած հորիզոնը:

Ինքը թուռմ գնում էր դէպի ի Մարկարէդը,  
բայց սիրով տոչորուռմ էր երբ միտքն էր գալիս  
թէ ի՞նչ անելու էր եւ ի՞նչ պիտի լինէր վիճակը  
ևթէ թուռնը թուած եւ վանդակը դատարկ տես-  
նէր: Տիկին Հովմոնի նամակին պատասխան էլ չէր  
գրած, վախենալով որ մի գուցէ իր գալուստը  
հաղորդելով Մարկարէդի ամձւութեան փուլաց-  
ընելուն նցին իսկ նիքը պատճառ եղած լինի:

Աէս գիշեր էր: Վագոնում մի քանի ուղեւոր-  
ներ խոր քնյ մէջ խոկում էին:

Կախուանից կախուած մարդոց նման կղակնին  
կուրծքելուուն վրայ գրած, ոչ միայն գնացքի անիւ-  
ների շառաչիւնից, այլ թնդանօթների հարուած-  
ների շայներից անգամ զարթնելու կամք չունեցող  
քնալից խոկացողները շնչառ ութեան իւրաքանչիւր  
տուր եւ առին, շօգիացեալ գարեջրի գարշահոս  
գոլգիներ բուրելով, իսկ արթուն մնացաղներն էլ  
ամենաստորին ծխախտափ թանձր եւ զզուելի մոխոր  
տարածելով վագոնը մահապարտաց ստորերկրեաց  
քանտի էին վերածնել:

Խեղջ Արտաւազդը գրսից ուժգին փշող եր-  
թեւեկ քամիից էլ զգուշանալով չէր համարձա-  
կուռմ պատուհանը իջեցընել:

Շնչառութիւնը արդելուած, սաստիկ մի հազ  
էր սկսած եւ անտարակցոյ կըսեղգուեր եթէ բա-  
րեբախտաբար մի ստափօն չըհամնէին, որ տեղ 10  
վշրջեան գոնէ աղատ եւ մաքուր օգ շնչեց: Զան-  
գակը հնչեցին, կրկին մտաւ տանջանատեղին:

Առաւօտ չէր լինում:

Արտաւազդի անհամբերութիւնը վագոնի տաղաւազ կալից գրութեան հետ խառնուելով բռպէները ժամեր, ժամերը օրեր երեւում էին, սյնքան գիշերը երկարում էր և վերջն չէր գալիս; Արտաւազդը նախանձում էր խոկացողների բախտին, ինքն էլ փորձ փորձեց փոքր ինչ միավելու, գլուխը գրաւ մօտը պառկող յաղթանդամ մի մարդու բարձի շափ լցն թեւին վրայ:

Քունը այնքան աչքերիցը հօսում էր որ արտեւանութը իսկցին փակուեցան: Հաղին թէ 10 վայրկեան քունը տարել էր, բարձի տեղ ծառայող մարդը թեւը ուժգին վեր բարձրացընել ուղերով Արտաւազդին գլուխը վար ընկաւ, գլխին սաստիկ ցնցումից քունն էլ փախաւ, եւ սկսաւ կրկին տանջուիլ: «Քունը բարձ չի ուղեր, ասում է առածը, սասոյդ է, սակայն բացառութիւնն կազմողները հոգեապէս չարչարուողներն են: Այս տեսակները թուշուների փետուրից լցուած փափուկ անկողիների մէջ անդամ քնյոց քաղցրութիւնը չեն կարող վայելել, մանաւանդ սիրահարները:

Սի սիրահարի համար հանգիստ քուն ըրկայ մինչ իր սիրած առարկային տիրամալը: Բանաստեղծն ասում է որ մի սիրահար գլուխը մի բռպէ սիրուհւոյն կրծքին վրայ գնելով աչքերը կիսարաց փակելը՝ և գեմական դրախտի առաջն բնակիչ Ագամին Նւայի ձեռքից ընդունելով կերած հիմնալի ինձորին շափ քաղցրահարմ է....:

Ծոգեգնացը սարեր ձորեր պատում գնում էր ծիննելցոյն հուր մաւս եւ շոգի արձակելով,

կարծես տակը անիւներ գրուած հրաշտանչ մի լեռ լինէր: Այս բոլը ձայները, գլորդիւնները, շառաշիւնները Արտաւազդին բոլորովին քնահատ արին: Կա այժմ ուրիշ բան էր մտածում: Հորիզոնի վրայ աննշմարելի աղօտ մի սպիտակութիւն էր գցացել որ արշալցոսի աւետումն էր: Մի քանի ժամից յետպ առաւօտ պիտի լինէր, եւ ինքը հոգւով մարմնով վիւրցրուրկ պիտի մտնէր:

Ոիրահարութեան կրակը առաւել արծարծող մի բան կց եթէ, նա էլ նախանձն է: Այս կիզիւնախանձը Արտաւազդի սիրավառ եւ հրաբորուոք սիրուը բաղմապատիկ խորովում էր: Վագոնը մտած ժամանակը առջի բերան ճանապարհը երկար էր երեւում, իսկ այժմ որ վիւրցրուրկի մտեցել էր, սակայն ըդդիանալով եւ ենթագրել անգամ ըդկարովանալով թէ իրան համար ինչ տեսակ ապերացներկ տեսարան է պատրաստուած, իսկապէս պյու անծանօթ վարանական երկիւղի պատճառաւ չէր ուղում շուտով հասնիլ:

Ինք էլ չէր իմանում թէ ինչ էր կամենում: Տատանեալ էր ի մէջ երկնի եւ երկրի: Եթէ ձեռքիցը գար, գնացքին արագութիւնը պիտի յամիացընէր, որպէս զի ժամանակ ունենար ինչ անելիքին վրայ մտածելու, բայց գնացքը մօտալուտ ախտո ին հոտն առած ձիու նման ամբողջ ցիտովս ոլանում էր:

Տիկին չովմանին նամակին բովանդակութեանը համաձայն Մարկարէցը նյոյն առաւօտուն ամուսնանալու էր: Արդեօք ամէն բան վերջացած էր, եւ իրան «Պարոն! շատ կրցաւիմք, ուշ մնացիք»... պիտի

ասէին, կամ թէ այդ նամակով մի կատակ ուղեցել էին անել, որովհետեւ Մարկարէդը զուարձախօս եւ կատակասէր բնաւորութիւն ունէր, հաւանական էր որ նամակը յանկարծակի մի անշութիւն պատճառելու նպատակաւ նրա խորհրդով գրուած, նրա թէլադրութեամբը պատրաստուած լինէր:

Եյս վերջին ենթադրութեան վրայ Ըրտաւազդը աւելի հիմնուել էր ուզում: Թէպէտ հակառակ գէպքի տիտուր մտածութիւնները շարունակ երեւակայութեանը առաջ ներկայանում էին, բայց աշխատում էր մորքից վանելու այդ յուսահատական հաւանականութիւնները, աշխատում էր մանաւանդ սրտամաշ մոտանչութիւններից կարելի եղածին շափ հեռու կենալու, որովհետեւ դոքա կարող էին զինքը թուլացնել եւ արգելել իր արիարտութիւնը, որպէս գործածութիւնը կարելի է անհրաժեշտ պիտի լինէր կարիքը տեսնուած ժամանակը: Հետեւաբար Ըրտաւազդը ջանք արաւ հանդարտանալու, բաց ի թեթեւ մի յուզմունքից իր բոլոր առողջ գատողութիւնը եւ լըջմտութիւնը պահպանած էր:

Ըրտաւուը արգէն պարզուել եւ վիւրցբուրկի շինութեանց բարձր մասերը երեւնալու սկսել էին: Ըրտաւազդի սիրտը մի քանի անգամ ուժգին բարակնեց: Նախ սիրտն զգաց եւ կարծես իմաց տալ ուղեց սիրուհւցն մերձաւորութիւնը:

Մի աներեւցիթ զօրութիւն սիրտ էր տալիս Ըրտաւազդին թէ յուսաբեկ չըլինի, յաղթանակը իրան է, մանաւանդ Ըրտաւազդը բաւականի մին-

թարուում էր իր աղնիւ բարեկամ Մանուշակեանցին սրտահաց ապահովութիւնները յիշելով, չէր մոռացել նաև բարեսիրա Համբարձին սրտաթունդ մաղթանքները զոր թէպէտ չէր հասկացել, բայց անկեղծ սրտից բղանած լինելուն անկասկած էր:

Տակաւին կէս ժամ ճանապարհ կար քաղաքը համնելու: Ըրտաւազդը գրանից թղթակալը հանեց, գիտեց մի քանի բոպէ Մարկարէդի լուսանկար պատկերը: Գեղանի աղջկան աչքերը եւ գէմքի ընդհանուր գծագրութիւնը զուտ անկեղծութիւն եւ անապակ անմեղութիւն արտայայտում էին: Եյնպիսի մի գէմքի նկարագիրը հեռի էր պատրական խորամանկութիւնից, ուստի Ըրտաւազդը պատկերը ուշի ուշով գիտելով ինքն իրան թղյլ չէր տալիս Մարկարէդի մաքրափայլ գէմքի վրայ կասկածելու:

Պատկերը գարձուց, ետեւ գրուած էր այսպէս: “Յիշատակ անկեղծ սիրոյ եւ սուրբ երգման, իմ յոյժ սիրելի եւ ընտիր բարեկամ բարեծնունդ եւ աղնուասիրտ Ըրտաւազդիս”

Սրանից աւելի բնչ մեծ երաշխաւորութիւն կարող էր լինել:

Մթէ կարելի էր երկմիտ կամ թերահաւատ լինիլ այս տեսակ սրտաբուղը սիրոյ վկայութեան առաջ: Ըրտաւազդը այլ եւս յուսակորոյս չէր: Մարկարէդի պատկերը մեծ տպաւորութիւն գործեց վարանեալ երեւակայութեան վրայ: Խնքնիրան դատում վճռում էր ասելով թէ անպատճառ այս գէպքին մէջ մի թիւրիմացութիւն կար որ իր ներկայութեամբը պիտի մեկնուէր: Ի միջի այլոց սա

խորհրդածութիւնն էլ առելացնում էր որ Տիկին Հոփմանի գրած նամակին 7 օր պայմանաժամը վաճառականական լիոնանակաղը հատուցման ժամանակակիցի չափ իստ մի օրինապահութիւն չըլինել կարելի էր; 7 օր էր գրած, հաւանական էր որ այլ եւ այլ պատճառներով մի քանի օր յետաձգուեր եւ ամուսնութիւնը 10 օրից տեղի ունենար: Այս գիւրը ըստնելիք զրակացնութիւնները զգալապէսամնք եցին Վրտաւազգի արդէն հանդարտած սիրտը: Տակաւին ձեռքումը բռնած ունէր Մարկարէդի պատկերը:

Վիւրցըուրկի կայարանին հասնելու շատ սակաւ ժամանակ էր մնացել: Մարկարէդի պատկերը մի վերջին անգամ էլ Ըրտաւալդը կաթողին մի հայեցքով նկատելուց յետոյ թղթակալին մէջ դրած միջոցին մի ուրիշ թուղթ էլ աչքին դիպաւ: Քաշեց թուղթը.. ա՛չ! Բնչ քաղցր յիշատակի: Ինչ ցանկալից րոպէններ մտաբերեց: Վիւրցըուրկ ապրած ժամնակ գարնանային մի լուսնոյ դիշեր Մարկարէդի հետ ման էր գալիս անտառում: Ճառագայթաձիդ լուսնակի ճաճանչները պարտիղ վրայ սփոռուելով ծառերը արծաթազօծ բազմաշիւղ աշտանակների տեսքն էին առել: Պարտիղ կանաչազարդ օթոցը զմբուխտի նման շողոզում էր: Խրաբանչեր ծաղիկ երփներանգ գոհարեղէնների փայլին հետ ուղղում էր միցիլ: Այսպիսի մի հեշտավայրին արժէքը գնահատելու համար կամ սուխակ պէտք է լինել: կամ բանաստեղծ կամ մի զյդ սիրահար: Այսակն արդէն վաղուց պյն տեղ էր իր քաղցրաձայն երգերովը բնութեան ներդաշնակաւոր

ժողովին երաժշտական պակասը լրացնելու: Կորտերն էլիւանց ախորժալուր կարկաչնենները մենաշնուագ սոխակին գեղեղանաց անուշ ձայնին խառնելով գորիսաի գերն էին կատարում: Սպիտակափայլ երկայնավիլ սեւաշեայ կարապները խրոխտաբար սահուում էին պարտիղի լճակին մէջ, թաղնելով ջրի վրայ լուսնի շողով լուսաւորուած արծաթափայլ չետքերի տատանումները: Աերջապէս անմահ նկարին Այվաղովսիի վրձնին արժանի չքնաղատեսիլ բնութեան մի պատկեր էր ներկայանում պյն գիշեր:

Առ հասարակ սիրահարները ճաշակի տէր արարածներ են եւ իրանց բերնին համը շատ լաւ են հասկանում: Գեկտեմբեր ամսց մէջ բօթից Օտէսա ալէկոնեալ Սեւ ծովու վրայ ճանապարհորդութեան ժամանակ, շոգենաւի առաջնի գլուխի շքել սենեակ ներում և ոչ նազելիս! Էթէ գիտնայիր ողբան սիրում եմ զքեղու չէ կարելի ասել, որովհետեւ մինչ այս խօսքը արտասանելը մի քանի անգամ գետին կընկնի սիրահարը: Խոկ որքան անբաղդատակը քաղցրութիւն կայ լուսնոյ դիշեր մի անտառում կամ սիրոյ օրորոց համարուած վենեստիկի մի կոնտոլում երկու տարիածուների սիրոյ խստավանութիւնները վոխանակելու մէջ: Այս տեղ բնութիւնը հանդէս է գալիս իր բոլոր հարստութեան պաշարներովը:

Վրտաւազգը մի ակնթարթում յիշեց նյոյն գիշերվան Մարկարէդի ընկերակցութեամբը պարտիղին մէջ վայելած անպատում հաճցըթը: Զըկայ մի սիրահար որ քիչ թէ շատ բանաստեղծ չըլինի:

Թաղթակալին մէջ գտած թղթի կտորը նցն գիշեր  
վայ տպաւորութեանց ներքեւ պարտիզում իր հիւ-  
սած մի բանաստեղծութիւնն էր, բայց չէր յիշում  
թէ ինչ էր գրած: Բաց արաւ թուղթը եւ կարդաց  
հետեւեալ տողերը:

Ով դու Աստղիկ! սիրոյ Մանուկ աղքիւր շնոր-  
հաց եղեմական,

Մահացու է նետիդ հարուած դա խաղալիկ չէ  
մանկական.

Աղեղնաւոր սիրոյ հրեշտակի սէրն ահելքուղեղիդ,  
Նսիր աղերս սիրահարիս, կը պաղատիմ քեզ ան-  
մահիդ:

Ստացել եմ նետիդ վերքը մնացել եմ անօդ-  
նական,

Խնայիր զոհիդ վիրաւորեալ, տուր մի գարման գեր  
բընական.

Աիրոյ զեփիւոդ փըչ վերքիս որ կեանք առնում ես  
վերստին,

Շնորհիւըդ հրեշտակասին արժանանամ Մարկա-  
րէդին:

Արտաւաղդը վերջին տողը հաղիւ վերջացըրել  
եւ մի տեսակ վիրացական քաղցր թմրութեան մէջ  
էր ընկել, յանկարծ վագոնին դուռը ուժգին բա-  
ցուեցաւ եւ գմանիքտորը բարձրաձայն այնպէս մի  
“Ախւրցբուրդ” աղաղակեց որ հրացանաղարկ եղածի  
պէս նստած տեղից վեր թուչելով վագոնի դռնից  
դուրս ցատկեց:



Տիկին Հովմանի Արտաւաղդին գրած նամակը  
ոչ կատակ էր, ոչ սպառնալիք, այլ բառ առ բառ  
ճշմարտութիւն էր: Ընթերցողը կը յիշէ Մարկարէ-  
դի ի սկզբան ենթակայ եղած յուսահատութիւն-  
ները, անմիտար տիրութիւնները, Արտաւաղդի  
համար թափած արտասուքները: Կը յիշէ նաեւ որ  
ամը ողջ ընտանիքը Նպիփանի օժանդակութեամբ  
որքան ջանքեր էին անում Մարկարէդը համազելու,  
Արտաւաղդի յիշատակը սրտիցը ջնջելու եւ Եպի-  
փանի հետ միանալուն համար հաւանութիւնը ստա-  
նալու: Այնքան յորդորներ, այնքան խրատներ վերջ  
ի վերջը Մարկարէդին յօժարութիւնը առնելու  
յաջողել էին:

Բայց թէ ինչ տեսակ սրտի գոչունակութեամբ  
Մարկարէդը յօժարել էր Եպիփանի կին գաւնա-  
լու, կամայ էր, ակամայ էր.. Մասամբ իւիք ստի-  
պողականի ձեւն առած այդ ամուսնական ընտրու-  
թեան հպատակուելու մէջ Մարկարէդի հոգին  
համաձայն էր, ընդգէմ էր, կամ թէ այդ լոիկ  
մնջիկ, ժպիտը շրմանց վրայ Մարկարէդի ցցց տու-  
ած հանդարտասիրտ անձնութրութեան ներքեւ մի  
գուցէ մրկարեր նպատակներ թագցուած լինէին:  
Բոլոր այս հաւաննելի կարծիքները Տերէզի մաքին  
մէջ այնքան անդամ անց ու գարձ էին արել որ  
խելամիտ աղջիկը Մարկարէդին ցցց տուած հլու-  
հնաղանդութեան իսկ եւ իսկ արտաքուստ եւ կեզծ  
լինելուն վրայ բոլորովին համոզւած էր: Հետեւ  
աբար ինքը աղաղել էր մօրը որ Արտաւաղդին նա-  
մակ գրէ, եղելութիւնը հաղորդէ:

Տիկին Հովմանը այդ նամակը գրելով աւելի իր Տերէղ աղջկան թախանձանացը ունին գնելու կամեցողութիւն էր քան թէ Արտաւազդին յանդիմանութիւն գրելու որ եւ է մի ցանկութիւն, որով հետեւ Տիկին Հովմանը իր աղջիկը անազնուաբար մոռացողին մի տող անդամ՝ բան գրելը ստորութիւն համարելու չափ պատուասէր էր: Ուստինամակը գրելուց անմիջապէս յետոյ որոշմանը վրայ հաստատ մնալ ուղելով առանց մի օր յապազելու նցն կիրակի առաւտուն պսակը տեղի ունենալու համար ամենայն ինչ պատրաստել տուած էր: Մի շաբթուան մէջ Մարկարէդի հարսնցու պիտոյքները եւ այլ հազար ու մէկ կանացի ունայնութեանց աղիսամաղնը կազմոլ օժիտը կարգադրուած էր: Ամբակումանց Նպիփանն էլ իր փեսացու պատրաստութիւնները յանձն էին առած իր գորոցական բարեկամու հիները, մօցըլ եւ քոյրերը:

Տիկին Հովմանի կանխաւ տուած փողերին շնորհիւ Քրօադ, շապօ ա գըադ եւ ուրիշ կարեւորութիւնները կարողացել էր Հոգալ, որովհետեւ իր անձնական բիւտժէն ուսանողական կեանքի բիւտժէին հետ հաւասարակշին էր:

Տիկին Հովմանը հարսնեաց հանդէսը կարելի եղածին չափ համեստ եւ չափաւոր կերպով մնօրինած էր, հրաւիրելով միայն ՅՈ ի չափ ամենամեծաւոր ազգական ներ եւ բարեկամներ: Յետ պսակի արարողութեան ընթրիքը մերձակայս մի հիւրանոցում պատուիրուած էր, որ անդ հրաւիրեալք հարս ու փեսին կենացը բաժակները ծծելով “կեցցէներ” ի ձայնիւ սրահը պիտի գոռացընէին:

Տիկին Հովմանի տան մէջ, ինչպէս առ հասարակ ամէն հարսնեաց աներում, մի իրարանցում մի շարժում կար: Վրդէն եկած էին պսակի արարողութեան ներկայ գանուելու համար որոշուած հրաւիրեալ պարոնայք, նմանապէս կնքահայրը եւ վկայները:

Եկեղեցի գնալու համար հարս ու փեսի կառքերին մէջ բաղմելու սահմանուած տիկնայք եւ պարոնայք իրանց նստելիք տեղերը առաջուց ընտրում եւ նշանակում էին: Խոկ մի այլ սենեակում անբախտ Մարկարէդի հարսնեկան զգեստաւորութեան մանրամասնութիւնները յանձն էին առած իր գորոցական բարեկամու հիները, մօցըլ եւ քոյրերը:

Խեղճ աղջկան նիշարութիւնը պյերքան արագաքսոյլ յառաջցել էր, որ մի շաբաթ առաջ մարմնոյն վրայ մատէմատիքական չափերով ձեւուած սպիտակ մետաքսեայ հարսնազեստը լայն էր գալիս, որուն վերակարգելո՞ ժամանակ չըլինելուն համար անկարելի լինելով մեծ տիրութիւն էր պատճառում ընեային: Ընդհակառակը Մարկարէդը մի գառն ժաղիսով “Հոգ չէ, վաս չունի, այդքան տձեւութիւնը անշնմարելի է,, ասում էր:

Մարկարէդը բոլորովին համտարտ էր. կարծես երեխայների ձեռքում հագուեցընելու համար թողուած անկենդան մի պաճուճապատանք լինէր, այնպէս անշունչ մի խաղալիքի նման անտարբեր կեցած էր որ լաթերը հագցընեն:

Տերէղ քոյրը շատ էր յուզուած: “Կարնցնի ծաղկեայ պսակը Մարկարէդի գլխին վրայ տեղաւու-

րելու համար իր բնական շնորհքը կարծես կորուս սել էր, ձեռքերը դողդում էին, ոչ մի կերպով չեր կարողանում ծաղկեայ շամփրակը վայելապէս զետեղել Մարկարէդի սեւ մազերին վրայ:

Բարեսիրտ աղջիկը կետերը՝ տալու պատրաստ էր եթէ մի օր պսակը յետաձգէին:

Տակաւին յցս ունէր Արտաւազդից: «Նամակը ձեռքը համնելու վրայ անկասկած էր, բայց մի սոսկալի ենթալումիւն, այն էր Արտաւազդի հիւանդանալուն կարելիումիւնը. այս մտածմունքը հոգին հանում էր աղջկան: Մարկարէդը միայն նկատում էր Տերէզի սյլացլութիւնը, նա միայն կարդում էր Տերէզի խոռվայսը սիրտը:

Աերջապէս հագուեցըրին Մարկարէդին: «Ի՞նչ հարացած, գունաթափ, արեւը ցամքած, աննշյլեւ անշող աչքերովը սպիտակազգեստ Մարկարէդը աւելի պատանապատ մեռեալի էր նմանում քան թէ զուարժադէմ նոր հարսի:

Մեծ քցրը Ըննան՝ վերջին զարդ, բազմակոճակ երկայն սպիտակ ձեռնոցները Մարկարէդի ձեռքերին հագցըրած ժամանակ «սիրելի քցրիկ, ասաց, ի՞նչու ես այսպէս տխուր, երանի թէ ես ու Տերէզէլ քել չափ բախտաւոր լինէինք»:

Մարկարէդը ըսպատասխանեց, բայց քրոջ խօսքերին վրայ մի սարսուռ զգալով կրկին այն դառն ժպիտը երեւեցաւ գունատ շրթանցը վրայ. կարծես ուղում էր ասել քրոջը որ արած բարեմալթութիւնը նոյն իսկ ինքն իրան վրայ անդիտակցաբար անէծք կարդալ էր, որովհետեւ Մարկարէդը բախ-

տաւոր հարս չէր, այլ ըստիրած մի մարդու հետ ապրելու եւ եթէ երկար ապրէր, մշտնջնաւոր դժբախտութեան մատնուած դատապարտեալ մի թշուառի կեանք պիտի վարէր:

Փեսայ Եպիփանն էլ հագուած սգուած մեծ գործի վրայ էր: Ճարունակ գնում գալիս էր, վեր էր կլում, վար էր իջնում, դէս ու զէն հրամաններ, հրահանդներ էր տալիս: Մերթ գալիս էր Մարկարէդի մօտ մի քանի քազցրակարկաջ բառեր արտասանելու, մերթ Տիկին Հովմանին հետ էր խօսում, միանդամայն չէր մոռանում Ըննային եւ Տերէզին սրտահացյ կատակարանութիւններ անելու: Աերջապէս բերկրազուարձ երեւնալու աշխատում էր, որովհետեւ բոլոր այս երթեւեկը բանի եւ ցցյ էր: «Երբուստ Եպիփանի խղճի խայթը ծակում էր սիրտը: Արտաքրուստ երեւցած զուարթութիւնը զուտ կեղծիք էր: Մի անմեղի արիւնը թափող մարդասպանի նման արածին վրայ չափազանց զղջացել էր, սակայն եղածը եղած էր եւ զղջումը շատ ուշ էր: Ինքը տեսնում էր Մարկարէդի տանջանքը, շատ լաւ էր հասկացել Արտաւազդի տես Մարկարէդի միմեանց վրայ ունեցած սաստիկ սէրը, որովհետեւ ամիսներով կարգացել էր նրանց սիրահարական թղթակցութիւնները:

Ընազնուաբար խարել էր իր մտերիմ բարեկամին: Յայտ յանդիման տեսնում էր որ Մարկարէդը իրան չէր սիրում: Ապագան ոչինչ երջանիկ կենակցութիւն չէր խօստանում, բայց մի անգամ սկսել էր, այլ եւս չէր ուզում հրաժարուիլ, մին-

չեւ նպատակին համնիը պէտք էր չըթուլանալ եւ  
յառաջ գնալ: Աչ միայն Արտաւազդի մտերիմ  
բարեկամը, ինչպէս ինքն էր, այլ մի անհաշտ թըշ-  
նամի անդամ այնպիսի ստորութիւն անելու համար  
խիղը թըշլ ըսպիտի տար, մինչդիր ինքը այնքան  
անխղճաբար էր վարուած գէպի ի իր հայրենակիցը:  
Ինչպէս մեր վէպին նախընթաց տողերում գրեցինք,  
Խպիփանը լինելով մի իրաւաբան ուսանող, իրան  
համար մի փայլուն եւ ապահով ապագայ չէր տես-  
նում: Իւրաքանչիւր իրաւաբան բախտաւոր ըրինիր,  
եւ քանի որ հանգամանկները ցանկալի զուգադի-  
պութեամի նպատաւոր հանգիսացել էին իր առա-  
ջը, ուստի ներկայացած առիթ էն օգուտ չըքաղելը  
բացարձակ յիմարութիւն համարելով անձնափրու-  
թեան եւ շահախնդրութեան կըքերը յաղթել էին  
բարյական պարտականութեանց:

“Այսպիսի գէպենրում, առում էր ինքնիրան,  
առաքինութեան օրէնքները յարգող մի մարդուն  
մատով ցցյ են տալիս այնքան փարբամասն է, ու-  
րեմն ես ինչու մեծամատութեան ընեւուիմ, եւ  
բախտին շահաւէտ գալուստը անօգուտ առաքինու-  
թեամի յետո մղելու չափ յիմարանամ! ոչ!... ան-  
կարելի է, չըպէտք է թուլանալ... Եշխարհը միշտ  
այսպէս է եղել եւ այսպէս էլ կը մնայ: Հանապաղ  
ել եւ էջ անելու ենթակայ է: Կախ Արտաւազդը  
բախտաւոր էր, իսկ ես անբախտ! այժմ ես բախ-  
տաւոր, նա անբախտ!....”

Որբան էլ ինքնահամովիչ եղակացութիւն-  
ներով իրան գատաւոր լինում եւ անձը ար-

դարացընում էր, բայց եւ այնպէս տուած վճիռին  
անարդար լինելը չէր կարողանում ուրանալ:

Այս խղճաշարչար մտածութիւններն անելով  
աջ եւ աջեակ երկկարգ ծաղկանց արկղներով  
զարդարուած սանդուղներից յամբաքայլ վար էր  
իջնում: Ինչպէս Մարկարէդը հեռի էր նախանձելի  
չոր հարս լինելուց, Եպիփանն էլ նրանից պակաս  
անբախտ նոր փեսայ չէր: “Գող սիրու գող” ա-  
սում է առաջը, գողի նման սիրու հանդարտ չէր:

Մինչ այն րոպէն նպաստաւոր եւ յաջողակ  
պայմաններով ներկայացած պայծառ բախտին հո-  
րիզոնը այժմ մրրկածին սեւ ամպերի մէջ էր տես-  
նում:

Բախտը զարմանալի ինքնակամութիւններ ունի:  
Վահկանացուների երեսին կըդպտի, կըդգուե, կը-  
սիրէ, կըշցէ, ամենայն ինչ կըյաջողցնէ, մինչեւ  
որ բախտաւորեալը կարծէ թէ բախտը իրան սեպ-  
հականութիւնն է, մէկ էլ յանկարծ այնպիսի մի  
անակնկալ հարուած կըտայ որ բոլոր վայելչութիւնք  
մի ակնթարթում երազի նման կանհետանան: Այս  
բանից էր վախենում Եպիփանը: Ակամայ մի նա-  
խազդացում կարծես իմաց էր տալիս գէպերի վա-  
ղահաս մի մեծ յեղափոխութիւն:

Տան գլխաւոր գոան երկու թեւերը բացուած  
եւ առաջը կառքերը կանգնած էին:

Եպիփանը, ինչպէս ասացինք, խորին մտածու-  
թեանց մէջ ընկղմած առանց զգալու սանդուղների  
աստիճաններից իջնալով մինչեւ բակը հասել էր:  
Փողոցից անց ու դարձ անողներից հետաքրքիր ան-

Ճի՞նք կանդ առած գունից ներս էին նայում: Խոկ դրացի տների պատուհաններում զանազան հասակի պատկանող գլուխներ անհամբերութեամբ սպառում էին հարս ու փեսին եւ հարսնեւորներին դուրս ենելուն: Ծերունիները յիշում էին իրանց երիտասարդ անցեալ ժամանակի ամուսնութեան քաղցրութիւնը եւ ներկայ գառնութիւնը: Չափահատ պատանիք եւ աղջկունք Մարկարէդի բախտառութիւնը ցանկանալով ինքնուրցն մաղթանքներ անում եւ շատերն էլ իրանց մատակայ միութեան օրերը մի առ մի համարում էին:

Աղիկներից մինը հարցնում էր մի ուրիշին.

— Իօզա! Երբ է քու հարսանիքդ

— Տակաւին մի ամիս ժամանակ կայ, նշանածիս սպասում ենք որ համալսարանական վերջին քննութիւնը տայ: Խոկ գու Հերմին! աւելի վաղ, այնպէս չէ:

— Ն, յո, շատ շուտ, մի շաբաթից, պատասխանում էր Հերմինը ուրախալից աչքերով, կարծես բարեկամուհւոյն նախանձը ուղում էր շարժել, միանգամայն խրոխտանալ որ ինքը աւելի շուտով հարս լինելու էր:

Խոկ փողոցի վրայ սպասողների թուռում փոքրիկ աղիկներ վիճում էին Մարկարէդի ծաղկեփունջին որպիսութեանը վրայ: Մինը ասում էր որ ամբողջ փունջը կարմիր վարդ է, միւսը անդում էր թէ ոչ կարմիր չէ, սպիտակ է, ծաղկալվածոխի խանութումն էր տեսել: Խոկ մի այլ անկիւնում մի քանի հին ծանրաբարոյ թաղեցիք որոնք Տիկին Հոփմանի նցն թաղում հարս գալը գիտէին, լըջմտաբար խօս-

սակցում էին: Ծանօթ էին Արտաւազդի խոստացեալ լինելուն: Գեպքերի փոփոխութեան եւ նոր ամուսնոյ ընտրութեան վրայ միմեանց զարմանք էին յայտնում:

Մէկ էլ յանկարծ փոշոցի քարայատակը ջախչախնելու շափ ոյժով երկու ձիով մի կառք արագ ընթաց գէպի հարսնետան կողմը գլութելը տեսնուեցաւ: Զիերի պայտերը քարերի վրայ ուժգին զարնուելով կայծեր էին ցայտեցնում: Հետաքըրքիրը երկու կարգ բաժնուեցան կառքից զգուշանալու համար, կարծեցին որ ուշ մնացող մի հրաիրեալ է: Կառքը սաստիկ ընթանալոց չոկարողացան ձիշդ տան գուանը կանգնիլ, փոքր ինչ չեռուն կառապանը ձիերը սանձեց, կանգնեցաւ, գահիցը իջաւ, գուռը բացաւ, եւ կառքի մէջից դուրս թռաւ ճանապարհի զգեստով մի երիտասարդ:



Աւելորդ է ասելը, կառքից գուրս ելնող երիտասարդը Արտաւազդն էր: Գեպքը այնպէս էր տնօրինել որ Եպիփանը իր խորին մտածողութիւններն անելով մինչեւ փողոցի գուռն հասել էր, կարծես Արտաւազդը զիմանորելու եւ անակնկալ գալուստը շնորհառելու համար յատկապէս եկած լինէր:

Արտաւազդը տանը գոնից ներս մտաւ չըմտաւ ամենից առաջ Եպիփանը տեսաւ...

— Մէկ էլ տեսնես ըրլապայով  
Չեռին հադած շան կաշի  
Շուշի կտորը աչքին  
Լցո ընկաւ քյ առաջին.

Այսպէս էլ Խպիփանը սպիտակ ձեռնոցներով, ակնոցվ, սեւ շորերով, ձերմակ ժիշտով զէմն ելաւ Արտաւաղդին:

Եպիփանը հոգեհան հրեշտակի դէմ այնքան ըսպիտի վախենար, որքան սարսափեցաւ Արտաւաղդի կերպարանքից: Իր փիլխոսոփայական իրաւաբանական գատողութեանց մէջ Արտաւաղդի գալուն կարելիս ութիւնը բոլորովին չէր հաշուած: Պովտի կնոջը նման աղարձան գարձաւ, կեցած տեղը գամուեցաւ մաց, ոչ մի բառ կարողացաւ արտասանել եւ ոչ մի շարժում անել:

Արտաւաղդը Խպիփանին սյլայլութիւնը եւ շօրերը տեսնելով ի քթմէ էլ ական ամենայն ինչ գուշակեց, բայց հաշիւ պահնջելու ժամանակ չունեցաւ: Ահոելի մի ձայնով՝ “Ժշուառական,, աղաղակելով եւ իսենթի նման սանդուղներին երկու երեք աստիճանը մէկանց ցատկելով վեր բարձրացած միջոցին Մարկարէդն էլ պարոններով եւ տիկիններով շրջապատուած սանդուղների առաջին աստիճանից վար իջնելու լոսյ էր: Որովհետեւ Արտաւաղդը շափաղանց սրինթամբ մէնթամբ առաջին էր սանդուղներից, մինչեւ որ Մարկարէդը մի աստիճան իջել էր, Արտաւաղդն արդէն հասել էր սանդուղի գլուխը... Յանկարծ աչքը դիպաւ Մարկարէտին, բայց սաստիկ յուղմուքից հաւասարակշռութիւնը

Կորցըրեց եւ սոսկալի մի ձիչ արձակելով “Մարկարէդ!..” աղաղակեց եւ սանդուղի վերեւից վար գըւտորուեցաւ: Մարկարէդն էլ Ըրտաւաղդը տեսնելով ոչ պակաս ականջ խլայնող մի սուր ձայնով “Արտաւաղդ!” գոչեց եւ այն տեղ ընկաւ մարեցաւ: Սարսափելի մի խառնակոչութիւն տիրեց տան մէջ: Քարիլոննեան աշտարակի բանորների նման մինը միւսին խօսքը չէր հասկանում: Կախ Մարկարէդին խելքը գլուխը բերելու աշխատում էին, խեղձ աղջկան բերանը չէր բացուում: Ակայները սեղմուած էին: Ոգիներով քունքերը երակները շփում էին: Մարկարէդի այս երկրորդ անգամ ուշագծափ լինեն էր, բայց այս անգամինը սաստիկ էր, ցնցումը ուժգին էր, ինքն էլ արդէն շատ տկարացած լինելով այս երկրորդ հարուածին դէմտալու շափ ցուռնէր:

Այն միջոցին Արտաւաղդին էլ չէին մօռացել: Խնոջ աղին եթէ աստիճանների մէջ տեղում ըրունած շըլինէին, մինչեւ տանը բակը պիտի գլուռուէր: Սրան էլ վիճակը ցաւալի էր: Եւնքան ջղերը ցընցուել էին, որ սաստիկ ջերմի բռնուած մարդու նման դողում էր, ատամները կափկափելով, խեղդուկ ձայնով “Խպիփան! Ժշուառական! մատնիչ! գաղան! գաւաճան! քեզ անխնայ պիտի սպանեմ,, ասում էր:

Հրասիրելոց շատերը ճանաչում էին Արտաւաղդին: Մեծ գժուարութեամբ կարողանում էին հանգարտացընել, սարսափելի կատղած էր, “ո՞ւր է անպիտան սրիկան,, ասում էր բայց Եպիփանը շըկար,

նա Արտաւազդին տեսած բոպէին անհետացել էր՝  
ճշմարիտ էլ Խպիփանը մեծ խոչեմութիւն էր արել  
փախչելովը. եթէ Արտաւազդին ճամկն ընկներ ան-  
շուշտ սա կըխեղդէր նրան: Մարկարէդը վերջապէս  
ուշքի բերել եւ իր սենեակը փոխադրել էին:  
Աշքերը բացած բոպէին ո՞ւր է Արտաւազդը տե-  
սածս երան էր թէ իրականութիւն, կանչեցէք  
տեսնեմ: ասում էր:

Բայց նցն օրը երկու սիրահարները միմեանցից  
հեռի պահեցին, որովհետեւ մի երկրորդ ջղացին  
ցնցում կարող էր Մարկարէդի վիճակը վատթա-  
րացընել: Կմանապէս Արտաւազդը Մարկարէդին  
ուզում էր տեսնել, սակայն երկու խօսքով էլ կա-  
րողացան Արտաւազդին համազել, որովհետեւ ի՞քը  
բժիշկ էր, գիտէր ինչ կըհետեւէր ջղերի արտաքչ  
կարդի ցնցումից:

Մի քանի ժամ՝ առաջ Տիկին Հոփմանի տունը  
հարսանեաց տուն էր, այժմ հիւանդանոցի էր  
նմանում: Մարկարէդը հիւանդ էր: Արտաւազդը  
յոդնած դադրած եւ սանդուղներից  
վար գլըրուած ժամանակ ոսկրները ցաւցըրած էր:  
Հրաւիրելց շատերը հեռացել էին, մնացել էին  
միայն մի քանի մերձաւոր ազգականներ: Տիկին  
Հոփմանը, Աննան եւ Տերէզը փոփոխակի Մարկա-  
րէդի եւ Արտաւազդի սենեակները գնում դալիս  
էին: Տերէզին ուրախութեանը չափ չըկար, նա  
Մարկարէդից աւելի երջանիկ էր, որովհետեւ դէպ-  
քերի գովելի վախճանը իր հեղինակութեան հե-  
տեւանքն էր: Արտաւազդի յանկարծակի գալուստը

տան մէջ այնքան աղմուկ պատճառել էր որ գուանը  
առաջը խոնաւող ամբոփին կարծառու մի մեկնու-  
թիւն տալ հարկ եղած էր նրանց յուղեալ հետա-  
քրքրութիւնը հանգարաւուցընելու համար:

Նցն օրը այնպէս անցկացաւ: Առաւառուն հիւ-  
անդները լաւացել էին: Աերը բժշկապետ է, հրաշ-  
քներ գործելու կարող:

Առ հասարակ սիրահարութեան մէջ մարիլ  
մարմըրիլ, ուշամթափ լինել, այս տեսակ տկարու-  
թիւնները բազեական եւ վազանցուկ են գարեջօփ  
փրփուրի նման:

Երկու հիւանդներ Տերէզի գեսպանութեան  
միջոցաւ միմեանց վիճակին վրայ զոհացուցիչ տեղե-  
կութիւններ առնելով առաւել կազդուրուել էին:

Հարկ չըկայ ասելու որ ամենայն գաղտնիք  
պարզուել եւ յացանուել էր: Խպիփանի դաւա-  
ճանութեան զոհ էին եղել երկու սիրահարք: Տի-  
կին Հոփմանը Արտաւազդին ձեռքը իւր ձեռքին մէջ  
սեղմած ասում էր:

— Աիրելի զաւակ! գրած նամակս անիրաւ  
էր, հաղար ներողութիւն, որքան անարդարութիւն  
էր իմ կողմանէ, որ փոխանակ քեզ միմիթարելու,  
եւ աղջկան վրայ ունեցած անկեղծ սէրու երախ-  
տագիտութեամբ փոխարինելու, քեզ այնպիսի  
կծու լեզու գործածեցի, բայց գէպքերը ինձ ստի-  
պեցին այնպէս կարծելու:

— Ընդհակառակը, մայրիկ! պատասխանեց Ար-  
տաւազդը, ես ձեղանից չնորհակալ եմ. չըկայ չարիք

առանց բարեաց, առանց ձեր նամակին այժմ ամեն  
բան վերջացած պիտի լինէք:

— Կամ լւա եւս առանց Տերեղիս կորովամ-  
տութեանը պէտք է ասել, յարեց Տիկին Հովհաննը,  
որովհետեւ ասաց, Տերեղը պատճառ եղաւ այդ  
նամակին գրուելուն եւ Խպիտանից էլ ծածուկ պա-  
հելու խոչեմութիւնն էլ շրմուացաւ:

— Այնպէս չէ մայրիկ, որբան լւա էի մասձել,  
ասաց Տերեղը, մօքը վզին փաթաթուելով եւ երես-  
ները համբուրելով:

— Այս աղջիկ, ասլիս, երջանիկ լինիս, ա-  
սում էր Տիկին Հովհաննը, Տերեղին խանդաղատա-  
լից համբըներ տալով:

— Ես էլ քեզանից շատ եւ շատ շնորհակալ  
եմ սիրելի Տերեղ, ասաց Արտաւազը, գու ի՞  
բարի հրեշտակն եղար, բայց Մարկարեղը ի՞նչպէս  
կարողացաւ ինձ մոռանալ մի ուրիշի կին դառնա-  
լու համար, սա ինձ համար անբացարելի է:

— Մենք ենք մեզաւոր, պարօն Արտաւազը  
պատասխանեց Աննան, որ մինչ այն բոպէն լուս էր  
կեցել, մանաւանդ ամենից առաւել ես ինքս էի  
Մարկարեղին համզղելու նախանձախնդիր, ներե-  
ցէք ինձ, որովհետեւ ես հաստատ կարծեցի որ  
գուք բոլորովին մոռացաք Մարկարեղին, ես այնքան  
ձեղ մեղադրեցիք որ վերջապէս Մարկարեղը յօ-  
ժարեցաւ Խպիտանին կին դառնալու:

— Բայց ինչպիսի յօժարութիւն. բացադաշեց  
Տերեղը, գուք չարաչար սիալուեցաք, նորա դառն  
ժպիտը չընկատեցիք. ես ձեղ հետ գրաւ կըդլում

որ Մարկարեղի հաւանութիւնը խորհրդառոր եւ  
սոսկալի մի գիտաւորութեան քօղով ծածկուած էր,  
որուն չոգիտեմ ինչ տեսակ ողբերգութեամբ վեր-  
ջանալիքը գոնէ միայն ես կարողացայ թափանցել,  
կրկին կըպնդեմ որ Մարկարեղը ունէր մի քստը-  
նելի նպատակ, քանի որ այժմ ամեն բան վերջա-  
ցած է, երբ Մարկարեղը մերկացընէ եւ խոստո-  
վանի մէ ի՞նչ անելու էր Խպիտանի կին դառնա-  
լուց յետոց, այն ժամանակ պիտի սարսապը հաս-  
կանալով որ գուք ինքներնիդ Մարկարեղի գահիճը  
պիտի լինէիք: Ճշմարիտ էլ քաջահմուտ մի հոգեբանի  
չափ Տերեղը բնականից օժտեալ էր հոգեբանական  
հասկացողութիւններով, եւ ասածները չափազան-  
ցութիւն չըլինելուց զատ կարելի էր զուտ ճշմար-  
տութիւն բովանդակէր:

— Այդէ այնպէս մի բան պատահէր, ինձ հա-  
մար էլ կեանքը այլ եւս աւելորդ կը լինէր ասաց  
Արտաւազը:

— Ոչ, ոչ, անկարելի է, Արտաւած բարի է,  
այդքան անհանգուրժելի պատուհաններ չեր տեղաց-  
նէր իմ դիլին, բացադաշեց Տիկին Հովհաննը, Մար-  
կարեց զիս անմիմիթ ար սկզ չէր դատապարտեր:

— Մայրիկ! ասաց Տերեղը տեսէր որբան տիտուր  
է որ Արտաւազը, գնանք Մարկարեղի մօտ, նրանց  
ուրախութեանը մենք եւս մասնակից լինելով փառք  
տանք Նախանձամութեան որ ինայեց մեզ եւ ազա-  
տեց աղետաբեր մի վտանգից:

— «Գնանք ուրեմն... բայց գոնէ իմաց տայնիք  
Մարկարեղին որ յանպատրաստից յանկարծ տես-

Նելով Արտաւազդին կրկին ուշամափ չըլինէր»,  
յարեց Տիկին Հովմանը:

— Եա սպատրաստ է արդէն, սպասում է Ար-  
տաւազդին, ոչինչ վտանգ չըկայ, ասաց Տերէզը, և ւ  
Արտաւազդին թեւը մտնելով ամէնքն ի միասին  
գնացին Մարկարէդին սենեակը: Միբահարները առ  
հասարակ նախ քան իրանց սերելիները տեսնելիս,  
մի շատիօքեր, բառեր, ոճեր կը յօրինեն, կը շարադ-  
րեն պատշաճապէս արտասանելու համար, բայց մի  
անգամ դէմ եկան, ամեն բան կը մտնաման:

Այեպէս էլ Արտաւազդը մտաւ Մարկարէդին սե-  
նեակը: Խրկու սիրահարք խուճապելով միմեանց ձեռ-  
քերը սեղմցին, Մարկարէդ! Արտաւազդ! բառերը  
լսուեցան միայն: Արտաւազդը առաջին անգամ հար-  
ցաքնութիւն տուող աշակերտինման բոլոր ասելիք-  
ները մոռացել էր: Գոյական, ածական, բայց, մակրայ  
վերջապէս խօսք շնորհելու համար բոլոր քերականա-  
կան գործիքները պակսեցան: Միայն Մարկարէդին  
երեսին էր նայում առանց մի ուրիշ բառ արտա-  
սանելու: Մարկարէդին էլ լսու էր, նա էլ Ար-  
տաւազդին աչքերի մշջն էր նայում:

Բայց երկուսին հայեացքները արդէն շատ բա-  
ներ էին ասում:

— Միբելի Մարկարէդ! վերջապէս կարողացաւ  
ասել Արտաւազդը, որպիսի անգութ խորամանկու-  
թեան մատնուած էիք, քո երկար լուութիւնը,  
ինձ մաշեց, իսկ ամուսնութիւնդ աւետող նամակը  
մաղ մնաց ինձ սպանէր, բայց ամենքը մոռացայ

որովհետեւ քո նախակին անկեղծ սիրոց Ճշգրիտ  
արձագանքը գտայ այս տեղ:

— Եմէ քց մեռնելուդ մաղ էր մնացել, իմ  
մայքը անխուսափելի էր-պատասխանեց Մարկարէդը  
շրջազգեստի գրապանից փաքրիկ մի սրուակ դուրս  
հանելով, որուն մէջ կապոյտ մի հեղուկ կար:

— Ի՞նչ բան է դա! աղաղակեց Արտաւազդը:

— Հակակը լի մի մարդու հետ չափրելու-  
համար փրկարար մի միջոց, այսինքն 500 ֆոսփոր  
լուցիների գլուխներից բաղադրուած մի թոյն, զոր  
պէտք է ընդունէի պասկից վերագարձած ժամա-  
նակս-պատասխանեց Մարկարէդը:

— Վստուած իմ! բայցագանչեց Արտաւազդը  
Մարկարէդի ձեռքից սրուակը յափշտակելով: Վս-  
տուած իմ! որպիս մէծ է արդարութիւնդ որ իջըլ  
չըտուիր սեւ հողի տակ ծածկելու թէ ինձ թէ  
Մարկարէդին:

— Երկինք! աղաղակեցին միարերան Տիկին  
Հռովմանը եւ աղջիկները, որպիսի անդարմանելի  
գժբախտութեան զոհ պիտի գնայինք:

— Հասկացաք այժմ, հարցըրեց Տերէզը, որ ես  
կատարելապէս իրաւունք ունեի հաւասաք ընծայե-  
լու նախընթաց գեպքերին եւ Մարկարէդի տուած  
վերջին հաւասութեանը: Այժմ որ Կախախնամու-  
թիւնը այլապէս տնօրինեց, ուստի շնորհաւորենք մեր  
երջանկութեան վերագարձը. եւ բարեբաստիկ ա-  
պագայ մաղթենք մեր վերածնեալ ամուսիններին: Տե-  
րէզը այս ըրբարեմաղթութիւններով չըրաւականա-

ցաւ : Արած մաղթանկքները համեմելու համար Մարշկարէդին ընդգրկելով սկսու գգուասէր համրյուներ տեղացնել գլխին, ճակատին, պյտերին, քթին բերնին վրայ : Համբցրները այնքան ստէպ էին որ Մարկարէդը առիթ չէր գտնում փոխարինելու Տիկին Հոփման էլ շարունակ Տերէզին էր համրուրում : Արտաւազդը պարապ ըմմալու համար Մարկարէդին ձեռքերն էր համբուրում : Ըննան էլ փոփոխակի Մարկարէդին, Տէրէզին եւ մայրիկին համբոյներ տալիս էր, եւ այս շիթոնկքների շփրոցը տակաւին երկար կըտեւէր եթէ աղախինը դուռը բանալով իմաց ըստար պանդոկապետին գալուստը որ եկել էր Տիկին Հոփմանին հարցընելու թէ ինչ անելու էր մի օր առաջ պատուիրուած եւ արդէն պատրաստուած ընթրիքը :

Տիկին Հոփմանը այնքան գոհ եւ ուրախ էր որ ընթրիքը յետաձկել ըրկամենալով վերստին 30 ի չափ բարեկամներ հրաւիրեց եւ այն երեկոյ մեծ խնդացութեամբ տնեցին երկու նշանածների երջանկութեան վերածագումը :



Արտաւազդին Վիւրցբուրկ հասնելուն եւ վերցիշեալ գէպերին տեղի ունենալուն երկրորդ օրն էր, մինչ ցարդ Խպիփանը ոչ մի տեղում չէր երեւացել. կարծում էին որ բոլորովին հեռացել փախել է. Քաղաքում ոչ գէր տեսել նրան:

Բայց Խպիփանը Վիւրցբուրկ էր, ուր փախչէր, ի՞նչ անէր, ինքն էլ շուարած չէր իմանում ինչ անելլքը : Չախող բախտին առաջին հարուածը ստացել էր, տակաւին երկրորդին, երրորդին էր սպասում : Եղբայրասպան Կայէնին նման թափառական բոլոր օրը ման էր գալիս անտառներում, գաշտերում, իսկ գիշերը ուշ ժամանակ տուն էր գալիս պառկելու, այսինքն անկողին մէջ մանելով արշալցին սպասուլու, օրովհետեւ Արտաւազդին սպասոնալից դէմքը տեսած օրից ի վեր աչքումը քուն չէր մտել : Արտաւազդը հացկերցիմի յաջորդ առ աւատուն Խպիփանի Վիւրցբուրկ լինելը իմանալով եւ հասցեն տեղեկանալով Մարկարէդից ծածուկ հետեւեալ նամակը գրած էր :

Պարոն!

Որքան էլ ձեր վարմունքը գէպ ինձ անաղնիւ ստոր եւ անվայել էր, բայց եւ այնպէս յցս ունիմ որ ինձ գէմ ձեր ունեցած պատույ պարտքը հասառցանելու չափ գոնէ մի կաթիլ աղնիւ արիւն մնացած է ձեր երակների մէջ : Ուստի զէնքերի ընտրութիւնն արէք եւ ձեր վկայներով հանդերձ եկէք վաղն առաւօս մեղ ծանօթ անտարին ամայի տեղը, ուր տեղ ինձ եւս պիտի գտնէք ժամը 8ին իմ վկայներով : Յայտնի բան է որ մեր մենամարտութիւնը լինելու է մահուան պայմանաւ :

Կսպասում ձեր պատասխանին.

Արտաւազդ :

Եթէ Մարկարէդը Արտաւազդին մենամարտի հրաւ. էրը իմանար, վերստին լացեր, կոծեր պիտի

սկսէին, ողբերգական տեսարանները պիտի կրկնուելին, բայց Արտաւազդը այնպիսի ճարտար խոչեմութեամբ լրիկ մնջիկ տնօրինել էր որ ամեն բան գուշակելու մէջ տաղանդ ունեցող Տերէքն անգամ այս անցքից բոլորովին անտեղեակ մնաց.

Արտաւազդը շատ էր յուզուած բայց ոէմբը հանդարտ պահած էր չըմասնուելու համար։ Այս մենամարտութիւնը պիտի լինէր իր կենաց թատրերգութեան վերջին արարուածը։

Ճաշից յետոյ նստած էր ժամագիր եղած ոըրձարանում, ուր տեղ Եպիփանը նամակին պատասխանը ուղարկելու էր։ Սրճարանում ըստիր կարգացած ժամանակ զանալան լուրերի կարգում “Մոլորեալ ռընարին գալուստը” վերնագրով հետաքրքիր մի յօդուած տեսաւ, որ հետեւեալ տոշղերը պարունակում էր։

“Անցեալ կիրակի առաւօտ Տիկին ք... ի տունը գումարուել էին հրաւիրեալք, Օրիորդ ք... և Պարոն ք... ի հարսանեաց առթիւ։ Զարս ու փեսան եւ հարսնեւորք եկեղեցի գնալու համար հազիւ սանգուղներից վար իջնելու սկսել էին, յանկարծ թնդանօթի ոռումի նման ուղալսնով ընկաւ սրանց առաջը մի երիտասարդ, որ շատ պատեհ ժամանակին վիէննայից աճապարանք եկել հասել էր՝ իրան վաղուց խոստացուած նաղելի նշանածը պահանջելու։ Վանրաման հանդիպնեալ էր միավանակ մի մասնութիւն էր, բոլորի նամակատարը մոտ արձարան եւ յանձնեց մի նամակ։

Կայսենութիւնից ամենայն ինձ ստուգուելով պատկը յետաձուեցաւ, եւ հարսանեաց հացկերցիթը մուլորեալ ոչխարին վերադարձը տօնելու սահմանուեցաւ։ Կրիտասարդին մի ժամ յապաղումը բաւական էր ամեն բան վերջացած զանելու։ Այս դէպքը կարող է մի գաս լինել այն տեսակ ծնողաց, որոնք խոստացեալ բացակայ փեսայիներ ունենալով, նրանց մասին առանց պէտք եղած ծզրիս տեղեկութիւններն ստանալու իրանց աղջիկները անխօնէ մարտրուիչի հետ ամուսնացընելու կրփութան, ի վտանգ բազմատեսակ գժրախտութեանց, որոնց մեծագոյն մասը սոսկալի ողբերգութիւններով կրվերջանան։

Արտաւազդը խկոյն հասկացաւ որ մնորեալ ոչխարը ինքն էր։

Ոի քանի անգամ էլ կարգաց յօդուածը։ Հազիւ վերջացընել էր, փողոցինամակատարը մոտ արձարան եւ յանձնեց մի նամակ։

Կամակը մենամարտական հրաւէրին՝ Եպիփանի գրած պատասխանն էր։

Արտաւազդը բացաւ նամակը։ Ստորագրութիւնը Եպիփանին էր։ Բոլորնդակութիւնը փոքրինչ երկար երեւաց Արտաւազդին։ Վենամարտութեան մի հրաւէրի պատասխան այնքան բան գրելու հարկ չըկար։

Այսպէր էր գրուած նամակը։

Պարոն Արտաւազդ!

“Չեղ գէմ իմ արածն այն աստիճան աններելի մի մատնութիւն էր, որոյ համար ձեր մենամարտական հրաւիրագրի մէջ ինձ վերաբերմամբ գործած-

ուած ածականները թեթեւ են, որովհետեւ եռ  
հրէշ կոչուելու արժանի եմ: Զէկերի ընտրու-  
թիւնը ինձ էք թողուցել: Ես ձեղ գէմ զէնք  
բարձրացընելու արժանիքն էլ չունիմ:

Հաւասիկ ընտրածո զէնքը: Ենթազրեցէք որ  
մենք ըստ Ամերիկական մենամարտութեան վլճակ  
խաղացինք, եւ մահուան սեւ նշանը ինձ ընկաւ.  
ուստի այս բռպէից կեանքս ձեղ կըպատկանի, հրա-  
մայեցէք. մեռնելու պատրաստ եմ... մի պայմանաւ  
միայն, պէտք է ինձ ներէք, որպէս զի հանդիսաւ  
մեռնիմ:

Գոնէ այսքան գթասիրտ կըւինիք մահուան դա-  
տապարտեալ մի վաղեմի ընկերի վերջին ինդիբըը  
կատարելու համար:,,

Եպիփան:

Արտաւազդը ճանաչողները գիտցան արդէն ինչ  
աղնիւ սրտի տէր լինելը: Ուստի ներեց Եպիփանին  
եւ արգելէլով անձնասպանութիւնը, թշլ տուաւ  
որ ապրի:

Այլ եւս Արտաւազդի համար խոչնդուտ չըմնաց:  
Մենամարտութեան վերջին վտանգն էլ անց էր կա-  
ցել: Եպիփանը ներումն ինդրելով Արտաւազդը  
պատուց հատուցումն ստացել էր: Հետեւաբար,  
նցն օրը ճաշից յետց, ալիքն չոփմանի տանը, ի  
ներկայութեան Մարկարէդի եւ ուրիշ մի քանի  
բարեկամաց: Արտաւազդը Եպիփանի նամակը հրա-  
պարակաւ կարդաց:

Ներկայք գովարանեցին Արտաւազդի աղնիւ  
պատուասիրական զգացմունիքները, մանաւանդ չա-

փաղանց չատագովեցին ներսողամիտ անցիշաւարու-  
թիւնը, զօր ցցց էր տուել Եպիփանի վերաբերմամբ:  
Մինչեւ անց ամ տիկինն Հոփմանի բախտաւորութիւնը  
չնորհաւորեցին Արտաւազդի նման վեհանձն մի  
փեսայի ընտրութեան առթիւ: Այնպիսի ընտիր մի  
փեսայ միայն կարող էր Մարկարէդի երջանկութիւնը  
ապա հովցընել:

Մարկարէդը լսելով Արտաւազդի մենամարտու-  
թեան ուրախասութիւն վախճանըր, չըգիտէր ի՞նչ կեր-  
պով օր հնաբանէր Կախախինամութեան այս չնորհը:  
Խոկ Տերէ զը մենամարտութեան տեղի չունենալուն  
համար թէպէտ անսահման ցնծութիւն էր զգում,  
բայց մի գժկամակութեան մէջ էր, թէ ի՞նքը ի՞նչ-  
պէս չէր կարողացել յառաջադցն իմանեալ Ար-  
տաւազդի մենամարտութեան որոշումը:

Արտաւազդը արդէն վաղուց ասած էր իր տ-  
պաւնի զգանչին, որ Մարկարէդի հետ պսակուիլը  
անպատճառ Սոսկվայում իր քահանաց տէր հօրը  
տունը կատարուելու էր, որովհետեւ հայրը նահա-  
պետական վաղեմի սովորութիւնները յարգում օրի-  
նապահ մի անձնաւորութիւն լինելով, թշլ չէր  
տար, որ որդին օտար աշխարհում առանց իր հօրե-  
նական օրհնութեան ամռունանց: Ուստի Արտաւ-  
ազդը Տիկինն Հոփմանին կրկին յիշեց յիշեալ ծի-  
սակատարութեան անհրաժեշտ կարեւորութիւնը:

Ուրիշ կերպ անկարելի է, ասաց Արտաւազդը:  
Ես հարցաքննութիւնս վերջացընելով բժշկական  
վկայագիրս առնելու համար մի քանի ամիս էլ  
վիէննայում մնալու ստիպուած եմ: Այժմ Մար-

կարէկի հետ կըմեկնիմ Ալիքնաս, այնուհետեւ ի  
միասին կըգնանք Մոսկվա պսակուելու համար:

— Սիրելի Արտաւազդ! ուրեմն նորից պիտի  
բաժանուիք, ասաց տիկին Հռփմանը վշտագին մի  
ձայնիւ:

— Այո... այսինքն վերջը կրկին միանալու  
պայմանաւ, պատասխանեց Արտաւազդը, որպէս Հետեւ  
նախ քան Մոսկվա գնալս, ես ձեւ կըդրեմ, Ալիքն-  
աս կը գաք եւ ի միասին կըճանապարհորդենք, գուք  
եւս ներկայ կըդանուիք մեր պսակին:

— Ես ել կըդամ, ինձ ել տարեք, բացագ ան-  
չեց Տերեզը:

— Այո, ամենքս ել միատեղ գնանք մայրիկ!  
ասաց Աննան:

— Համբերեցէք զաւակներս, ասաց տիկին  
Հռփմանը. մեր ամենքիս սրտի ուրախութիւնը  
Մարկարէդի եւ Արտաւազդի միութիւնից կախում  
ունի: Կախ նրանք գնան պսակուին, մեր ճանապար-  
հորդութիւնը երկորդական է, վերջը գրա վրայ  
կըմտածենք, այնպէս չէ աղջիկս, հարցընը տիկին  
Հռփմանը Մարկարէդին:

— Քո կամքու մայրիկ, ինչպէս ուզում ես  
այնպէս տնօրինե, պատասխանեց Մարկարէդը, ինձ  
համար մի եւ նցին է, բաւական է որ Արտաւազդի  
հետը լինեմ, նրանից չըբաժանուիմ:

— Ես ել նմանապէս, սիրելի Մարկարէդ, ասաց  
Արտաւազդը, այսուհետեւ չեմ կարող մի բոպէ  
քեզանից հեռի ապրիլ:

Խրաք էլ այդ գժնգակ գեպքերից Արտաւազդի  
հոգին այնքան հրկիվալ էր, որ այնուհետեւ սուրբ  
Անտօն անապատականին անգամ Մարկարէդը յանձ-  
նելու վստահութիւն չունէր, չար սատանային փոր-  
ձութիւնները մոտաբերելով: Միթէ նցին սատանան  
չէր, որ Եպիփանի փորումը մանելով այնքան չար-  
չարանք քաշը տուած էր Արտաւազդին, եւ նցին  
սատանան՝ յաջող մի գեպքի շնորհիւ Եպիփանի  
փորիցը գուրս երած էր. որովհետեւ Արտաւազդը  
լինելով բժշկական ութեան վարդապետ, շատ լաւ  
գիտէր որ մարդու փորումը մուած սատանան ամե-  
նազօրեղ լուծողականով անգամ չէր կարելի գուրս  
հանել:



Արտաւազդը ակամայ մի շաբաթ Ախրցըուրկ  
մնալու Ստիպուել էր: Այնքան իրաբանցումներ եւ  
սրտերի խոսվութիւններ արգելք էին եղած եւ չէր  
կարելի իսկըն ճանապարհորդել: Բնականաբար  
սպասել էր խառնակութեանց հանդարտանալուն:  
Ութ օրվայ մէջ շնորհիւ իր ներկայութեան բոլոր  
ալեծածան սրտեր, մաքեր խաղաղացել էին, հետեւ  
աբար կարելի էր մէկնիլ:

Մի կիրակի առաւեւս երկաթուղիի կայարանում  
կրկին սկսել էր համբոյների տուր եւ առը:

Արտաւազդ եւ Մարկարէդին գեպ ի Ալիքնա-  
բարի ճանապարհ բարեմաղթելու համար կայարան

Եկող Տիկին Հովմանի, Ըննայի, Տերէզի և այլ  
մերձաւոր բարեկամաց շրմունքների շիրտոցն էր,  
որ նմանում էր աշնան արշալցոն աւետով Ճնճը-  
ղուիների ճռուսումներին: Այն առաւօտ աղաւ-  
նիների կտուցների նման շրմունքներ շարունակ  
միմեանց կպչում, իսկ բերաններից անդարդար յոր-  
դառաւատ մաղթանքներ էին բղնում: Հրաժեշտի  
գառնութիւնը մասամբ իւիք քաղցրացնող այս խան-  
դաղատանքը տակաւին երկար կրտեւէր, երբ յան-  
կարծ շոգեկառքին կարծես համբերութիւնը հա-  
տաւ, եւ նա էլ իր սուլիչ շնչափողից սուր մի ձիչ  
արձակելով սլացաւ գնաց եւ պապիսեաւ վերջ  
տուաւ անվերջանալի համբցրներին:

Արտաւազգը բառին բուն նշանակութեամբը  
երշանիկ էր: Աշխարհ իրանն էր, որովհետեւ ինչ  
նախընթաց տողերում յիշած էինք, Արտաւազգի  
համար աշխարհը Մարկարէդն էր:

Ախ! Մանուշակեանց! Աստուած քո արեւը  
պահէ! ասում էր ինքնիրան: Որովհետեւ նա ասած  
էր “Արտաւազգ! Մարկարէդը քուկդ է, մի վա-  
խնանար”: Իրօք էլ Մարկարէդը ուրիշնը չէր: Ար-  
տաւազգը նցն բոպեին Մանուշակեանցի բերանը  
համբուրելու անյագ մի փափաք էր զգում, վասն  
զի նա էր մարդարէացել եւ ասածը իրագործուել  
էր.. Մարկարէդը իրան մօտն էր.. վագոնում, քով  
քովի նստած: Սա երազ չէր, իրականութիւն էր...

Ախ! Մանուշակեանց Աստուած արեւդ պահէ!  
Կրկնում էր Արտաւազգը, քեզանից շատ շնորհա-  
կալ եմ, քեզ նման բարեկամ ունենալը գանձ է,

ասելով նայում էր Մարկարէդի երեսին, որուն վըայ  
նոյնակա կարդացուում էր անմերի երջանկութեան  
դրոշմը:

— Ոչ! որքան երշանիկ եմ սիրելի Մարկարէդ!  
ասում էր Արտաւազգը, այժմ կեանքը ինձ քաղցր  
է, սիրով ուրախութեամբ ուզում եմ ապրել:  
Այժմ կեանքս թանկագին է, որովհետեւ զու մե-  
ծագին գոհար ես, եւ ինձ հետ ապրելու սիրալիր  
յօժարութեամբ աննշան կեանքիս արժէքը անհա-  
մեմատ բարձրացուցիր:

— Վիթէ ես եմ միայն այդ գոհարը, պա-  
տասխանում էր Մարկարէդը, միթէ կարելի է  
գնահատել քոյ սրտի աղնուութիւնը որ աշխարհիս  
բոլոր ականակապ զարդերից էլ զերադաս է ինձ  
համար:

— Շնորհակալ եմ սիրելիս, ասում էր Ար-  
տաւազգը Մարկարէդի ձեռքը իրանին մէջ սեղնե-  
լով, զոնէ կաշխատիմ պյու հետեւ քոյ ցցոյ տուած  
համակրութիւնդ արժանաւորապէս փոխարինելու,  
այն ժամանակ պիտի տեսնես թէ որքան լաւ եմ  
ըմբռնած երախտագիտութիւն կոչուած բառին  
նշանակութիւնը:

Այսպէս երկու սիրահարներ իրանց սովորական  
մեղքահոս եւ սրտախօս բարբառումներով միմեանց  
կեանք էին տալիս առանց զգալու ճանապարհի եր-  
կայնութիւնը: Ամենափոքր մի ձանձրցի զգալու-  
երկուստէք սյսպիսեաւ պատրաստ էին աշխարհիս  
շրջանը անելու:

Մերթ ապագայ կենակցութեան համար նաև խաղիծներ պատրաստելով ժանրաբարոյ բանակցում էին, մերթ զուարձալի սրախօսութիւններով միմանց ծիծաղեցընում էին:

Արտաւազզին Ալիէննայից Ալիւրցրուրկ եկած ժամանակ բռպէները ժամեր, ժամերը օրեր էին երեւում, ընդհակառակը այժմ ժամերը երկվայր կեանների նշանակութիւն անդամ չունեին, այնքան շուտ շուտ անցնում գնում էին:

Արտաւազզը կեանքումը այսպիսի ախորժելի ժանապարհորդութիւն չէր արած: “Նյուր խոստովանում էր Վարկարէդը, որովհետեւ Վարկարէդասելով պէտք է հասկանալ Արտաւազզի ճշդրիտ արձագանքը .

Հասան վերջապէս Ալիէննա, արեւմտեան երկաթուղիի կայարանը:

Վանուշակեանցը մի ժամ յառաջ եկած սպասում էր դիմաւորելու:

“Նյու օրվայ առաւօտը ստացել էր Արտաւազզին Վարկարէդի ընկերակցութեամբ ճանապարհ ընկնելուն չեռագիրը: Աչքերը շարունակ չընցնում էր վագոններից գուրս ելնող ճանապարհորդների վրայ, մանաւանդ չափաղանց հետաքրքրուած էր Վարկարէդին տեսնելու:

Տեսաւ վերջապէս փափաքելի վցգը: Արտաւազզին էլ Վանուշակեանցին էր փնտուու

“Նա էլ նրան տեսաւ: Վաղեցին, միմեանց փամաթուեցան, կարծես տասը տարի չէին տեսնուած:

Սոցա սրտայոյդ ուրախութեան պատճառը Մարկարէդին էր:

Վանուշակեանցը ուրախ էր, որողի ետեւ Արտաւազզը որսը շալակած զուարթ որսորդի նման վերագարձել էր: Խոկ Արտաւազզն էլ՝ Հայրենիքը պաշտպանելու համար մշնամին հետ կռուելուց յետոց յափշտակած աւարին հետ ի միասին մայր երկիրը մանող զինուորի չափ գոհ: Էշա այս կողմանի հաճցըն էր որ երկու բարեկամները միեւ էր սովորականից աւելի միմեանց ողջագուրելու:

Ուկայն այսպէս երկար փաթաթմաւած մնալու ժամանակը չէր: Վարկարէդին ու Վանուշակեանցը միմեանց անձանօթ էին: Արտաւազզը իսկցին այս պաշտամնը կատարեց: Վանուշակեանցը կառքը սպասեցնել տուած էր: “Նյու կառքին մեջ նստան երեքը: Վանուշակեանցը ուշի ուշով դիտում էր Վարկարէդին եւ մարումը Արտաւազզին բարեբաստիկ վեճակը պատճերացընելով ինքն էլ ամժամանալու մի ցանկութիւն էր զգում:

— Արտաւազզ! Ճնորհաւորում եմ նշանածգ, կեցցեն! ճաշակի տէր երիտասարդ ես եղել: Բնչ համակրելի աղջիկ է եղապար, Հայերեն կըհասկանայ հարցընեց:

Աչք մի բառ չըգիտեր, բայց մտագիր եմ սովորեցընելու, պատասխանից Արտաւազզը:

Վանուշակեանցը Վարկարէդի ներկայութեամբ Արտաւազզի հետ օսար լեզուով մի քանի բառ փոխանակելը քաղաքավարութեան դէմ համարելով:

— Օրիորդ! ասաց ամենամաքուր գերմաներէն բարբառով, խնդրեմ ներեցէք ձեզ անծանօթ մի լեզուով խօսելու համարձակութիւնս, հարցըրի բարեկամիս թէ արդեօք հայերէն գիտէ՞ք:

— Գժբախտաբար առ այժմ ոչ! պատասխանեց Մարկարէդը շնորհալի մի ձայնիւ, բայց Արտաւագիլը խօստացաւ ինձ ուսուցանելու։ Ես շատ սիրեցի հայերէն լեզուն, շատ համակրելի լեզու է։ Տառերը կը ճանաչեմ կարող եմ տպագրականը կարգալ, բայց ոչինչ չեմ հասկանար։

— Ծատ շնորհակալ եմ օրիորդ! ասաց Մանուշակեանցը, ինձ համար մեծ հաճցըք է մի օտարազգինի բերնից մեր մայրենի լեզուի մասին գովազմասնիք լսելը, եւ այս առթիւ կը փութամ շնորհաւորելու ձեր մերձակայ միութիւնը իմ մտերիմ բարեկամ եւ հայենակից Արտաւագի հետ, որով հայկական լեզուն ուսումնասիրելու համար ձեր ունեցած ցանկութիւնն էլ ի միասին կատարուած կը լինի։

— Այդ համակրանքը, պարո՞ն! միայն իմ կողմից չէ, պատասխանեց օրիորդը, թէ եւ ես առիթ ունիմ այժմ՝ համակրութիւնս գործով ցոյց տալու, այսինքն հայ լեզուն սովորելու։ Բայց այդ լեզուին հարստութիւնը ներկայումն գնահատող գերմանացի գիտնական-հնագետներ մեծ կարեւորութիւն են տալիս նորա հին գրականութեան։ Կմանապէս չափազանց հետաքրքրուում են Հայաստանի ճիշտարապետական հնագարեան գեղարուեստի ճիշտ գերը ուսումնասիրելու, որոնց աշխատասիրութեանց

արդիւնքը ցոյց է տալիս հայերի անցեալում ունեցած զարմանալի արուեստագիտութիւնը եւ պահծալի ճաշակը, եւ հետ զհետէ ստուգուում է, որ հայերը շատ գարեր առաջ մեծ ազգ են եղել, եւ տասն իններբորդ գարում կատարելսովէս արժանի ընդհանուր քաղաքակրթեալ աշխարհի սւշադրութեան։ Իցէ թէ ես եւս լաւ սովորէի հայ լեզուն, եւ եմէ սովալ չը կարողանայի մի աննշան ծառայութիւն անգամ անել հայ ազգին, գէթ առանց համաշելու մի հայու անունը կրելու համար համարձակ գրել կարգալ գետնալովս ինքզինքս բախտաւոր կը համարէի։

(Մանուշակեանցը հիացած էր թիֆլիզի Գայիանեանց ուսումնարանից գուրս և կած մի հայ աղջիկ սրանից աւելի հայասէր չէր կարող լինիլ։)

Իսկ Արտաւագին էլ հայրատացած, նայում էր Մանուշակեանցին, կարծես ուզում էր ասել «է՞! Ի՞նչպէս գտար իմ Մարկարէդը, հաւանո՞մ ես, այժմ իրաւոնք կը լուսա ինձ եւ կասես թէ այնքան կրած տառապանքներս արժէք ունեին……»։



Արտաւագիլը անմիջապէս վիէննայի ընտհանուր շիւանդանցի շրջակայքը պատուաւոր մի պանդոկում երկու սենեակ վարձեց միեւ Մարկարէդին եւ միւսը իրան համար։

Անդուլ եւ անխոնց աշխատասիրութեամբ սրկուց շարունակել բժշկական գասերը, որոնք անակեն-

կալ գէպէրի պատճառաւ մի ժամանակ ընդհատուել էին: Մարկարէդի ներկայութիւնը չափաղանց նպաստեցի իր ուսումնական գործունեւութեան, որովհի շետեւ ուղղված բոլորովին հանդարտացել էր եւ զերծ ամէն տեսակ մոտառնջութիւններից:

Թէպէտ տակաւին երեք ամիս ժամանակ կար ընդհանուր հարցարնութիւնն, բայց Արտաւազի արդէն յաջողել էր պատրաստելու բոլոր գասերը: Կերկայ գտնուում էր գասախօսութիւնների կրծկնութեանց եւ մեծ եռանդով ոչ մի օր յետ չէր մնում մասնաւոր պարագմունքներից, իսկ աղատ ժամերը նուիրում էր Մարկարէդի տեսակցութեան:

Վանուշակեանցը ստէպ ստէպ այցելութեան էր գալիս առանց վրդովելու սիրահար զցյին երջանիկ բոսէները, որովհի շետեւ իր ներկայութիւնը իսանդգարիչ ըըլինելուց զատ ախորդելի էր Մարկարէդին եւ Արտաւազին, որոնք նրան նկատում էին իբրև ամենամերձաւոր մի աղդական:

Արիշ Վիէննաբնակ հայեր էլ լսելով Արտաւազի պատճառնութիւնը հետաքրքրութիւն յագեցնելու համար Վանուշակեանցից ինդրել էին որ միջնորդ լինի ծանօթացյլնելու:

Ծատերը տեսել եւ հաւանել էին Մարկարէդին: Ամանք տունը գնալով ծանօթացել, ուսանք էլ զըսավայրերում նրանց թեւ թեւի տուած ման գալը տեսնելով ճանաչել էին:

Տոգտոր Մարտքէ Մելիք-Մելիտոսեանցն էլ ցանկութիւն յայտնել էր Մարկարէդին տեսնելու, եւ յատկապէս ինդրել էր Վանուշակեանցից որ

միջնորդութիւն յանձն առնե ներկայացընելու: Վանուշակեանցը մի երեկոյ առաջարկեց Արտաւազին տոգտոր Մարտքէի փափաքը:

— Արտաւազի! տոգտոր Մելիք-Մելիտոսեանցն էլ ուղաւմ է մի անդամ՝ Մարկարէդին տեսնել, մցըլ կոտաս վաղը երեկոյ հետո բերեմ:

— Եզրայր! այս ի՞նչ բան է, Մարկարէդը երկու գլուխով ծնուած մի հրեշ է, ի՞նչ է... ամէնքը այսքան հետաքրքրուում են:

— Դա զարմանալի բան չէ: Արտաւազի! պատասխանեց Վանուշակեանցը: Այսքան տարիներից ի վեր գիէննայում հարիւրաւոր հայ երիտասամղներ եկած գնացած են, ոչ ոքի գլխին սցագիսի արտասովոր բան չէ պատահած, ի հարկէ կը հետաքրքրութիւն քայ հայուադէպ պատճառնութիւնը լսելով:

— Դա ո՞ր տոգտորն է, կարծեմ գանկարանն է...:

— Ճիշդ նա է, ուրեմն կարող եմ բերել այնպէս չէ... բերեմ եղբայր, մի նեղանար: Տեսնենք Մարկարէդի գանկին համար ի՞նչ գաղափար կը յայտնէ, գոնէ կը ծիծացինք....

— Ծատ լաւ եղբայր, թող գայ, ես մարդատեաց մարդ չեմ, բայց եթէ չեմ մասնում նա նեղացած է ինձ դէմ, որովհի շետեւ վերջին անդամ մեր ծանօթանալուն ես հակառակ խօսեցայ եւ նա նեղացաւ գուրս ելու:

— Դա վիսա չունի, գու չես յիշում որ նա քեզ ասաց թէ ակըներեմ ձեզ, որովհի տեւ ձեր գանկին մէջ սիրահարական գոլորշիներ կան:

Այսում եմ այժմ... լաւ ուրեմն, թող  
դայ, տեսնենք այս անգամ ի՞նչ պիտի գտնե գտն-  
կիս մէջ:

Կցն երեկոյ Վանուշակեանցը տոգտոր Վարու-  
քէն հետն առած եկաւ Արտաւազի տունը:

Տոգտորը սցցելով թիւների համար յատկապէտ  
կարել տուած եւ մարմնցն վրայ կազած սեւ զգեստ-  
ներ էր հագած: Արդէն գիտենք որ գլուխը չէ  
կարող ուղած կողմէն զարձնել, բայց այն օրը հա-  
գած շապիկին օձիքը պինքան նեղ եւ բարձր էր,  
եւ պարանոցը այնքան պինք սեղմած էր որ ոչ մի-  
այն ետեւը գանալ, այլ իր ոտներն անգամ չէր  
կարողանում տեսնել:

Տակաւին տանը գոնից ներս ըըմսած տասն ան-  
գամ Վանուշակեանցին հարցընել էր:

— Խնդուեմ... բառեկամ... ասացէր... կօշիկ-  
նեռը... վռաս... գլուխս... ամէն բանիկուրս խառ-  
մառ են...:

— Շատ վայելուչ կերպով հագուած էր,  
պարոն տոգտոր, պատասխանում էր Վանուշա-  
կեանցը, Արտաւազի օստարական չէ, նա էլ միզա-  
նից է, այդքան էտիկէտների հարկ չըկայ:

— Արտաւազին խամառ խոգ չէ... Օսիորդը  
Եւռոպացի է...: Էս էլ Եւռոպացիի կաթութիւն  
պէտք է առատախայտեմ, ոռ օսիորդը գիտնայ թէ  
խայեռն էլ Եւռոպացիի բանիկուրս կառող են անել...:

Ահա այս նախազգուշութիւններով լարուած  
եւ պատանքի նման նեղ շորերին մէջ սեղմուած  
Եւրոպական տոգտոր Վարուքէն, ինչպէս մի ցից

ամդուղներից վեր բարձրանալով եւ մերթ ընդ  
մերթ գրապանիցը մի փոքր հայլի հանելով եւ մէջը  
նայելով հասել էր Արտաւազի սենեակը:

Զարմանալի մի զոտագիսով թեամի նցյն երե-  
կոյ նաև այցելութեան եկած էին ազգասէր տոգ-  
տոր խոռիսունին եւ մարդարտավաճառ հաճի  
զեռնդիանոս աղան:

Արտաւազգը Վանուշակեանցի խորհրդով թէյի  
եւ փոքր մի նախրնիթրիքի պատրաստութիւն տես-  
նելով պէտքը զգացել էր. որովհետեւ հայրենա-  
կեցները իր նշանածը չնորհարելու եկել էին,  
նրանց հարկաւոր էր մարդարտիրական մի լնդունե-  
լութիւն անել:

Այն երեկոյ Վարկարէդից զատ թէպէտ ամեն-  
քը հայ էին, բայց լեզուի ոճով, բնաւորութեամբ,  
կարծիքով բոլորովին միմեանցից տարբեր հայրենա-  
կեցներ լինելով, սրանց միջեւ տեղի ունեցած խօ-  
սակցութիւններից ամենածիծալաշարժ մի կա-  
տակերգութիւն կարելի էր յօրինել: Վանաւանդ  
տոգտոր Վարուքէ Մելիք-Մելիսոսեանցին՝ Վարկա-  
րէդի ծանօթացած ժամանակ՝ նեղ շորերին կարելը  
չըկտրուելու համար զգուշութեամի մէջքը ծոելը.  
մեծ գժուարութեամի սեղմուած պարանոցով գլուխ  
խոնարհելը, յետ յետ գնալը, աթոռին վրայ նըս-  
տելու եղանակը, հիւսիսային գերմանացիի արտա-  
սանութեամի խօսիլը, վերջապէս ամենայն շարժ-  
մունքը չափից գուրս ծիծաղ շարժող ձեւեր էին,  
որոնց արդէն Վանուշակեանցը վաղուց վարժուած  
լինելով քմի տակից ծիծաղում էր, իսկ հաճի

աղան զարմացած մնացել էր և չէր ուղում հաւատալ որ այդ տեսակ հայ գոյութիւն ունենայ, մինչեւ անդամ կասկածը փարատել ուղելով Մանուշակեանցին կամաց ձայնով հարցըրեց:

— Ճանեմ ախաղար, շնորհը ըսէ ինծի, իրաւցունէ դա տոփտորը ասըլ հայ օղու հայ է, եօխսամինկիլիզէն պօղմա է:

— Ճէ եղացր, Աժգերիսանցի հայ է:

— Տէր ողբեմա, ծօ թլրիս ինկիլիզի կրմանի, աս պղըս եկեր էի, ասանկ թօհափ հայ չէի աեւեր:

Մարկարէզը ոյն երեկոյ Արտառաղի բարեհամներին ամենաջերմ ընդունելում եամբ պատուում եւ յարգում էր: Ծնոր հալի քաղաքավարութեամբ իր ձեռքը ամենքին թէյի բաժաները կրկնելով իւրաքանչիւրին մի ախորդելի խօսք էր ասում: Արտանուէր եւ հաճոյական վարմունքներով գրաւում էր բոլոր ներկայ գտնուողներին համականիքը:

Հանդիսականք ամենքը մերիդ հայերէն մերիդ գերմաններն էին խօսում եւ իրար շատ լաւ հասկանում էին, որովհետեւ երկու լեզուներն էլ միմեանցից քիչ թէ շատ տարրերութեամբ վարժ եւ մաքուր խօսողներ էին: Խոկ հաճի զեւսպիլիսանս աղային գրութիւնը անտանելի էր: Խեղճ մարդը գերմաններէն չէր կարողանում խօսիլ: Նրանց խօսածները չէր հասկանում: Իրան խօսած սարսափելի հայերէնին էլ հարիւրին քսանը Մանուշակեանցը հաղիւ էր հասկանում: Այդ պատճառաւ շարունակ Մանուշակեանցից խնդրում էր ասելով:

— Ճանեմ ախաղար, ուղըլ պազնեմ, լախըրաը ըրած վախիթըս կտոր մը ինծի եարտըմ ըրէ քի քերազէ չըլլամ:

Տոգտոր Մարտուքէն ամենից ճարտարախօսն էր: Վարպետութեամբ խօսակցութիւնը ուրիշ նիւթերից գանկարանութեան վրայ էր գարձրել, որպէս զի մասնագէտ լինելը ցցց տայ եւ զրադեցընէ ամենիցին:

Այս առմիւ Մարկարէդի գանկը աջից, ձախից, կագալթից, ճակատից, ծոծրակից, վերջապէս ամեն կողմից քննելուց յետոյ իր մանչական հայերէնագը մի ատենախօսութիւն ուկանց:

— Եղբարք խայկագունք! անդ զիական եռեւելի գանկարան մըստը ճօն զիլիան, ոռ ես նոսան աշակեռառութիւն առած եմ, նո ան անունով կեռգնում, ոռ Կրանիոլոգie այսինքն նեակայումն Phrénologie կոչուած զիտութիւնն է, նոյն զիտութեան օրինաց խամաճայն օրիոսդ Մարկարէզի գանկը շնկառ-գեռմաններին զառում զէպ ի Առառատի գաշտը գաղթականութիւնն անող խայենի սեանդարանական գանկեռի կարմակեռպութեան համապատասխան նշաննեռ ցցց է տալիս: Չեմ կառող մանուաման պառզել, ոռովհետեւ զուք ծանօթ չէք գանկարանութեան զոնէ տառապականին: Հոատառակելիք բըռօշիւուլս ձեռ մոքեռը պիտի լուսաւուէ: Ուռեմն պատէս, ես կրիսաստանիմ ոռ օրիոսդի գանկը հայու գանկ է: Ծատեռը պնդում են որ խայը քթից կառելի է ճանաչել, ոչ.. ես բռուսովին ընդգէմ եմ այդ բանիւսին: Ննձ խամա-

Քիթը նշանակութիւն չունի, ինչպէս ուսիշ շատ բանիեռ, այնպէս էլ կառելի է քիթը մեծ կամ փոքր լինիլ: Քիթը խցութեան հետ խառարեռութիւն չունի: Մի ազգի գլխաւոր նշանը գանկն է, ոռով հետեւ գանկը բնականաբառ թիթից շատ մեծ է:

Մարկարէդը շատ էր հետաքրքրուած տոգատոր Մարուքէի խօսածը հասկանալու:

Արտաւազգը խսկոյն թարգ մանեց տող տորի կարծիքը, եւ Մարկարէդը չափից գուրս զարմացաւ իր ուսերին վրայ զետեղուած գլխին հայու գանկ լինելը մինչ ցարդ չըգիտանալուն համար:

Իսկ հաճի աղան ոչինչ չէր հասկանում, նա կարծում էր թէ Մարկարէդը գլխի հիւանդութիւն ունի եւ տոգտորը գեղ է տալիս: Խնդն էլ ունենալով տեռատեսութեան (hémorroïdes) հիւանդութիւն, տոգտոր Մարուքէից խնդրեց ասելով թէ:

— Ճանըմ տոգտոր, ես ալ հօրենական մայասըլ ունիմ, մեր սինսիլէյն մէջը եէրէշմիշ եղած է աս հիւանդութիւնը, Ասոււած կէնձութիւնըդ պաղըշլամիշ ընէ, սրվոր չարէ մը կրնաս ընել աճապա:

Մանուշակեանցը էլ չըկարողացաւ գիմանալ: Բարձրաձայն մի ծիծաղ արձակեց:

Իսկ տոգտոր Մարուքէն հաճի աղային ասածը բնաւ չըհասկանալով:

— Պարոնը կառծեմ ասոսի է, ասաց: Ասոսինեսի գանկեռը ուսումնասիռել եմ, բայց գժբախտաբառ լեզուն ոչ...

— Զէ ախպար, բացագանչեց հաճի աղան, այսօր չեմ եկել ես Վիէննա, 20 տարի է այս տեղ

եմ ամա, չօճուխութիւնէս պերի մայասըլ ունիմ: Եյս բարիլնական խառնակութիւնը երկու կողմի հաւկանալի անելու համար Մանուշակեանցը թարգամանի պաշտօն կատարել ուղաւմ էր, բայց ծիծաղը չէր թողնում: Թուլանում էր տղան առանց որ մի բառ կարողանար մէկին կամ միւսին մեկնելու:

Տոգտոր խոռխոռունին էլ մինչ այն ժամանակ մի յարմար առիթ էր վիստուում անդ ամազնութեան գիտութիւնը հայ իգական սեռին մէջ մըտցնելու նախագիծը առաջ քշելու համար: Մարկարէդին հարցըրած էր թէ արդեօք զաս առած է անդ ամազնութեան: «ա պատասխանած էր որ Ցուրիի գիմանցիայում չըկար այնպիսի գասախօսութիւն:

— Բայց անհրաժեշտ հարկաւոր է, ասում էր տոգտոր խոռխոռունին, ես պիտի լինիմ անդամազնութիւնը հայ երկսեռ ուսումնարաններում առաջին մոցընողը: Բրոշիւրս մօտաւորապէս կը հրատարակեմ, ամենքը կը դանօժմանան նպատակիս, եւ ոչ ոք այն ժամանակ կարող չըլինիր ուրանալ այդ գիտութեան ապագայ սերնդին տալիք օգուաները: Դա չընմանիր գանկարանութեան որ բոլորովին անօգուտ է, մինչդեռ անդամազնութիւնը առջապահական առատ պայմաններ կարող է մատակարարել:

«Եցն միջոցին տոգտոր Մարուքէն գանկաչափով (craniomètre) իր գանկը չափելու զբաղուած լինելով բարեբախտաբար չըլսեց տոգտոր խոռխոռունին վերջին խօսքերը. ապա թէ ոչ անվրէպ մի սաստիկ բանակոիւ կը ծագէր էր, որովհետեւ գանկա-

բանութեան գէմ խօսողն թրով կը պատասխանէր տոգտոր Մարուքէն:

Մի ուրիշ գիպուած եւս մի պահ ընդհատեց գիտնական խօսակցութիւնները:

Հաճի աղան գրասնիցը մի տուփ հանել եւ Արտաւազգին մօտեցել էր եւ ժպտական մի գէմքով:

Արտաւազգ աղան, ասաց, ես ձեզի ըսեր էի քի ձեր նշանածը Վիշնա բերելու ըլլաք նէ, մարդութիւն մէկ աղոր կերտանը մը հազըրլամիշ պիտի ընեմ տէյի, իշմէ, նայեցէք, հետըս բերեր եմ: Չեղի հետ պաշխա միշմէ երիի պէս տավըսնմիշ չեմ ըլլաք:

Ամէնքը հետաքրքրուեցան, մանաւանդ Մարկարէդը որ կին էր, եւ հետեւաբար կանացի զարդերին գնահատող՝ խուճապեց հաճի աղջին մօտ սիրուն գոհարը տեսնելու:

Հաճի աղան 60 տարեկան ամուրի եւ առանց ժառանգորդի մի մարդ էր: 20 տարուան մէջ Վիշնայում բաւական գրամագլուխ շինած լինելով, ներկայը նախ կարծեցին որ մարդարտէ մանեակը Արտաւազգին նշանածին ընծայ պիտի ընէ: Բայց այնպէս չէր: Հաճի աղան պարզապէս առուտուր ուղում էր անել: Ամէնքը հասկացան էութիւնը եւ միաբերան հարցըրին:

— Ի՞նչ կարծէ. ի՞նչ կարծէ, հաճի աղա:

— Պաշխասին համար 250, բայց նոր փեսայ տոգտորին համար 150 ֆիորին կարծէ, ասաց հաճի աղան: Երբորդութիւն վկայ, փշփշանքը վկայ, մէկ քըռայցար պակասով չեմ կրնար տար, մալը մալը

նա կուտամ կոր, պակաս խուրլթարմիշ չըներ, զարար չընեի նէ, ասիլբտար տայանմիշ չէի ըլլաք..., սէյիր ըրէք, նայեցէք, ի՞նչ աղըոր բան է, էլմասի պէս բարլամիշ կրլայ կոր, ասելով հաճի աղան արգ էն մանեակը կիսով չափ Մարկարէդի պարանոցին անցըրել էր:

Մարկարէդը շատ հաւանեցաւ մանեակին, եւ իսկցն փողը տուին առին:

Թէպէտ մանեակը գեղեցիկ էր, բայց շատ թանկ էր: Հաճի աղան երգում անելով հարիւրին հարիւր վաստրկել էր:

Թէյը եւ նախրնմթիրը վաղուց վերջացել էին: Հեւրերը Մարկարէդին խորին շնորհակալութիւն յայտնելով եւ Արտաւազգին էլ բարեմանութիւնը շնորհառելով մեկնեցան:

Հաճի աղան մեկնելու ժամանակ Մարկարէդին ձեռքը սեղմելով, մէծ գժուարութեամբ գերմաներէն «Փըսավուլսյն, իչ գան քըշեմ, իչ հարէ գիտու և» բառերը արտասանեց եւ Արտաւազգին էլ «Միւսիւ տոգտոր, նշանածիր խերը տեսնաս, ափերիմ, շատ աղէկ եախալամիշ ըսեր ես, պարապար էինթիյարլանմիշ ըլլաք, կերտանլը ին համար ալ շնորհակալ եմ, պերէքեաթ վէրսին, ասելով հեռացաւ:

Երբ ամէնքը գնացին եւ միայն Մանուշակեանցը մնաց, Արտաւազգը մի մեծ շունչ քաշելով — ու Փ! եղայր, ասաց, փառք Աստուծոյ աղատուեցանիք.. Էլ մինչ կոկորդս հասել էին տոգտորներին գան-

կաբանութիւնը, անդամազննութիւնը եւ հաճի աղային տարտարոսական լեզուն:

Բայց լաւ ժամանակ անցկացըթինք, Արտաւազդ! նա մանաւանդ օրիորդ Մարկարէդը ընձանձրացաւ, ընդհանրութիւնը զուարձացաւ կարծեմ, այնպէս չէ, օրիորդ! Հարցըթեց Մանուշակեանցը:

— Այո, ես շատ գոյչ մնացի այս երեկոյեան ընկերութիւնից, մանաւանդ զարմանում եմ եւ չեմ կարողանում ընծիծաղիլ, երբ յիշում եմ գանկարան տոդտորին, որ եմ գանկիս մի քանի հազար տարուայ գանկերի տեսակից իջած լինելը յետ քննութեան նախագուշակեց:

— Այո, դա մեծ գիւտ է, իսկ անդամադնութեան տոգտորին ինչ կասէք, յարեց Մանուշակեանցը:

— Դա, ասենք, յիմար կարծիք չէ, ասաց Արտաւազդը, բայց անպատճառ անդամազննութիւն գիտցող ազդիկ փնտուել եւ ամուսնանալու համար սպասել մինչ գտնութիւնը, դա բացարձակ յիմարութիւն է:

— Արտաւազդ! ասաց Մանուշակեանցը. մինը գանկաբան, միւսը անդամաբան, իւրաքանչեւրը մի բան ասաց, բայց գործ տեսնողը հաճի Պետօնդիանու ազան եղաւ: Աերաւ, խմեց 150 ֆիորինով էլ մարդարիտը ծափեց, աշա՞ գործունեայ մարդ...:

— Այո, ես նկատեցի, պատասխանեց Արտաւազդը, որ մանեակը թանկ նստաւ մեղ, բայց Մարկարէդը աճապարեց: Հաճի տղան 100 ֆիօրինով էլ տալու յօժար էր:

— Վիէննայից մեկնած ժամանակդ երկաթութիւնի կայարանում արած բարեմաղթութիւններն եւ հաշունին մէջը գրած պէտք է լինի: Գորա վաճառականական օրէնքները են: Իւրաքանչեւր քայլը հաշուով է, բայց հօգ չէ. հաճի աղան հայ մարդ է, թող հայը առնէ մեր փողը: Ուրիշ ազգեր իւրանց ազգակիցներին մօտ ծախուած ապրանքին թանկ լինելը գիտնալով հանդերձ դարձեալ նրանցից ծախու կառնեն:

Ժամը կես գիշերին մօտ էր: Մանուշակեանցը գիշեր բարի մաղթելով հրաժարական ողղոյնը տուաւ մէկնեցաւ: Կմանապէս Մարկարէդն ու Արտաւազդը քաշուեցան իրանց սենեակներում:



Արտաւազդը Վիէրցրուրի բնակած ժամանակները տէր պապա հօրը որ Մոսկվայումէր, գրած էր Մարկարէդի հետ ունեցած սիրահարութիւնը: Գրած էր իր սիրոյն տղայական եւ վաղանցուկ ըլլինելը: Առողջ գատողութեամբ չափած ձեւած եւ նրա հետ ցկեանս ապրելու որոշում տուած լինելը, վերջապէս ամէն բան ստուար մանրամասնութեամբ պատճած էր, եւ իւրեւ հնազանդ որդի տէր հօրը հրամանին սպասելը հաղորդած էր, որպէս զի քահանայ հայրը հաւանութիւն եւ արտօնութիւն տայ:

Արտաւազդը լոկ փողի կարեւորութիւն տուազնիւթապաշտ երիտասարդներին չէր նմանում: Արտի

կողմանէ այնքան հարուստ էր որ մինչեւ անգամ մոռացել էր հօրը գրելու Մարկարեղի մօրը կարողութիւնը: Այս նիւթական ինդիրը աչքի առաջ ունենալ եւ նախանձամինդիր լինել իւրաքանչիւր մահկանացուին իրաւունքն է, ուստի շատ բնական էր որ Արտաւազդն էլ ուրիշ տեղեկութեանց կարգում այս կարեւոր կէտն էլ հօրը հաղրդէր: Թէ պէտ տէր հայրը քանիցո անգամ գրած եւ տեղեկութիւն պահանջան էր, սակայն Արտաւազդը գրավոյ ըրմանածելուն համար անտարբեր կերպով պատասխանել էր հօրը նամակին:

Տէր հայրը կարծելով որ աղջկը փող չունի եւ գրա համար որդին լուռ է կենում, զրել էր որդւոյն թէ ի՞նչ հարկ կայ անփող գերմանացի աղջկան հետ պսակուելու, քանի որ Մասկայում, Կոր նախիջեւանում, հին Կալիջեւանում, Արեւանում, Գանձակում, Խարաբաղում, մանաւանդ թիվլիցում եւ Կոստանդնուպոլսում փողատէր աղջկներ անպակաս են, կարելի է սրանցից ճարել, բաւական է որ նկըը, Արտաւազդը կատարելագործէ ուսումը եւ լաւ մի գրաւթիւն ունենայ:

Արտաւազդը տէր հօրից յառաջագոյն ստացած նամակներին բովանդակութեանը վերահսու եղել էր եւ ինչ պսել ուղելիքը հասկացել էր: Թէպէտ նախին նամակներում բացարձակապէտ առոնելիք աղջկը հարուստ պէտք է լինի, զրուած չէր, բայց եւ այնպէս լսելեայն ակնարկութեամբ հօրը գործածած լեզուի եղանակից փողի հոտե առել էր: Կոկ այս անգամ նամակին մէջ պարզապէտ

փողի խնդիրը մէկնուած լինելով, Արտաւազդը հայրը համարատեցնելու համար յակամցս ստիպուել էր զրելու Մարկարեղի ընտանեաց կարողութիւնը: Բայց տէր հայրը պարանով էլ ըքաւականանալով մինչեւ անգամ ուղեցել էր իմանալթե որբան գումարի բան պիտի ժառանգէր Արկարեղը:

Արտաւազդը, ինչպէս տեսան ընթերցողք, մեծած հոգի եւ վեհանձն էր: Կը կնոջը, մանաւանդ որդւոցը ապագան ինչքը ապահովցնելու պարտականութեան գերի լինելու շափ սկզբունքի տէր մի պատուապաշտ երիտասարդ էր:

Մի կնոջ փողին համար ծարաւ զգացող եւ յոյը նրա վրայ զնող շահախցլ եւ արծաթման մարդոց զ ործունեութեան անտեղնակ եւ անյոջաղակ էր: Կը լաւ համազուած էր, որ մի երիտասարդ եթէ ինքնոգնութեան եւ հաստատամութեան պահանջները անթերի կատարէ եւ պարտաճական լինի, թէ ինքը երջանիկ կապրի եւ թէ նոյն պայմանների համաձայն որդիքը զարգացընելով նրանց երջանիկութիւնն էլ նախապատրաստած ըքլինի: Կոկ եթէ լինդ հակառակը միայն արտաքին ձեւերի եւ շահախնդրական հաշխների համար, մարդ ամսւանայ, այն ժամանակ անազան ժառանգ պանդներ, վիշտեր կըծագին, կեանքը մնանելի կըլինի, եւ այս տեսակ միութիւնը սովորաբար ծնանդ կը տայ նիւթապաշտութեան կըբերով սնուած անբարցական զառակների:

Ահա սցին գաղափարներով չարստացած էր Արտաւազդը, եւ ինքը իր սկզբունքին վրայ հիմնուած, յշյուը մեծ էր ապագային համար: Այս յշյուն վրայ Մարկարէդի շնորհալի բնաւորութիւնը եւ առած լաւ գաստիարակութիւնը աւելացընելով Արտաւազդը ինքնիրան համարում էր անսպառելի մի գանձի տէր, եւ ահա այս պատճառաւ Մարկարէդի նիւթական կարողութեան վրայ մի բովէ խորհիւլու ժամանակ չէր ունեցել: Իր զգացած սէրը նոյնը պիտի մնար, թէ եւ Մարկարէդին ամենաչըքաւոր վիճակի մէջ գտնէր: Հետեւաբար սակաւ տիրութիւն ըրպատճառեց տէր հօրը գրած վերջին նամակը, որուն մէջ արծաթասիրութիւնը յայտ յանդիման փայլում էր:

Այսպէս էր գրած տէր պապան:

“Օրհնեալ եւ հարազատ որդեակ իմ Արտաւազդիս ողջն սիրոյ, կալ եւ մնալ հանապալ ի խաղաղութեան.

Քանի անդամներ ստացայ քո նամակները, որոնց մէջ գրած եւ պատմած էիր գերմանացի մի աղջկան հետ ունեցած սէրդ, եւ ինդքած էիր որ հաւանութիւնս տամ ձեր երկուսին միութեանը համար: Արդէն քեզ ծանօթ է մեր տանը նահապետական վաղեմի սովորութիւնը, որուն միշտ պատիւ տալով հպատակուած ենք: Այս սովորութեան համաձայն քու պարտականութիւնդ պէտք է յարգես եւ կատարես, այսինքն օտար երկրի մէջ ըրպատիւս: Եթէ այնպէս մի բան անես, այն ժամանակ իմ որդիս չես, ուստի պարտաորեալ ես հօրենական

տունդ գալու եւ իմ օրհնութիւնը առնելով սուրբ ամուսնութեամբ միանալու քու ցանկացեալիդ հետ: Մինչեւ որ ինքս անձամբ իմ ձեռօքս ձեզ ըրպատիւմ, օրհնութեանս եւ պահպանիչիս չես արժանաւար, ոչ գու եւ ոչ խոստացեալ կողակիցդ:

Բայց ինչպէս երկուք երկուք էլ չորս կանեն, այնպէս էլ սոքա պարզ բաներ են: Ամենազլիառորը, ինչպէս ես քանի անդամ գրեցի եւ գու հազիւ կէս բերնով մի պատասխան տուիր եւ մանրաւամանութիւնները չըհաղորդեցիր, գարձեալ կը կրնեմ, ամենակարեւորը այն է, որ պէտք է ինձ գուս նշանածիդ ժառանգական բաժինը ո՞րքան գումարի կը համի: Կարող է այդ գումարը մեր բոլոր ընտանիքը ապրեցընել: Որովհետեւ տակաւին դու նորընծայ բժիշկ ես: Ի սկզբան չես կարող պէտք եղածին չափ եկամուտ ունենալ արհեստիցդ, որն որ ինձ շատ թանկ նստաւ:

Մինչեւ որ անունդ հռչակուի եւ գործունեութիւնդ օգտակար լինի հիւանդ հասարակութեան, պէտք է գու էլ ապրիս մենք էլ: Գիտես որ այժմ իմ գործերն էլ առաջուայ պէս արդիւնաբեր չեն: Այժմ չըկան այնպան հարսանիքներ որքան առաջ կային: Գիտես նմանապէս որ ինչպէս ձեր բժիշկներիդ հասցյթը հիւանդներից կախում ունի, այնպէս էլ մեր քահանայիցս եկամուտների սկզբնական հիմը հարսանիքն է: Հարսանիքներից առաջ կըդան պատկներ, կնունքներ, ննջեցեալներ, հոգեհանդիսներ եւ այլն:

Մեր հայ հասարակութիւնից ոմքնք ոռոս աղջիկների հետ կը պսակուին, որոնց պսակի, կնունքի եւ թաղման հանգէսները ի վեաս մեզ ոռոսական արարողութեամբ կը կատարուին: Ըստ մեծի մասին ամուսնացոլների թիւը օր ըստ օրէ նուռազում է, իւկ ընդ հակառակը քահանայների թիւը գնալով շատանում է, որովհետեւ խելօք, յիմար, գիտուն, տգէտ, արժանաւոր, անարժանաւոր ժողովրդի ամէն տեսակ գասակալ գից քահանայներ ձեռնադրում են, եւ եմէ պապէս շարունակուի, քահանայնութիւնը տարափոխիկ հիւանդութեան նման հասարակութեան մէջ պիտի ատրածուի, եւ այն ժամանակ բոլորվին աննախանձելի պիտի լինի մեր հոգեւոր բժիշկներիս ապրուստի զրութիւնը, մանաւանդ ներկայ գարում, ուր մարմինը աւելի պատիւ ունի քան թէ հոգին:

Թէպէտ ես մեր ընտանեաց ապագան մտածեւ լով ևոչէմ տնտեսապիտական նախատեսութեամբ սակաւիկ խնայողութիւններիս շնորհիւ մի կտոր փող աւելացըթել եմ, բայց այդ պատրաստի զրամը վասնելը եմ հաշուին ըրդար: Աւստի, սիրելի որդեակի իմ, գրածներս ի նկատի առնելով ըստ այնմ տնօրինէ, եւ քանի որ նշանածդ գերմանուհին քեզզանից չըբաժանելու չափով սիրում է զքեզ, ահա այս առիթից կարող ես օգուտ քաղել եւ Վերցըուրկի կալուածներից մի տաւն, մի խանութ, մի քանի կտոր բան, քու վլադ գարձընելու պէտքը աղջիկն մօրը առաջարկել: Թոյլ մի վարուիր: Աարաննելու, ամաչելու բան չըկայ, առեւտրական մարդ

կղիք: Ես քեզ ճանացում եմ, գու սրտով հարուստ ես, գա առաքինութիւն է, ճշմարիտ մարդկութիւն է, բայց այդ տեսակ գաղափարներին ներկայ գարում կոպէկ տառով չըկայ:

Արդարեւ անկեղծ սէրն է միայն որ շահախընդիրական պայմաններից անկախ է, բայց այսպէս մտածել եւ զատելը զուտ փիլիսոփայութիւն է զոր ներկայ գարում ոչ առնող կայ ոչ ծախող: Աթէ ես ել փիլիսոփայութիւն անէի եւ սա խեղձ մարդը ձրի թաղենք: այս ինչ որբ մանուկը առաց փողի մկրտենք, կամ այն ինչ չքաւոր հարմն ու փեսան մեղք են, իբրեւ ողորմածութիւն պսակենք եւ ոչ ինչ չըպահանջենք: ասած լինէի, յետ մահուանս միայն չին հողամագիներս պիտի ժառանգէիք:

Ափսոս որ վաճառական մարդ չես, քու տեղդ մի ուրիշ երիտասարդ այդ սիրահարութեան հանգամանքներից մեծ օգուտներ կարող է քաղել: Փիլիսոփայութիւնը աւելորդ է: Գրամկը միշտ զրամէ: Մարդու մարմինն ու հոգին զօրացընող գերբնական ցյդ ունի:

Յշոյ ունիմ՝ որ լաւ տպաւորութիւն կանեն քեզ գրածներս, եւ ոչ թէ սիրահարական տառ քութեամբ այլ պաղարեամբ արածս գիտողւթիւնները կշռելով ի միտս, գոհացուցիչ պատասխան պիտի գրես գորովագութ հօրդ, որ քեզ երբէք չըմուանար իր օրհնութեանցը եւ աղօթիցը մէջ: Ա

Պոսկվա ... 1877.

Տէր Պառնիկանոս  
քահանաց:

Արտաւազդին համար նախամեծար էր մեռնիլ,  
քան թէ այնպիսի պիրկ եւ կոպիտ պայման առաջարկել Մարկարէդի մօրը: Դա կընշանակէր նրանց  
մարդասիրական ընդունելութիւնը եւ մանաւանդ  
Մարկարէդի անձնութիւնթիւնը հաշիւներով փոխարինել: Բայց տէր հօրը նամակն էլ անպատճանան  
թողնուլ չէր կարելի: Մի բան գրել հարկաւոր էր:

Արտաւազդը սիրտը շրթանցը վրայ, անկեղծ  
խօսող ուղղամիտ մի երիտասարդ էր: Հօրը պատասխան գրելու համար փոխանակ մանուածց քաղաքականութիւն գործածելու, յստակամիտ համարձակութեամբ իր գրութեան ճշմարիտ պատկերը  
նկարագրեց, որուն ոչ թէ միայն տէր հայրը որ  
ողջամիտ եւ միանդամայն չափազանց անտեսագետ  
էր, այլ բոլորովին նիւթապաշտ մի մարդ անդամ  
իրաւունք պիտի տար: Ահաւասիկ Արտաւազդին  
գրած նամակը որ հօրը հետ ունեցած նամակա-  
գրութեանց վերջինն եղաւ:

Գորովամեծ եւ Վերապատուելի հայր իմ.

"Ընորհիւ ձեր որդեսէր եւ ինամառատ հոգածութեանց վերջապէս հասայ նպատակիս: Վերջացըրի ուսանողական կեամփս եւ վաղ ընդ հուպ  
մտնելու եմ մարդկային ընկերութեան պահանջած  
կենսական պայմանների շըլմանում:

Չեր ինամոցը պարտական եմ բժշկական ուսա-  
մանս կատարելագործութիւնը. որոյ մասին խօսքով  
միայն երախտագիտութիւն ցցց տուող անտարբեր-  
ներից չըլինելս ապացուցանելու համար բարյական

եւ նիւթական պաշարներով գալիս եմ ձեզ մօտ-  
թի շաբաթից տալու եմ հարցաքննութիւնս: Գրած  
եմ Վիւրցբուրկ զոքանչութիւնն Հովմանին, որ գա-  
լու է Վիւնսա, եւ Մարկարէդը ի միասին տանելով  
երեքս պիտի ճանապարհորդենք Մոսկվա, համբու-  
րելու ձետ աջը որ իր օրհնութեամբը զմեզ ցկեանս  
պիտի միացընէ:

Ո՛չ! Եթէ գիտայիք, որքան երջանիկ եմ, սի-  
րելի հայր իմ, որպիսի երանելի օր է եղել արտա-  
սահման գալու համար ճանապարհորդածս օրը...:  
Ես կըցանկայի որ հայրենակիցներս ինձ չափ բախ-  
տաւոր լինէին: Որքան էլ նշանածս Մարկարէդին  
աղնիւ յատկութիւնները աշխատել էի ճշդիւ նկա-  
րագրելու, բայց հաւասար եմ որ չեմ յաջողած-  
գութ պիտի տեսնեք եւ պիտի հաստատէք որ գրած-  
ներս չափազանցութիւն չըլինելուց զատ շատ բա-  
ներ պակաս եմ գրած:

Նախ քան պսակութիւն Մարկարէդի նիւթական-  
կարողութիւնից օգուտ քաղելու խնդրին գալով,  
սա այնպիսի մի առաջարկութիւն է, որ Մարկարէդի  
ընտանեաց հետ մինչ ցարդ ունեցած սերտ եւ ան-  
շահախնիր բարեկամական կապակցութիւնս մի-  
ակնմարդում զլուելի կըգարձընէ: Արդէն կարճ  
ժամանակում ականատես պիտի լինիք եւ ինձ իրա-  
ւունք պիտի տաք որ այս աղնիւ ընտանեաց հետ-  
ուրիշ կերպ վարուիլ անհարին էր: Մանաւանդ  
երբ Մարկարէդը տեսնեք այնքան պիտի սիրէք,  
որ ոչ թէ միայն օժիտի մասին ակնկալութիւն  
չըւնենալս մեղագրել չըպիտի մտածէք, այլ մին-

չեւ անգամ եթէ Մարկարէզը մի խրճիթ էլ չու-  
նենար, եւ ես աղքատութիւնը պատճառ բանելով  
կնութեան առնել չքամենայի, ինձ կարելի եր  
յանդիմանէիք ուղեսիրութեանս համար:

Այսու հանդերձ Մարկարէզը, ինչպէս նախկին  
նամակաւս գրած եմ, աղքատ չէ, սակայն բարցա-  
կան հարստութեան լցով այնքան փայլուն է, որ  
նիւթականը մշուշի մեջ մնալով հազիւ մարդ կա-  
րողանում է նշանարել: Թէպէտ բախտը ինձ նապաս-  
տեց Մարկարէզի նման երազածս գաղափարատիպը  
(idéal) գտնելու, բայց արածս ընտրութեան մեջ  
սիալուած ըրլինելոս ձեր բերնիցն էլ ուղում եմ  
Հօել:

Աիրելի հայր իմ! կատարելապէս իրաւոնիք ու-  
նիք, ոսկին մեծ գեր է խաղում ներկայ գարում:  
Անցեալ գարերում էլ նցն գեղին մետաղը մեծ  
գերեր է խաղացել եւ յաջորդ գարերում էլ  
կրկին նա պիտի լինի աշխարհային բեմին ամենամեծ  
ջերասանր:

Ըմն տեսակ ցանկութիւն, համար, կիրք,  
փողի զօրութեամբ կարելի է յագեցնել, բայց եր-  
ջանկութիւն որոնել փողի առատութեան մեջ, սա  
է մահանացաներին անուզգելի սխալը: Երկրոյին  
վայելութիւններից ամենացանկալին, ինչպէս ան-  
մահ Միթաբօն ասած է, մարդուս քաջառողջ լի-  
նելն է: Կերկայ գարում որքան միթիսնատերներ  
կան, որոնք պատրաստ են զոհել իրանց միթիսները  
զանազան տկարութիւններից աղատուելու համար:  
Մինը կերածը մարսելու, միւսը աղատ շունչ առ-

նելու, քայլելու, մի ուրիշը գիշերը քուն վայելելու  
կարօտ է: Զուրկ են ողորմելիները բնութեան ամե-  
նահասարակ պիտոյցներից: Միթէ մը հայրենակից  
զրամատէր երիտասարդներին մեջ քիչ կան բար-  
տաւոր մշուաներ, որոնց վատառողջ վիճակին՝  
քարվանսարացում քրտնիք մտախող նախիչեւանցի  
հայկարալուկ բեռնակին անդամ ընսականձիր:  
Աչա սիրելի հայր իմ! բնութեան սյօպիսի ոտք-  
զեւներով գալիս ենք ձեզ մօտ ես ու Մարկարէզը,  
որուն զիսաւոր օժիտը լինելով մարմարեալ աղ-  
նուութիւն, եւ օրինակելի պարկեշտութիւն, այս  
օժիտը ըստ իս հաղարագատիկ մեծագին է քան  
բանաստեղծ «Գամառ քամիս քամիսկայի», նկարագրած  
«Պայրաբաղաբաւ» կրթուած հայ աղջկան, կեղծ  
կրթութիւնը եւ ոսկոյ շատութիւնը, որոնք նմա-  
նում են զցի զգցի փետուրներով զօրդարուած  
վանդակաբնակ թութավների անօդուտ յատկու-  
թիւնց, մինչդեռ Մարկարէզը ընտանեկան լու-  
կրթութիւն առած եւ յետոյ մայր պատրաստուելու  
համար պատուական դաստիարակութիւն տեսած  
պաշտելի մի արարած է, որոյ ուերը ինչպէս մի ու-  
ղեցցից, կենսական շաւզին ինձ առաջնորդ եց, եւ  
իբրեւ մարդ ապրելու պարտականութիւնը ճանա-  
չելու համար առաւել այդ ուերը ճշմարիտ ուսուցիչ:  
եղան քան թէ համալսարանական բարձր ուսումն:  
բազում թերթեր պէտք է մրուտեմ Մարկարէզը  
իրաւամբ նկարագրելու համար: Որքան էլ գրեմ,  
եւ վերջացընել կամենամ, կրկին մի «յետ զրու-  
թեան», աւելացընելու պէտքը պիտի զգամ:

Վասն որց համառօտելով նամակու, մնացորդը  
կըթողնում ձեզ, որպէսզի գուք ինքներնիւ ան-  
ձակա կարգաք ձեր նոր հարսի դէմքին ազնիւ ար-  
տայայտութիւնները, եւ համայն ընտանեօք ուրա-  
խանաք տեսնելով ձեր որդւցն երջանկութիւնը,  
որուն գուք եղած էք հեղինակը, ինչպէս նաեւ իր  
օրերին: Այս նահապէտի նման մեր նահապէտական  
տան մէջ շուտով կըտօնէք երջանկաբեր աղաւնց  
գալուստը: Միրելի հայր իմ! Եյժմէն լուռմ եմ  
ձեր օրհնութեանց եւ բարեմաղթութեանց քաղցր  
ձայնը: Վաղվաղակի պիտի գրկէք ձեր բազկացը  
մէջ մի նոր հարս, որ ձեզ արդէն հոգւով չափ  
սիրում է, եւ մի փեսայ որ է ձեր հնազանդ եւ  
երախտապարտ որդին:

Վիէննա ... 1877:

Արտաւազդ:



Ա իէննայի համալսարանները մօտ 60,000  
ուսանող ունին: Աշակերտների ճշմարիտ մի բանակ,  
որոնցից 12,000ը բժիշկ ուսանողներ են: Աշա-  
կերտների մեծագոյն մասը Աւստրիական կառավա-  
րութեան հպատակ Բօհէմիացի, Զէխ, Լեհաստանցի  
Աիլէզիացի եւ այլ ազգերից բազկացած են, իսկ  
փոքրագոյն մասը օտար ազգերից, որոնց մէջ կան  
Ամերիկացիներ, Անգլիացիներ, Գրանադիացիներ,  
Խուալացիներ, Ռուսներ, Սերպեր, Բուլգարներ, Բու-  
մանիացիներ եւ մինչեւ անդամ Հնդկաստանցի,

Չինաստանցիներ եւ Ճարաններ, մի մասն էլ մայ-  
րաքաղաքացիներ են:

Այս ահագին ուսանողների ովկիանոսում մի  
քանի կաթիլ չըի նման 20 ի չափ էլ հայեր կան,  
որոնք եկած են Արուսաստանից, Պոլդավիայից եւ  
Տաճկաստանից, գիտութեանց այլ եւայլ ճիւղերը  
ուսանելու:

Վիէննայի համալսարանները ընդհանրապէս  
շատ գոհ են իրանց ուսանողներից, փոխադարձ-  
բար ուսանողներն էլ իրանց պրօֆէսօրներից:

Դասախոսութիւններ վերին աստիճանի հաճելի  
են ունկնդրաց, որովհետեւ քաջաշմուտ պրօֆէսօր-  
ների գաս խօսելու հիմնալի եղանակը սիրահարեց-  
նում է ուսանողներին: Մանաւանդ բժշկականու-  
թեան գործնական դասերը, որոնք տրուում են  
կենդանի փորձերով, այսինքն նոյն իսկ 4000 հիւ-  
անդ պարունակող ընդհանուր հիւանդանոցում ի  
ներկայութեան ունկնդրաց օրական կատարուած  
բազմաթիւ եւ բազմաճիւղ պաէրասիօնների ժա-  
մանակ, այն երեւելի պրօֆէսօրները ամենաբարձր  
գասերը այնպիսի լուարճախօսութիւններով մէկում  
եւ բացատրում են, որ արհեստին տիրութիւնը նո-  
րավարժ ուսանողաց ամենեւն զգալի չէ լինում, եւ  
այն սկալից պատկերը, փոխանակ զգուանք պատ-  
ճառելու, ընդհակառակը ուսանողնն հետաքրքրու-  
թիւնը առաւել շարժում է, եւ ուսանողն էլ  
հետաքրքրութիւնը յագեցնելու համար բնակա-  
նաբար մէծ յառաջադիմութիւն է անում: Դասա-  
խոսութեանց հրապուրիչ եղանակն է, որ ամենա-

Հեռաւոր երկիրներից քաշումը բերում է բժշկականութեան նախանձախնդիր երիտասարդներին։ Առ հասարակ հարցաքննութեանց մէջ յետագէմ հանդիսացողը խիստ անշան է, որովհետեւ ամօթայն ուսանողին, որ լսած դասախոսութեանց դիւրը միունելի եղանակից օգուտ չէ քաղել։ Ուսանողաց այն սարսափելի բանակին առաջը անշաղող հարցաքննութիւն տալ եւ խայտառակուիլ։ սա մի ուսանողի համար մահ է։ Ուսանողը պատուասէր է, հետեւարար այնքան աշխատասէր որ թշլ չըստար յետագէմ ածականով յարջըրջուիլ այնքան անմիւ յառաջադէմների շարքում։

Երգարեւ վիէննայի ուսանողաց կեանքը ֆրանսիացի ուսանողաց շափ խոռվայցը չէ, որովհետեւ այս վերջինները քաղաքական կրքեր ել ունին, բայց վիէննացինները, թէ եւ շատ քիչ բացառութեամբ քաղաքական հարցերի ձգտումներ ունեցողներ կան, մեծագյուն մասը, սակայն, երեք զլիստոր սկզբունքներ ունին, առաջնը ուսումն, երկրորդը գարեջուր, եւ երրորդը մենամարտութիւն։ Զանազան համալսարանների ուսանողք կազմած են այլ եւայլ ընկերութիւններ, որոնց նպատակը ինչ լինելը իրանք էլ չըգիտին։ Խրագանչիւր ընկերութիւններ իրան յատուկ գտնով գլխարկն ունի։ Կարմիր, գեղին, կապոյտ, սպիտակ, սեւ, մանուշակաւ գոյն, վերջապէս դիպակի գործարաններում որպան գոյն կարելի է երեւակայել, այնքան տարբեր գոյների թուով ընկերութիւններ կան կազմուած։ Գլխարկները շատ փոքր են, մինչ այն աստիճան

փոքրեր կան, որ ուսանողին գլուխը տեսնողը մերկ կրկարծէ։ Կան նաև այնպիսի ուսանողական ընկերութիւններ որոնց անդամակիցները գլուխնին վացրենի հազիկների նման դուսաւոր փետուրներով կըծածկնեն եւ խրոխտարար ման կրգան փողոցներում։

Ընկերութեանց նպատակն է գարեջուր խմել։ Արանց խմած գարեջուրի քանակութիւնը այնքան ահագին է, որ վիէննան գարեջուր գործածող մէկ միլիոն թնակիչ ունենալով հանգերձ, իմէ ուսանողը այլ եւս գարեջուր չըխմեն, գարեջուր, բուրու գործարանապետները կըսնանկանան։ Շատ ուսանողներ ընկերութեանց մասակից չեն, որովհետեւ առանց պայմըելու օրական 10—15 լիգր գարեջուրը փորումը տեղառոցընելու կարողութիւն ունեցողը արժանի է անդամ ընդունուելու։ Ի հարկէ այսպան սարսափելի քանակութեամբ գարեջուր խմելով չեն կարող հանգարտ եւ զգաստ կեանք վարել։ Ընկերն բաների համար կըվիճն կըտաքանան, ապտակներ, բանցի հարուածներ կը փոխանակուին, եւ այսպանով էլ չըբաւականանալով պատուց հատուցումը մինամարտութեամբ կը վերջացընեն։

Եմնիքն էլ մենամարտական զինավարժութեան մէջ յաջողակ ես։ Հմուտ վարպետներից գատառած են որպէս զի ըստ պահանջման հարկին անձնապաշտանութիւնը ապահովընեն։

Թէ եւ խսիւ արգելեալ է մենամարտութիւնը, եւ պատիժը մեծ, բայց սոքա մի ծակ գտնելու կը յաջողին։ Բարեբախտարար մենամարտութիւնը մա-

Հուան պայմանաւ չէ, այլապէս 60,000 ուսանող ներից մի քառորդը հազիւ կենգանի կը մնար: Արանց մենակուիւը հրավառ զենքերով չէ: Ուստեր ներով կը մենամարտին, եւ նախատեալ պատուասիրութիւնը կը վերականգնի, երբ երկու հակառակորդներից մինը մի թեմեւ վերը ստանայ, բայց մի պայման կայ գլխաւոր, այն է հարուածը ճակատի, քթի, բերնի, այտերի, կղակի, վերջապէս երեսի մասերին վրայ պէտք է տրուի, բացառութիւն կազմելով միայն ականջներ եւ աչքեր, որոնք դասախոսութիւնները լսելու եւ գործնական փորձերը տեսնելու համար ամենակարեւոր զգայարակներ են: Աւսանողները շրջանաչող անծանօթները չեն կարող իրանց զարմանքը զսպել, աեմենելով սրանց գէմքին վրայի կեղեքածները, որոնք մենամարտական հարուածների հետեր են:

Չատերը այս նշաններով կը պարծենան, մի փառք կը համարեն, կարծելով թէ տեսնողները պիտի հիանան եւ պիտի ասեն, “Կ՞ոչ քաջ, արիասիրտ եւ պատուասէր երիտասարդներ են սոքա”, բայց ընդհակառակ ամենքին ծաղըելի են, նա մանաւանդ “Քիքէրէքի” զաւեշտական թերթին ըր գարիգատուրների համար անսպառելի նիւթ է շինած ուսանողական պյու տեսակ դասակարգի կեանքը: Կոիւները կը ծագին առ հասարակ սրանց սիրածաղիների պատճառաւ: Մինը կը խլէ միւսին սիրականը, կամ մինը մի ուրիշին սիրուհին կանպատուէ, իսկոյն մենամարտութիւնը կը լճուաի, եւ կը վերջանայ մի երեսի պատուելով: Այնուհետեւ

երկու հակառակորդը կը հաշտուին, միմեանց կը համբուրեն, յետոյ հաշտութիւնը տօնելու համար ոչ թէ լիդրանոց խոշը գաւաթմներ, այլ տակառներ կը լագատարկեն: Պերախութիւն, կոիւ, սէր, հարցագունութեան յաջողութիւն, վիճարանութիւն, ընկերութեան ժողով, մենամարտութիւն, ինչ կուզէ թող լինի, վերջարանութիւնը գարեցար է:

Վիճնայում մի նահապետական սովորութիւն կայ: Գիշերը ժամը 10ին տների բոլոր գոները կը փակուին: Աւ մնացողը դուռը բանալ տալու համար գոնապանին 10 քըսայցար տալու դաստապարտուած է: Աւսանողին համար այնքան ծանր է այս տուգանքը, որ 10 քըսայցար չը վճարելու համար մինչ արշալցոյ փողցներում ման կը դայ: Առաւօտուն կը դնայ սրճարան եւ յետոյ համալսարան: Կան նաև այնպիսիք որոնք ամբողջ գիշերը 10 ֆիօրին կը լատանեն 10 քըսայցար ըստալու արևատեսագիտութեամբ: Աս էլ նրանց հաշիւն է: Աւսանողները ընդհանրապէս ամուրի են, որովհետեւ ժամանակ չունին ամուսնանալու: Այնու հանդերձ քաւական ժամանակ ունին սիրուն Fräulein (օրիորդների) մօտ քծնելու: Լաւ ընդունակ են սիրաշար գերասանի պերճախօսութեանց մէջ:

Պարահանդէսներում, երեկցիցներում կը գտնուին միամիտ աղջիկներ որոնք՝ սրանց ասպետական ձեւերից եւ գեղեցիկ խօսքերից կը յափշտակուին: Բայց փորձառուները գիտեն որ մի ուսանողի սիրուը ոչ ոքին չըսպատէկանիր: Կը ահանին, սիրալ, խելքը, միտքը դասատերին եւ գարեջրի տակա-

ոին մէջն է: Ուսանողը դէմն ելած աղջկան ամուսութիւնն կառաջարկէ: Եմէ աղջիկը պարզամիտ է, կը հաւատայ երգութիւնն եւ հետեւանքը կը լինի «աճեցէք եւ բազմացարուք»: Բարեբախտաբար այս տեսակ պարզամիտ աղջիկների թիւը շատ անշան է:

Մեծագյն մասը գիտեն որ ինչ կը նշանակէ ուսանողը: Ուսանողին յեղյեղուկ բնաւորութիւնը եւ փոփոխամտութիւնը ճանաչելու համար սրտագէտ լինելու հարկաւորութիւն չըկայ: Բաւական է մի աղջիկ, ուսանողին երեսին վրայ գրոշմուած հարուածոց հետքերը համարէ, որբան վէրքի նշան կայ, այնքան աղջիկ խարած է:

Բժիշկ ուսանողները առ հասարակ առիթ ունին սիրահարական հանդամանքներից օգուտ քաղելու: Բայց ի՞նչ տեսակ օգուտ... վաղանցուկ մի հաճցը, առ ժամանակեայ մի կիրք յափեցնելու միջոց.. որուն զա՞յ կը բնայ թշուառ աղջիկը:

Ուսանողը երիտասարդ, կրակոտ, նիւթական միջոցները նուալ, ուղում է յոգնած ուղեղը որ եւ է մի բանով սմափեցնել: «Կա ժամանակ չունի մուծելու թէ ի՞նչ կը լինի այդ տեսակ սիրոց յարաբերութեանց հետեւանքը: Կա ուղում է վաստակեալ միտքը թարթափել, եւ վրօնուլ: Կրաներկայ մուծողութիւնը սովորիլ է, իսկ ապագան, հարցաբնութիւնն եւ վկայագիրը ստանալ: Ոինչ վկայագիրը ստանալը նուալ, այնպէս սրանով էլ ուսանողը չի զատար: Բժիշկ ուսանողը նիւթակը իմիլիսովայ է: Եմէ ունի կարողութիւն, մի քիչ փոլ կրտայ նորածին երեխային մօրը, եմէ չունի, մանուկը որբանոց կրգնայ, եւ այսպիսեաւ նիքը հայր կը լինի առանց որ յըս ունենայ մի օր իր զաւակը տեսնելու: Մի բժիշկ ուսանողի համար երեխայ ծնիլ!..., դա ամենաբնական եւ ամենապարզ մի բան է: Ոինչեւ

ծանրաբարյ գիրը այլ եւս թշլ ըստար թեթեւութիւններ անելու: Հետեւաբար զրօսանաց ծարաւի ուսանողը, աչքին առաջը ներկայացած զուարձառիթ գէպերի հեշտութիւնները ցանկասիրութեամբ կրգրկէ, առանց մի բոպէ խորհելու նիւթական եւ բարյական հաշիների վրայ:

Այս ողջամիտ դատողութեանց բացակայութեան պատճառաւ է, որ ուսանողը աչքերը փակած կը ըլանայ, աջ եւ աջեակ կը յարձակուի, կը սիրէ ով կուզէ թող լինի, լինի տան աղջիկ, սպասուի, խոհարարուի, ուսուցցուի, կար կարող, ծալկավաճառ, դայեակ, մանկալարձ, գերասանուի, վերջապէս կրսիրէ, կրպաշտէ, բաւական է որ սուհին լինի առանց խորութեան տարիքի եւ գեղեցկութեան:

Այս արիւնաեռ երիտասարդների անզգամութիւնները խիստ շատ անգամ ապարդիւն չեն մնար, այսինքն անմեղ երեխայներ յաշնարհ կրգան: Այն ժամանակ կատակները լուրջ մի կերպարանք կառնուն: Մանուկը գործուած յիմարութեանց իրբեւ յանցիմանիչ մի ծանր շուրջով հանդէս կրգայ: Բայց եւ այնպէս սրանով էլ ուսանողը չի զգաւատար: Բժիշկ ուսանողը նիւթակը իմիլիսովայ է: Եմէ ունի կարողութիւն, մի քիչ փոլ կրտայ նորածին երեխային մօրը, եմէ չունի, մանուկը որբանոց կրգնայ, եւ այսպիսեաւ նիքը հայր կը լինի առանց որ յըս ունենայ մի օր իր զաւակը տեսնելու: Մի բժիշկ ուսանողի համար երեխայ ծնիլ!..., դա ամենաբնական եւ ամենապարզ մի բան է: Ոինչեւ

անդամ ինքը իրան դատաւոր հանդիսանալով սա  
խորհրդածութիւնն էլ կաւելացընէ ասելով թէ  
ո՞ի՞նչ մեղք եմ գործել..., մարդ չեմ սպանել...,  
երեխայ եմ շնել!... մի քաղաքացի եմ աւելաց-  
ըրել!....:

Ո գիտէ կարելի է իրաւունք ունի ուսանողը,  
որովհետեւ տոգտորութեան սկսած ժամանակը  
հիւանդներին ամենքն էլ չէ կարող բժշկել, բնա-  
կանաբար մի քանիսին միւս աշխարհը պիտի ու-  
ղարկէ, ուստի ուսանողութեան ժամանակն էլ եթէ  
մի քանի մարդ աշխարհ բերելու պատճառ լինի,  
սրանով գոնէ հաւասարակշուութիւնը կը պահ-  
պանուի:

Ահա ուսանողական կեանքի վեր ի վերց նկա-  
րագիրը, որց մակերեւոյթից միայն պատկերը եր-  
եւում է: Ամենայն պարագայինք ուսանողական  
ճշմարիտ տիպարը, պյաբան համառօտագրելով չէ  
կարելի ներկայացնել:

Գալով հայ ուսանողների կեանքին, ինչպէս  
ասացինք նախլնթաց տողերում, սրանք կազմելով  
լայնատարած ծովու հետ անհամեմատ փոքրամաս-  
նութիւն, առանձին նկարագրելու հետաքրիր մի  
կեանք չունին: Ամենքն էլ հաւասարաբար պա-  
տռասեր, աշխատասեր, մենամարտութիւնից, կոիւ-  
ներից, վիճարանութիւններից, գինետուններից  
հեռի ապրու, եւ խաղաղ կեանք վարող երիտա-  
սարդներ են: Աերցիշեալ բաղմանեւ եւ գոյն զգոյն  
կտակներ ծածկող լընկերութեանց եւ ոչ մէկին  
անդամակից մի հայ ուսանող չըկայ.

Հայ երիտասարդը, լինի ուսանող կամ ուրիշ  
բան, ցեղական ժառանգ ութիւն է, ի՞նչ է, թեթեւ-  
ութիւնը չըսիրեր, թէ եւ բացառութիւններ կան,  
բայց անուղղելի չեն: Ըստ հանրապէս հայ երիտա-  
սարդութիւնը ծանրաբարոյ է, առանց սառնասիրտ  
լինելու, որովհետեւ թէպէտ միտիրի տակ ծած-  
կուած, բայց անշէջ եւ մշտավառ կրակ ունի սըր-  
տումը....:



Երտաւազդի համառօտ կենսագրութիւնից լն-  
թերցողք հասկացան նրան ուսանողական կեանքի  
շըմնը:

Թէ եւ վերը պատմուած այն խոռովախուժ եւ  
ալէկոծ ուսանողի կեանքը ըռւնեցաւ, բայց սիրա-  
հարական արկածները իրան շատ տանջեցին եւ  
սիրտը մաշեցին:

Եթէ բարեպատեհ գէպքը այնափիսի մի բախ-  
տաւոր ելք չունենար եւ պյապէս սնօրինէր, Ար-  
տաւազդի երիտասարդութիւնը կարճակեաց ծաղկի  
նման պիտի թառամիր...

Երտաւազդը, հօրը գրած պատասխանին մի  
քանի օր յետոյ հարցաքննութիւն տալու էր: Թէ-  
պէտ դասերը այնքան ճշգիւ ըմբռնել եւ պատրաս-  
տել էր, որ տոգտորութեան վկայագիրը համարում  
էր իրան համար մի ստոյգ սեպհականութիւն, բայց  
եւ այնպէս յուզեալ էր սիրտը: Պարզ եւ սովորա-

կան հարցաքննութիւն չէր: Օճանը եւ գործնական հարցաքննութիւն էր, որ վերջինը լինելով երկար էլ պիտի տեւէր:

Մարկարէդը յատուկ խնդրել էր որ ինքն էլ ներկայ գտնուի հարցաքննութեան: Արտաւազգը մերժել չէր կարող: Աւստի որոշեալ օրը տարաւ հետը Մարկարէդին, որուն սիրուն էլ Արտաւազգի շափ անհամեեր էր, եւ ականատես էր ուզում լինիլ հարցաքննութեան անվուել յաջողութեանը:

Արտաւազգի քննութիւնը շատ փառաւոր եւ փայլուն անցկացաւ: Պրօֆէսօրները կատարելապէս գոհ մնացին: Աւրիշ հարցաքննուելիք ուսանողներ էլ կային, որոնցից եւ ոչ մէկը յետագէմ շըյայտնուեցաւ, ամէնքն էլ վկայագիր ստանալու արժանացան, այնու հանդերձ նախանձեցան Արտաւազգին, որ ընդհանրապէս հարցուած առարկացներին սուանց վարանելու մեծ վարժութեամբ պատասխանուում էր բազմաթիւ փորձեր եւ բացատրութիւններ մէջ բերելով: Արտաւազգը պրօֆէսօրների բերանացի ջատագովութեանցը եւս արժանանալու յաջողեցաւ, երբ հարցուափորձի նիւթ լինելու համար սրահին մէջ տեղը գրուած գիտակին վրայ անդամապնական, վիրաբուժական, մարմնահատական ներքին եւ արտաքին գործողութիւնները զարմանալի ճարտարութեամբ կատարեց: Չեռքը առանց դողդողալու (որ վիրաբուժի համար ամենակարեւոր պայմաններից մինն է) արագութեամբ եւ ճշութեամբ կտրատում էր գիտակին այն մասերը զորս հրամայում էր պրօֆէսօրը:

Հարցաքննութիւնը վերջացաւ, եւ ի միասին Վրտաւազգի ուսանողական կեանքը:

Ախլցիսացի հայ երիտասարդը առաջին կարգի բժիշկի վկայագիր ստացաւ: Երբ ի նշան շնորհակալութեան մի առ մի պրօֆէսօրներին առաջը գլուխ էր խոնարհեցնում, ամէնքը իր աստիճանը շնորհարուեցին եւ ասացին թէ «գուք հմուտ մի բժիշկ եղաք, պարծանք է մեղ ձեզ նման աշակերտներ ունենալ»: Օպէրատոր պրօֆէսօրը որ պյն տարվայ անուանիներիցն մէկն էր, նա էլ աւելացըրեց «Ճշմարիտ! Հայ ուսանողները շատ ընդուհակ են, բայց ախտոս, շատ սակաւաթիւ են, վիէննայի ընդհանուր համալսարաններում հաղիւ ընդ ամէնը 20 հատ կան»:

Արտաւազգին ու Մարկարէդը համալսարանից գուրս ելան եւ խոկցն գուանը առաջը հանդիպեցան: Մանուշակեանցին որ քրտինքը ճակատից սրբելով վագելով եկել էր: Մանուշակեանցը նախ քան բարեւելը աճապարանօք հարցըրեց գերաններէն:

— Արտաւազգ ի՞նչ լուր, հարցաքննութիւնդինչ եղաք:

— Մարկարէդին շնորհիւը բժշկականութեան առաջին կարգի տոգտորի վկայագիր ստացայ, պատասխանեց Արտաւազգը:

— Կեցցես! Արտաւազգ! գուք էլ կեցցէք, օրիորդ! աղաղակց Մանուշակեանցը ձեր երկուսին էլ շնորհարուում եմ, բայց պէտք է թըջնք վկայագիրը, առնենք տոգտորութեան աստիճանդ: Այսպէս չը ու ցամաք տիպում առնել չէ կարելի:

— Արեծաւ ուրախութեամբ, սիրելիս, արի գնանք այս բողէիս մեր հիւրանոցը, ես ու դուն եւ Մարկարէդը, այն տեղ ուղածիդ շափ կըթքչնք:

— Ոչ, մեր երեքը բաւական չէ, ասաց Մաշնուշակեանցը, քեզ — ճշմարիտն ասեմ, ես կանխառ դիտէի որ դու անպատճառ առաջին կարգի վկայադիր պիտի առնես, ուստի այս առաւօտ իմ տունը երեկոյեան ընթմրիք պատրաստել տուած եմ, հրաւիրած եմ քայ մի քանի ուսանող ընկերներիցդ, այնու հետեւ հրաւիրած եմ տոգտոր Մարտիքէն, տոգտոր խոսխոռունիին, եւ հաճի կետնդիքանոս աղջին, պէտք է իմ տունը գնանք եւ այն տեղ տօնենք տոգտորութիւնդ:

— Այ.... եղբայր, ի՞նչ ես արել, ուրեմն կրկին գանկաբանութիւն, անդամաննութիւն պիտի լսենք:

— Է՛հ... վեաս չունի, երկայն մի աներ, վերջին անդամն է, դիտես որ լաւ պիտի ծիծաղնք:

— Այո, այո, շատ լաւ կըլինի, բացադանչեց Մարկարէդը, շատ շնորհակալ եմ պարսն Մանուշակեանց, սիրելի Արտաւազդ! կըգնանք այնպէս չէ. հարցըրեց Մարկարէդը այսպիսի մի քաղցր ձայնիւ որ Արտաւազդին մնախը մարեցաւ եւ մի ուրախ գէքով,

— Անտարակցս կըգնանք, սիրելի Մարկարէդ, ասաց, միթէ կարելի է Մանուշակեանցին հրաւերը ընդունիլ, միայն այսօր շատ եմ յօդնած, եւ ուղեղս լիքն է անդամահատութիւններով, անդամաղննութիւններով, կարողութիւն չունիմ վիճելու:

— Ես քու տեղդ կըվճեմ, ասաց Մանուշակեանցը, ես այնքան գինի կըխմացընեմ տոգտոր Մարտիքէն եւ տոգտոր խոռիսուունիին, որ մինը իր գանկին ուր լինելը կըկորցընէ, միւսն էլ անդամները:

Ծիծաղում էին բարձրածայն, Արտաւազդն ու Մարկարէդը Մանուշակեանցի զուարճուսութեանց: Արդէն ընկերութիւնը ըգումարուած սոքա սկսել էին խնդալու:

\* — Տեսնենք, ասաց, Արտաւազդը, այս անդամնաձի աղան ի՞նչ կըբերէ ծախելու:

Երեքն ի միասն խօսելով խնդալով գնացին տուն:

Փառաւոր մի սեղան պատրաստուած էր Մանուշակեանցի տունը տասներկու մարդու համար: Ազնիւ երիտասարդը ի պատի հայրենակից տոգտորին եւ Մարկարէդին ոչինչ չէր խնայած: Հունդարիացի, Տոքայէրի, Ֆէղաօի, Բայն վայնի ընտիր գինւոյ օրուակները սեղանի վրայ շարուած սպասում էին հիւրերին: Մարկարէդը՝ ծաղիկներին շափազնեցին սէր ունենալը գիտէր Մանուշակեանցը: Ամենագեղցիկ ծաղկանց փունջերից եւ ոչ մինը չէր մոռացել եւ ամենով սեղանը զարդարել տուած էր երփներանդ ծաղկամաններով:

Ժամը ճիշտ 9 ին եկած էին բոլոր հրաւիրեալք: Կային նաև մի քանի գերմանացի աղջիկներ զորոնք Մանուշակեանցը հրաւիրել էր Մարկարէդը առանց ընկերու հիների ըլթողնելու համար: Շատ հիանալի անցկացաւ երեկոյիցը: Բոլոր հանդիսականք վկայե-

ցին որ իրանց կեանքումը այսպէս զուարձալի երեկոյ չեին անցկացընել, մանաւանդ հաճի զեւսնդիանոս աղան կոկորդներ պատռուելու չափ ամէնքին ծիծաւ գեցնում՝ էր իր հայերէն եւ գերմաներէնով:

Դաշնամյու ածող մի օրիորդի օժանդակութեամբ փոփոխակի հայերէն եւ գերմաներէն երգեր երգեցին, պարեցին, ցատկեցին, բան չըմաց ամենքն էլ արին, անեւիք բան չըմողուցին: Տարացած գլուխները եթէ մի բան չըգտնէին անելու, իսկցին մինը մի հենաց, էր առաջարկում, եւ ահա ամենքը ոտքի վրայ կանգնելով բաժակները լիքը աղաղակում էին թէ ում կենացը պէտք էր իմեն:

Արդէն կենաց մենաց չեր մնացել: Խւրապան չիւրին կենացը տամանական անդամ խմնած էր, իսկ Արտաւալդի եւ Մարկարէդի հենաց բաժակները բացառութեամբ անհաջիւ էին:

Արտաւալդը չափազնց գոհ էր, որովհետեւ ոչ տոգտոր գանկարան Մարտոքէն, ոչ էլ անդամագէտ տոգտոր խոռխոռունին ժամանակ ունեին ուսումնական վիճաբանութիւններ անելու:

Մանուշակեանցը խոռումնքը կատարել էր, այսինքըն ամենապինդ գինիները այնքան առատօրէն եւ յաճախ տոգտորներին առաջարկել եւ իմացը ըստել էր որ երկուքն էլ մոռացել էին իրանց մասնագիտութիւնը:

Տոգտոր Մարտոքէն անդզիւրէն մի երգ էր երգում: Տոգտոր խոռխոռունին ամզնիւ ընկեր մեռանում եմ, երգում էր, հաճի աղան էլ Սէշաստապու էօնիւնտէ տուրան կէմիլեր, մըմնչում

էր, իսկ օրիորդներն էլ իրանց գերմանական երգերը ընդհատելով ծիծաղից թուլանում էին պատարօրինակ շարիվարիին զուարձութիւնիցը յափշտակուած:

Մանուշակեանցը ոչ ոքին մի բոպէ հանգիստ չէր թողնում: Շարունակ օրիորդք, պարանայք, մի ծուլանաք, մի թուլանաք, խմեցէք ասելով ովլիսըց, ովլ չըխըմեց, ամենքին բաժակները զարմանալի սրատեսութեամբ լրտեսում էր առանց բնիքը այնքան խմած գինիներից հարթենալու:

Այս գիշերը անցել էր: Հիւրերին թմբրութիւնը կալդրութելու համար Մանուշակեանցը շամպանիայի գինին բերել տուաւ: Այս նեգդարը ըմպելեաց վերջաբանութիւնն էր: Վոաջարկուելիք հենաց, բաժակներին տուածնորդով բարեմաղթութեամբ սովորաբար տաւաել խմամբ կըտարուին շամպանիայի ժամանակ:

Մանուշակեանցը, այն ազնիւ հիւրընկալ երիտասարդը, առաջին շամպանիայի բաժակներ երկու ամուսինների կենացը առաջարկեց: Ի պատիւ փեսային եւ հարմեցու օրիորդին բաժակներ ի ձեռնին ամենքը վեր կացան եւ յարդական մի լուսութեամբ սպասում էին Մանուշակեանցին որ նոյնպէս բաժակը բարձր բռնած գերմաներէն արտասանեց հետեւեալ կարճ եւ գողտրիկ տաենախօսութիւնը:

“Սիրելի հանգիստականք!..”

Այս բաժակը առաջարկում եմ անդին կենացը օրիորդ Մարկարէդին որ մի քանի օրիին Արտաւալդը պիտի կոչուի, եւ նորա արժանի կողակից

իմ հայրիկանից Արտաւազդին։ Արտաւազդին ու  
Մարկարէդը մի զցդ երջանիկներ են, սոցա վիճակը  
բարի նախանձ կը յլացնէ այն ամեն զգայուն սըր-  
տերում, որոնք լաւ ըմբոնողներ են երջանկութեան  
իսկապէս ի՞նչ բանի մեջ գոյութիւն ունենալը։  
Սոքա միմեանց աղնիւ բնաւորութեանը վրայ սիրա-  
շարուած են։

Մէկզմէկ այնքան անկեղծ սիրով սիրում են,  
որ իւրաքանչիւրը ապագայում միւսին երջանիկ  
անելու համար կարծես մրցիլ ուզում է։

Արանց ամուսնութիւնը օրինակելի եւ առ արինաւ-  
զարդ մի միութիւն է։ Սոքա միայն այր եւ կին չը-  
պիսի լինին, ինչպէս առ հասարակ լոկ ծիսակատա-  
րութեան գոյներով միայն կրկատարուին այս տեսակ  
ուրիշ շատ միութիւններ։ Արանք միմեանց համար  
առ ատածենութեամբ կեանք զոհելու պատրաստ  
երկու գիւցազի բարեկամներ են։ Երկուսին սիրտն ու-  
հոգին մի տեղում են ամիսութուած, հետեւ արար  
մշտամեւ եւ անխախտ կրմնայ հաստատուն հրման  
վրայ դրուած եւ ապահովուած երջանկութիւնը։  
Այս ամսանձելի զցդը այնպիսի մի բարեմասնութիւն  
ունի, որուն մեջ ստութիւն, հաշիւ, ձեւ, կեղծաւու-  
րութիւն ոչինչ չըկայ։ Դատարկենք ուրեմն մինչ  
վերջին կաթիլը մեր բաժակները օրիորդ Մարկարէ-  
դի եւ առդտոր Արտաւազդի թանկագին կինացը,  
շնորհաւորենք մերձակայ միութիւնը եւ բարեմալ-  
թենք աղնիւ ցանկութեանց իրագործութիւնը։

Բաժակները միմեանց զարնուեցան «կեցցէ օրի-  
որդ Մարկարէդ, կեցցէ Արտաւազդ», աղաղակները

ունեակը թնդացուցին եւ շամպանիայի բաժակ-  
ները մինչ վերջին կաթիլը ծծեցին։

Համբ աղան էլ բղաւում էր «Կեցցէ Մարկա-  
րէդ, կեցցէ Արտաւազդ, գուն ալ ապրիս Մանու-  
շակ, ասում էր, բերնեդ պալ խայման կը վագէր-  
կոր, ափերիմ, լախըրտըներդ բիւթիւն չըհասկրցայ  
ամա, չելպէթտէ արտօր բան կրզարցէր կոր ա-  
Յետայ Մարկարէդը առաջարկեց Մանուշակեանցի  
կինացը, մի քանի քաղցր խօսք արտասանեց հիւ-  
րընկալութիւնը եւ բարեմալթութիւնները շնոր-  
հակալութեամբ ընդունելով եւ գովելով հիւրա-  
սէր երիբասարդին սրտի աղնուութիւնը։

Արտաւազդը պատրաստուել էր մի կինաց առա-  
ջարկելու, բայց Մանուշակեանցը ժամանակ չըմո-  
ղուց, առաջարկեց տոդտոր Մելիք-Մելիսոսեանցի  
կինացը։ Յետայ առաջարկեց տոդտոր խոռ խոռունիի,  
յետայ համբ աղցին, յետայ հրաւիրեալ օրիորդաց  
եւ ուսանողաց կինացը, այնպէս որ կինացների յա-  
ճամախ կրկնութեամց պատճառաւ մի ժամանայ մեջ  
12 հատ շամպանիայից երկու շիշ միայն մնացել  
էին սեղանի վրայ։

Արտաւազդը Մանուշակեանցին նշանացի հաս-  
կացուց, բաժակները կրկնի լցուեցան։ Այս անդամ՝  
Արտաւազդին կարգն էր «կինաց», առաջարկելու։

Այսպէս սկսեց Արտաւազդը նյոնպէս Մանու-  
շակեանցի նման գերմաններէն բարբառու։

«Արելի բարեկամք!»

Շատ երջանիկ եմ ես այսօր։ Երջանիկ են այն  
ամենքը որոնց երազները չափաւոր են, որովհետեւ

Համեստ երազները մի որ կիրագործուին: Իմ երազը  
էլ իրականացաւ: Գտայ երջանկութեանս առարկան:  
Աիրեցի Մարկարէդին: Ուրս առաւել եւս ինձ հա-  
մար արժէք ունեցաւ երբ Մարկարէդն էլ հաճե-  
ցաւ զայն բաժանելու:

Բնական հաղուագիւտ ձիրքեր ստացած չըլինե-  
լով եթէ ես ինքո գիտեմ իմ ընդունակութեանս.  
աստիճանը, ձեզ հաւատացընում եմ որ առանց  
Մարկարէդի սիրցն ինձ անկարելի էր անել ինչ որ  
արի ուսմանս վերաբերմամբ: Մարկարէդի սէրն էր  
որ ինձ ներշնչեց մարդկութեան պարտականու-  
թիւնները կատարելապէս ճանաչելու, այն ինչ  
առանց Մարկարէդի թերեւս կիսով չափ անգամ  
ճանաչելու առիթ չըպիտի ունենայի եւ պիտի լի-  
նէի մի միայն անձս մոտածող մի մարդ:

Յատկապէս շնորհակալ եմ զ. Մանուշակեան-  
ցից, որ իր բարի նորհուրդներով եւ աղնիւ օժան-  
գակութիւններով զգալապէս քաջալերեց ինձ, երբ  
գլխիս տեղացած անախորժ զժուարութեանց  
տպաւորութեան ներքեւ յուսահատ զրութեան  
մէջ գտնուում էի: Վհա այս բաժակը սրտաբու զիս  
երախտագիտութեամբ կառաջարկեմ զ. Մանու-  
շակեանցի մեծագին կենացը ի բոլոր սրտէ մաղթե-  
լով որ այս բուպէիս իմ զգացած երջանկութեանս  
չափով ինքն էլ երջանիկ լինի, եւ վայելէ այնախոսի  
մի կենաչից լինկերուչի ինչպէս իմ Մարկարէդը,  
նոյնպէս կրցանկամ որ բոլոր ներկայը ինձ նման  
բախտաւոր լինին, ուրեմն, խմենք իմ պատուական  
բարեկամին կենացը»:

Ներկայը նախ քան բաժակները միմեանց ընդ-  
հարկանելը, «կեցցէ զ. Մանուշակեանց», գոռացին,  
բայց բաժակները զատարկելու միջոցին նկատեցին  
որ հաճի աղան բացակայ էր:

Քախտաւոր ամուսնութեան առթիւ Աբտաւաղ-  
դի խօսած ճառին վերջաբանութեան ժամանակ  
հաճի աղան բարձրաձայն «ամէն», պոռացել էր, յե-  
տոյ ինքը իր աղաղակած «ամէն», մաղթ անկից մաս  
չունենալը յիշելով սիրաը վշտացել եւ անցկացած  
երիտասարդութեան վրայ ողբում էր խեղջ մարզը:  
Առջի բերան կարծեցին որ հաճի աղան շատ խմեց  
շիւանդացաւ: Ամենքը վշտակից լինելով հարցըրին  
թէ, «ի՞նչ կայ հաճի աղա, ինչ ունիս ո՞ր տեղդ է  
ցաւում, հարցընում էր Մանուշակեանցը»:

— «Հիշ մէկ տեղով չոցաւիր կոր ախտաբ, ասաց  
հաճի աղան, եւ կամենալով գերմաներէն մի բան էլ  
ասել, «ախ! իչ բին ունկուկուլիքլիք» ասում էր,  
յետոյ հայերէնը շարունակելով արթըն էնթիյար  
էմ, կարդուելու ումուտ չունիմ տէ, նայեցայ քի  
ամենքդ ալ կէնձ էր, սիրտս պոտտկաց, կուլամ կոր»:

Մանուշակեանցը խկոյն թարգ մանեց հաճի  
աղացին խօսքերը ոչ միայն գերմանացիներին այլ  
հայերին էլ հասկացըրեց: Ամենքը անսաեղի զաման  
հաճի աղացին յուսահատութիւնը, մանաւանդ Մա-  
նուշակեանցը միսիթ արեց եւ համոզեց որ տակաւին  
այնպան ծեր չէ, իրան յարմար մի սիրուն աղջիկ կամ  
փողատէր մի այրի կին ինքը գտնելու կրխոստանաց:

Հաճի աղան շատ ուրախացաւ, լայը կտրեց,  
ոկսաւ ծիծաղիլ: Խակոյն շամկանիսյի բաժակները

վերստին լցուեցան եւ խմեցին հաճի աղջյին եւ իրան առնելիք այրի կնոջ կենացը:

Հաճի աղջյին մինչ 60 տարեկան ամուրի մնաւ լուն պատճառը այն էր որ 20 տարիից ի վեր Այեն Կայում հարուստ Փաթրիգանտի աղջիկ փնտռելով փնտռելով ծերացել էր:

Հաճի աղջյին վաղանցուկ տրտմութեանը պառածուաւ մի պահ ընդհատուած ընկերական խրախութիւնը վերականգնեցաւ տոգտոր Մարուքէին մի հենաց, առաջարկելովը:

— Ես նուիրում եմ այս բաժակը — ասաց տոգտորը իր սովորական հայերէնովը — եսկաւ խայ գանկերին կենացը...:

— Հոս տեղ հայ բանքէրներ կա՞ն — հարցւ ըրեց հաճի աղան զարմանալով եւ տոգտորին խօսքը կտրելով:

— Բանքէր չէ ասում, հաճի աղա, գանկեր է ասում — պատասխանեց Մանուշակեանցը: Իսկ տոգտորը ատենախօսութիւնը ընդհատուելուն վրայ նեղանալով:

— Ի՞նչ զառմանալի առառած է, անպատճառ գուան գանկը ես կըցանկայի ծախու առնել ուսումնասիրելու համար:

— Աֆ կընես միւսիւ տոգտոր իմին գանկըս պալ խապախի չէ, ասաց հաճի աղան բարկանալով, բայց տոգտոր Մարուքէն ու շագրութիւն չըդարձը նելով ատենախօսութիւնը շարունակեց:

— Ուռեմն ես կառաջառկեմ այս բաժակը այն գանկերին, ոռ... ոռ... սատանան տանի գանկեռը...

Քովոս ովին միտքը ըստիոթեցը եց այդ մաս զր... մաս ացայ ոռ զանկեռի... խամաս ոռ պիսիր անիէռ պիտի ասէի...:

— Պարոն տոգտոր, մեր գանկերին կենացը խմենք ասաց Մանուշակեանցը եւ առ անց սպասելու որ տոգտորը կորուսած զանկերը գտնէ, բաժակը դատարկեց, միւսներն էլ իրան օրինակին շետեւեցան, եւ սպասիսեաւ վերջոց ցաւ տոգտոր Մարուքէի ձառը:

Տոգտոր Մարուքէն շամեզանիայից արգէն տաքացել եւ արիւնը զլինին բարձրացել էր, ձառին անյաշողութիւնից էլ զօցբանալով երեսը խաշած խեցգետնին նման բոլորովին կարմրեցաւ: Տոգտոր խոռիսուռնին յարմար առիմից օգուտ քաղլելով մի բաժակ առ աջարկեց իր նախագահութեամբը կաղմանելիք հայ անդամանդնական ընկերութեան կենացը: Տոգտոր Մարուքէն չուզեցաւ իսմել այնպիսի մի ասու մնական կենաց բաժակ, որուն մէջ գանկաբանութիւն չըկար: Գլուխները տաքացած լինելով տհաճյ վիճաբանութեան տեղի չըտալու համար իսկըն Մանուշակեանցը միշտանեց եւ բաժակները գատարկուեցան մի անդամա — գանկաբանական ընկերութեան կենացը:

Այսպէս Մանուշակեանցի մասց արթնութեամբը գիտնական ձիւզի կենաց բաժակը անուշտեղը կապուեցաւ:

Վերջին անգամ Մանուշակեանցը հանկերձ ընդանեօք Տիկին Հովհաննի եւ նմանապէս համայն ընդանեօք Երտաւազդի հօրը, Տէր Պանկիսանոսի

կենացը մի բաժակ նուիրեց, զոր հոռոս անելով  
ողջունեցին, վերջին գինին ընկեցին եւ ամենքը իր-  
անց երեկոյից գոչ զուարթ հրաժեշտի ողջըն եւ  
շնորհակալութիւն տալով Պանուշակեանցին հետա-  
ցան գնացին իւրաքանչիւրը նցին երեկոյից զուար-  
ձալի մի յիշատակ հետք տանելով:



Արտաւազդը հարցաբնութեան օրը ստացած  
վկայագրին աւետիսը հեռագրած էր Վիւրցբուրկ  
Տիկին Հովմանին եւ Պոսկվա տէր հօրը: Զգանցին  
հեռագրին աւելացրած էր օրնորսն սպասում է Պոս-  
կվա գնալու համար: Տէր հօրը ուղարկած հեռա-  
գրին մէջն էլ Պոսկվա զալու համար ճանապարհ  
ընկած օրը ուրիշ մի հեռագրով լուր տալու խոս-  
տացել էր:

Արտաւազդը ուրիշ զործ չունէր: Պիայն իրան  
համար վիրաբուժական, մանկաբարձական գործիք-  
ներ, Պարկարէզի համար մանր մանր, եւ տան հա-  
մար էլ լնեայ տալու զանազան իրեղէններ առնե-  
լու էր: Վի օրվայ մէջ Պանուշակեանցի ընկերակ-  
ցութեամբը բոլորը վերջացրեց:

Հետեւեալ առաւօտուն Տիկին Հովմանին էլ  
եկաւ Վիւնան, հետն առած լննան եւ Տերէզը:

Արտաւազդը, Պարկարէզը եւ անբաժանելի  
Պանուշակեանցը կայարանը գնացել էին զիմառո-  
բելու:

Արքան մեծ էր Տիկին Հովմանի եւ աղջիկներին  
աւրախութիւնը... Պարկարէզը առողջ, Արտաւազդը  
նմանապէս, հարցաբնութիւնը փայլուն, Տիկին  
Հովմանի համար սրանից աւելի բախտաւոր լինել  
աւելորդ էր, երանի թէ մնաց սծ երկու աղջիկներն  
էլ Պարկարէզի կէսին չափ բախտաւոր լինելին:

Պարկարէզի ծծմցրը Տիկին Շըգարց, որ 50  
տարեկան պատուական մի կին էր, Տիկին Հովմանը  
հետը բերած էր Վիւնան, որպէս զի ննքը Պոսկվա  
մէկնելուց յետոյ աղջիկները Վիւրցբուրկ վերա-  
դարձրել:

Պանուշակեանցը յանձն առաւ օրիորդներին  
այցելել տալու քաղաքին նշանաւոր եւ հետաքրք-  
րութեան արժանի յիշատակները, որովհետեւ Տի-  
կին Հովմանը նցին օրը հանգստանալով հետեւեալ  
օրը առաւօտուն Արտաւազդի եւ Պարկարէզի հետ  
անվըւալ մէկնելու էր Պոսկվա, տիկին Շըգարցի եւ  
Պանուշակեանցի ինամնցը յանձնելով աղջիկները,  
որոնք իրանց մօրը աղաչել եւ թցլառութիւն  
առել էին մի շարաթ Վիւնան մնալով յետոյ տուն  
վերադարձրու:

Ամառ օւան եղանակ էր յուլիս ամիս: Գեղեցիկ  
մի պարտիզում՝ երեկոյեան ընթրիք էին անում  
ամենքն ի միասին, այսինքն Տիկին Հովմանը հան-  
գերձ աղջիկներով եւ Պանուշակեանցը: Արտա-  
ւազդը պատմաւմ էր Պարկարէզի հետ Վիւնանցում  
վարած կեանքը, իր ուսումնական պատահմանը-  
ները, հարցաբնութիւնը եւ այլն: Պանուշակեանցը  
պատմաւմ էր ի պատիւ Արտաւազդի բժշկական

վկայագրին, մի օր առաջ իր տունը՝ տեղի ունեցած երեկոյթին ցւծալից եւ խնդագին ժամերը, հրամիւրոց ատենիսուութիւնները, ծիծաղները, կեցցեները. Հաճի աղջին պատկերը, բոլորը պյնապիսի կենդանի նկատագրութեամբ պատմում էր օր ամենքը քրիչներ արձակելով ծիծաղում էին, մասաւանդ Ըննան եւ Տերէզը:

— Ափսոս, մայրիկ, մի օր առաջ գալու լինէինք մենք էլ ներկայ կըզ անուէինք, ասում էին:

— Ես կըխսուանամ, օրիորդներ, ձեզ ծանօթացընելու մեր հայրենակից տոգտորներին եւ Հաճի աղջին, ասաց Վանուշակեանցը, եթէ կամնաք պյուսպէիս մարդ ու զարկեմ ամենքին բերել տամ:

Վանուշակեանցին առ աջարկութիւնը սիրով պիտի ընդունէին, բայց Տիկին Հովմանը ճանապարհից եկած եւ առաւօտուն կրկին ճանապարհորդելու ստիպուած լինելով գիշերը Հանդիստ անելու պէտք ունէր: Եղանակն էլ անկոտ, անձրեւ գալու տրամադիր էր: Վանուշակեանցը Հետեւեալ առաօտուան Համար ցանութիւնը սրբամաղթելով Հեռացաւ, Տիկին Հովմանի ընտանիքն էլ զնացին այն Հիւրանոցը ուր բնակուում էր Վրտաւ աղջը:



Վառաւօտուն չորս կանայք, Տիկին Հովմանը, ծմացը սիկին Ծըլվարը, Աննան եւ Տերէզը Վարկարէդի ճանապարհորդութեան սնտուկները տեղաւոր-

ցընելու գործով էին պարապուած: Վանուշակեանցին էլ Վրտաւազզին էր օգնում բժշկական զրքերը, գործիքները արկղերի մեջ զետեղելու համար:

Վարկարէդը շուարած էր թէ ի՞նչ անելու էր իր ծաղկամանների հետ: Ինքը սաստիկ ծաղկամէր էր, վիէննա եկած օրից ի վեր, Համարեա ամեն օր մի տեսակ ծաղկի էր առած: Վրտաւազզի հետ մանգալու գնացած ժամանակը վերադարձն ամեն անգամ ձեռքը պարապ չէր գտնար, անպատճառ մի սիրուն ծաղկաման, մի փունջ, մի սուս, կամ ծաղկի մի տունկ հետը կունենար: Այս անգամ մայրը եւ քըորենն էլ գիւրցըուրկից փունջներ բերած էին, չէր կարողանում սրանց ամենքին հետը տանիլ: Թաղնուլ, բաժանուիլ էլ չէր ուզում:

Մայիս ամնոցին մարդարիտ ծաղիկների գարնանցին անենման եղանակին ծնած էր Վարկարէդը եւ անունն էլ Վարկարէդով միրտել էին: Վատողաշմանկութիւնից ի վեր բոլոր կեանքումը սիրեց ծաղիկները Վարկարէդը: Խրաքանչիւր ծաղիկին հետ ինքնն էլ կարծես ի միասին կրեացուէր կը փայլէր, կը զուարթանար: Եթէ ծաղիկը թառամիւր սիրալ կը վշտանար: Միով բանիւ ծաղիկների հետ զուգընթաց կապրէր մերթ ժպտալով, մերթ տիրելով:

‘Օաղիկը՝ բնութեան սիրահար բանաստեղծին գլխաւոր զբանագլուխն է: Վահկանացուների սըրտերին, մեծ սփոփանք եւ միկոթարանք կը հայթացն ծաղկունք: Տաղանդ աւոր մարդկանց Հանճարը ծաղկեփունջներով կը վարձատրեն:

Սեծ մարդոց շիրիմների պատուաւոր զարդերն  
են ծաղիկները: Կմանապէս յաւիտև նական աշխարհը  
փոխագրուող լնդ հանուը մահկանացուների գագաղը  
ների վրայ ծաղիկները անարական են: Իմէ Մարդէն  
քրանսիացի երեւելի գրագէտ բանաստեղծը հետ  
տեւեալ տողերը նուիրած է ի պատիւ ծաղիկներին:

Ալտեղծագործութեանց մէջ ծաղկունք, նըռ-  
բութեան, գրգանաց, աղնուագեղ չնորհաց, վա-  
յելութեան գլուխ գործոցն եւ բնութեան ակա-  
նակապ զարդերն են: Զիք այնքան զմայլելի մի բան,  
որքան ծաղկանց գալարագեղ առէջը: Սոքա շնոր-  
հաղարդ անօմներ են, ուր Աստուածութիւնը ի  
ներքս փակած ունի մեղքը, այն երկնացին հունձքը  
զոր չէ կարող քալել մարդկային համայն զօրու-  
թիւնը, մինչեւ տկար եւ անզօր մի միջատ ոսկե-  
զօծ գաւաթներով կլնուիրէ մարդկութեան: Ծաղ-  
կունք, այն շաղանցը երիմներանդ կերպաներով  
դդ եստաւորեալ օգային յաւերժահարսունք որպիսի  
քաղցր եւ ախորժալից հաճցըներ կըներշնչեն:  
Խմաստունք ծաղիկներով իրանց զլուխները կրասա-  
կեն: Վեղանի կցսեր իրանց խարտեաշ վարսերը  
ծաղիկներով կրարդարեն, նաեւ մեծամեծք իրանց  
հանդիսաւոր խրախութեանց մէջ առատապէս կը-  
վասնեն: Բայց բնութիւնը, որուն առաջը հարուստն  
ու աղքատը հաւասար են, գրած ունի հանդէպ  
աղքատիկ խուղին մի եւ նոյն ծաղիկները, որոնք  
թագուհիներին ճակատները կըծածկեն: //



Արտաւազդի երազը իրազործուեցաւ:

Այժմ ունի հրեշտակի նման սիրուն երեխայ-  
ներ որոնք սիրում են, զգուում են, պաշ են ա-  
նում իրանց սիրելի հօրը պեսիւրը եւ մօրուսը:

Թէպէտ Արամեան եւ գերմանական ցեղերի  
պատուաստութեան պատուղներ են Արտաւազդի  
երեխայները, բայց զ անկարան տող տոր Վարուքէն  
եմէ տեսնէ, առանց կասկածելու պիտի առէ թէ  
մանկանց գ անկերը անարատ հայու զ անկեր են:

Արջանկութիւնը թագաւորում է Արտաւազդի  
տան մէջ: Առանողը այժմ կատարեալ բժիշկ է:  
Վարկարէզը օրինակելի մի մայր է, որ մաքուր հայ-  
երէն է խօսում երեխայների հետ:

Վարկարէզի ծաղկասիրութիւնը տանը սինեակ-  
ներին ճշմարիտ մի բուրաստանի կերպարանքն է  
տուած: Զեկայ մի պատուհան, մի սեղան, մի անկիւն  
որ տեղ Վարկարէզի խնամօքը վայելուչ եւ պաւ-  
շաճաւոր շափակցութեամբ գրուած չըլինին շքե-  
զաղարդ ծաղկունք որոնց բոլորտիքը սիրուն թի-  
թեանիկների նման թռչուում են Արտաւազդի  
երեխայները:

Վարկարէզի նիւթական կարողութիւնը ի  
նպաստ սցն վայելութեանց առիթ չունեցաւ մի  
գեր խաղաղու: Այսքան բազմապատզ երջանկու-  
թեանց փոքրագցն մասն անգամ չըկարողացաւ  
կազմէլ, որովհեան բարյական զարդացման զու-  
գընթաց անշահանդիր սէրի եղաւ երջանկութեան  
ճշմարիտ ուղեցցցըը:

Վեր նորափթիթք հայ հոգեբան — մանկաւ  
վարժներին կը պատկանի սցովիսի պարտաճանաչ  
հայրեր եւ մայրեր պատրաստելու պաշտօնը: Աւո-  
տի օրիորդներ! երիտասարդներ! սիրեցէք զմիմլեանս  
առ անց նիւթավաշտութեան, ամուսնացէք առանց  
ունայնասիրութեան, պատրաստեցէք հանուկ-  
ներ որոնք մել մանկալսրդների ձեռքում՝ զրամա-  
գլուխ եւ զործիք պիտի զառնան:

Սիրելի ընթերցող, աեսար Արտաւ ազգը, աե-  
սար Արքար էգը, Ճշմարիտ է, սոցա սէրը ամուս-  
նութեան զեղարուեստական ճիւղն է, բայց դու մի  
սպասեր որ նմաննօրին ակ մի զէպք ներկայանաց եւ  
պյնպէս ամուսնանաս, ապա թէ ոչ զու էլ յառա-  
ջաբանիս մէջ յիշատակուած երիտասարդին նման  
ցկեանս ամուսրի մնալու կըդ ատապարտուիս:

ՀՀ Ազգային գրադարան



NL0249833

